



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

36  
37  
38

4136  
4137  
4138

329  
—  
24

9  
—  
24



329

h-2422

N° 231

Երևան

N° 231

ԴԻՄԱԿԱԻՈՐՆԵՐ

331



2001

Յ. Կ. ՋԱՆԿ

ՅԵԳԻՊՏ



1898

1898

ԱԽԵ. 100 257

=) B (=

1820011

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քանի մը տարիներ առաջ երբ յեղափոխական մը տեսնէի, կ'ուզէի ամբողջ սիրտս իրեն նուիրել, անկեղծ և անձնուէր անձ մը նկատելով զայն: Իսկ այժմ որքան յեղափոխականներու հանդիպիմ առաջին մտածմունքս կըլլայ. «Արդե՞՞օք խաբեբայ, կեղծ, պնակալէզ անձ մը չէ. . .»: Ուրկէ՞՞ ծագում առաւ այս փոփոխամտութիւնս. . . բոլոր պատճառները հոս թուելը շատ երկար կը լինի, մենք կը յիշենք միայն մէկը: Գարշելի թիւրք բռնակալութիւնը, հազար անգամ գերազանցող կարգ մը. . . արարուածներ՝ ա՛յնքան հոգեմաշ ըրին, ա՛յնքան տրորեցին հայը, որ այսօր ամենասուրբ, ամենանուիրական ասպարէզը լեցուած է ամեն կարգի աղտոտ անձերով, որոնք ստորնութեան ու խորամանկութեան արդէն վարժ, հայկական կեանքի պղտոր ջրերուն հանդիպելով սկըսան ձուկ որսալ. . . :

Անտարակոյս, պէտք է ջանալ մաքրել յեղափոխական սուրբ ասպարէզը այդպիսի փճացած և արատաւորուած անձերէ: Արդարեւ գիտենք, խիստ ծանր և դժուարին գործ է այդ, բայց որովհետև ազգային գերազոյն շահերու պաշտպանութեան միակ ճանապարհն է այդ, պէտք է ամեն հայ՝ ամեն աղջիւ յեղափոխական՝ աշխատի մեր ազգային փրկութեան ձգտող բանակը մաքրել այդ մրոտ հրէշներէն:


Շատերը՝ այդ մաքուր ասպարէզն իջնելով իբր լոկ գերասաններ, զմայլելի ճարպիկութեամբ կը խաղան իրենց ազգակործան դերը, ծածկելով ի ներքուստ սնուցած հրէշային վատութիւնը. տանջուող մարտիրոսի դիմակը կը գնեն իրենց երեսը ու իբրև ազգասէր և անձնազոհ ոճի՛ իսկական յեղափոխականի հետ ձեռք ձեռքի տուած կը նետուին ասպարէզ. . . Բայց կ'անցնին օրեր ու ամիսներ և այդ աղտոտներու կեղծ իքն ու շաղակրատութիւնները կը պարզուին. և միևնոյն ժամանակ դիմակներն վար կ'իյնայ յանկարծ:

Անկեղծ Հայու մը պարտականութիւններէն մէկն ալ այդ

1857  
1857



36854-66



ԱԽԵ № 1275

հրէջներու գիմակները աճապարանօք պատուելն է, որ ճշմարիտ յեղափոխական անբիծ մարմինը ատոնց քաղցկիզով չի վարակուի:

Մենք կը յուսանք թէ այս փոքրիկ տետրակով նպաստած կը լինինք Հայ ժողովրդի աչքերը բացուելու մասին, և կը կարծենք թէ՛ ասով քիչ մը լոյս սփռած պիտի ըլլանք քանի մը անձնաւորութեանց մութ ներկայի ու անցեալի վրայ: Ահա այդ կեղտոտ անձերն են. որ այսօր խոչնդոտ հանդիսացած են մեր յեղափոխական սուրբ գործին կանոնաւոր զարգացման և մեր ազգային ոյժերու «միացեալ» գործակցութեան:

«Միութեան խնդիր»ը մեր ժողովուրդի գերագոյն շահն ու բաղձանքն է. ատոր համար ներկայ տետրակիս հրատարակութիւնը անհրաժեշտ համարելով ի լոյս կընծայեմ, որը մաքուր ու անկեղծ յեղափոխականներու և ազնիւ ազգայնոց կը թողում գատել եւ ըստ այնմ վարուիլ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ



ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ  
ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրելի Հայրենակիցներ:

Տխուր է. շատ տխուր ձեզի պատմելիքներս. բայց որքան տխուր ըլլայ լսելն յանցանք մ'է: Ժամ առաջ ըսենք, ժամ առաջ բանանք մեր վէրքերը որ չփոխի մեր ամբողջ մարմինը: Հեռու մեզմէ ետական ու կուսակցական նեղ հաշիւները, մեր միակ առաջնորդն է ժողովուրդի շահը:

Անկեղծ ու ազնիւ սրտե՛ր կուգամ ձեզի միայն տեսածս ու ըսածս պատմել, ներկայացնելով ձեզ «Հայ-յեղափոխական կեդրոնն ու անոր շրջապատ անձերը» կոչուող խմբակի մը լիտի անբարոյականութիւնն ու խոհականութիւնը: Կարդացէ՛ք, և տեսէ՛ք. իմ ձայնս մաքուր կը հնչէ, քանզի անկեղծ սրտե՛մ կը բղխի այն: Տեսածիս ու ըսածիս վրայ մազ մը անգամ չեմ աւելցուններ. ըսածներուս ամէնն ալ փաստերով ու վկաներով կը հաստատեմ, իսկ մութ ու երկդիմի մնացած կէտերու համար միշտ պատրաստ եմ նամակներով կամ բերանացի պատասխաններ տալ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վեց ու կէս տարուան բանտարկութենէս վերջ, երբ 1897 Յունուար 1/13ին Կիպրոս հասայ, իսկոյն շրջապատուեցայ Հնչակեան կարգ մը ընկերներէ. որոնցմէ լսեցի Նազարբէկեանի և իր կնոջ տապալումը, նոր վարչութեան մը ընտրութիւնը, որու մէջ կը գտնուէի եղբր Արփիարն ալ: Այդ բոլոր ընկերներու ներկայութեան իսկոյն բողոքեցի Արփիարի կուսակցութեան մէջ մտնելուն դէմ, քանի որ այդ մարդը հրատարակած էր երեւի «մեղայագիրը» և իւրացուցած էր հանգուցեալ Գ. Ա. ի բն հասցէով զրկած 2000 բուպլին (!):

(!) 1890 Յուլիս 15ի ցոյցէն առաջ Պոլսոյ վարչութեան գանձապահը ես էի և . . . ձերբակալուելէս քանի մը ամիս առաջ ատենապետն եղած էր Մուրաթը: Հասցէնիս դոխուած

Տեսայ և կարգացի երկու պառակտեալներու քանի մը շըր-  
 ջաբերականներն ու մերկացումները, յանհունս ցաւ զգացի:  
 Բանտին մէջ շատ մեծ յոյսեր ունէի գործի ներկայ գրութեան  
 մասին, ու այդ յոյսերս ինձի երազներ երեցան. երբ տեսայ  
 տխուր եւ աղտոտ կացութիւնը, քանի մը գիշերուան արտա-  
 սուքներով չը կարողացայ վշտերս մեղմացնել: Մ. Սըվազլեան  
 նոր կը վերադառնար Լոնտոնէ, ուր զրկուած էր Կիպրոսի  
 մասնաճիւղի կողմէ իբր պատգամաւոր եւ նորակազմ վար-  
 չութեան ատենապետ ընտրուած էր: Սըվազլեան ինձ ծանօթ  
 էր իր հրատարակած «Հայաստան» թերթով, որուն Պոլսոյ  
 գործակալն ու թղթակիցն էի, կը յիշէի նաեւ իրենց այն ըզ-  
 մայելի հրատարակութիւնը, որով 3000 ոսկի կը պահանջէին  
 Հայաստանը ազատելու համար, այս պատճառը բաւական  
 եղաւ յարաբերութիւններս գաղբեցնել ատոնց հետ:

Սըվազլեանի ներկայացուցին զիս օր մը, երբ ընկերական  
 ժողովի մը մէջ իր ճամբորդութեան հաշիւները կուտար: Եր-  
 կու անգամ ընդ երկար տեսակցեցանք. երբ Արփիարի մեղա-  
 յագիրը եւ 2000 բուպլի խնդիրն իրեն պարզեցի, սնտի  
 խօսքերով ի զուր ջանաց համոզել զիս:

չէր, Գ. Ս. ի կողմէ 2000 բուպլի Արփիարին կը յանձնուի ի  
 նպաստ գործին, կամ ինձ կամ ընկերներուս հասցնելու հա-  
 մար. այն ժամանակ Մայր-երկրի կեզրոնը Պոնտոս էր: Մ. ի  
 կը գրեն Կովկասէն որ Արփիար կուգար 2000 բուպլին իր հետ:  
 Արփիար կը հասնի վերջապէս Մ. ի ցոյց կուտայ 2000 բուպլին:  
 Իմ բանտարկուիլս արդէն գիտէր, նամակ մը կը գրէ Մուրա-  
 տին այդ ստակներու համար. նամակը կառավարութեան  
 ձեռքը կ'անցնի Մամրէ վարդապետի միջոցաւ, Նազրմի ներ-  
 կայութեան Արփիարը կ'ուրանայ 2000 բուպլի գոյութիւնը,  
 բայց երբ նամակը մէջ կը բերեն կը խոստովանի, թէ ինք և  
 թէ Մ. ը: Արփիարը բանտ կը նետուի, ուրկէ երբ զանազան  
 Հրաջիներով ազատուեցաւ, Մուրատ արդէն փախստական էր,  
 այգախտով Արփիար գործին յատկացուած 2000 բուպլի  
 զուտարը իր կսկորը կ'անցնէ առանց խղճահարութեան:

ՅՈՒՆՈՒՍԻ 21 Ի ՆԻԿՍՍԻԱ

Հոս նորէն կը տեսնուիմ Սըվազլեանի հետ, որ կը կաս-  
 կածէր թէ Նազարբէկի կողմը պիտի յարիմ. իրեն պատաս-  
 խանեցի հետեւեալը.

—Այժմէն ոչինչ չեմ կարող ըսել որոշակի, պէտք է նախ  
 Լոնտոն երթամ խնդիրը մօտէն քննեմ. եթէ Նազարբէկ 7 տար-  
 ուան հաշիւները տայ եւ մասնաճիւղերու կողմէ ընտրուած  
 պատգամաւորներու որոշումներն յարգէ, չեմ բաժնուիր իրմէ,  
 իսկ հակառակ պարագային իր հետ գործ չունիմ:

Սըվազլեան վտառ էր թէ Նազարբէկ իմ առաջարկնե-  
 րուս եւ ոչ մին պիտի ընդունէր, ուստի զիս ապահովցնելու  
 համար կը մնար միայն Արփիարի խնդիրը, որուն համար կը-  
 սէր ու կը պնդէր վստահեցնելով զիս թէ վերջը պիտի հա-  
 մոզուիմ, շիտակը այնպէս ալ եղաւ, շատ լաւ համոզուեցայ  
 վերջը տեսնելով . . . . .

Ինչպէս ըսի, խնդիրը լաւ քննելու համար պէտք էր Լօն-  
 տոն երթալի, Սըվազլեան յանձնարարական մը տուաւ ինձ  
 անծանօթ Լեւոն Մկրտիչեանի, որը կեզրոնի անգամ ընտր-  
 ուած էր իր քանի մը բարեմասնութեանց համար:

Ձի մոռնաք ըսել թէ՛ Կիպրոսի մէջ նոր Հնչակեաններ  
 դաղանի կերպով հազարեցին ինձ իրենց Արփիարի վրայ  
 հաւատք չունենալն. ես արդէն համամիտ էի իրենց և սկիզբէն  
 մինչեւ վերջը հակառակեցայ Արփիարին:

ՓԵՏՐՎԱՐ 1 ՅԱՂԵՐՍՏԱՆԴՐԻՍ

Լեւոն Մկրտիչեան ինձի ներկայացուց Աղլըսանդրիոյ  
 ընկերները, որոնց հետ մի քանի անգամնեց տեսնուեցայ,  
 բայց չը կրցի կատարեալ համոզում մը գոյացնել, քանի որ  
 ատոնք նոր էին, այսինքն 90 ի ցոյցէն վերջ մտած էին կու-  
 սակցութեան մէջ:

Չարմացայ երբ տեսայ նոր կուսակցութիւն մը. «Հայ  
 Յ. դաշնակցութիւն» անունով: Այդ կուսակցութիւն նոր էր  
 հիմնուած Եգիպտոսի մէջ եւ շատ կ'անհանգստացնէր ընկեր-

ներուս: Հարցուցի զանազան մարդոց այդ կուսակցութեան մասին և տեսայ որ ամէն կողմ տարածուած էր ու բաւական զօրեղ: Եօթը տարի է ի վերէ գոյութիւն ունի հղեր. չափազանց մեծ եղաւ զարմանքս թէ ի՞նչ պէտք է Զ-Յ յեղափոխական կուսակցութիւններ ունենալ և թէ ինչո՞ւ չեն միանար ատոնք ու մէկ մարմին մէկ ոյժ չեն կազմեր. կապէի թէ ինչո՞ւ 7 տարիէ ի վեր միացման ջանքեր չեն եղած, և միևնոյն ժամանակ չէի կրնար հաւատալ, երբ կ'առարկուէր թէ Նաղարէի եղաւ խանգարիչը: Ես զարմանօք կը խորհէի թէ՛ ի՞նչպէս մարդ մը ու կին մը կրնային խանգարել ամբողջ կուսակցութեան միացման փափաքը, օր ըստ օրէ ծանօթութիւններս լայնացան այդ երկու կուսակցութեանց վրայ, ես տեսայ որ Միութեան խնդիրն անհրաժեշտ էր բազմադիմի տեսակետով եւ խիստ փափաքելի, զիտնալով որ մեր ազատութեան յաջողութիւնը ազգային միացեալ ոյժերէն ծնունդ պիտի առնէ, յեղափոխութեան զօրութիւնը ՄիՈՒԹԵԱՆ ԱՅՆ է գոնէ. ես այդպէս համոզուած էի և այդ օրուրնէ սկսեալ իմ բոլոր ջանքերս նուիրեցի Միութեան սուրբ գաղափարին:

Նախ՝ դիմեցի Լ. Մկրտիչեանի իբր կեդրոնի անգամ. բացատրութիւններ պահանջեցի այդ կենսական խնդրոյ մասին: Բայց չափազանց անտարբեր տեսայ զիրենք զէպ ի այդ խնդիր: Մկրտիչեան պարզեց ինձ, թէ ընդհ. ժողովի ժամանակ իրենք դիմած էին Դաշնակցութեան, որոնցմէ ինչ ինչ պատասխաններ էին առած. նորէն զրած էին եւ նամակինն անպատասխանի էր մնացած և այլն. այդ բացատրութենէն հետեցուցի որ Դաշնացիներ չեն ու գեր միանալ: Առ այս քանի անգամներ տեսնուեցայ Դաշնակցութեան Եղիպտոսի ներկայացուցչին հետ, անկէ ալ իմացայ որ Արփիարի և ուրիշ մի քանի աղտոտ անձերու ու ազակեղբոնացման խնդիրներն են որ կ'արգելեն ՄիՈՒԹԵԱՆ խնդրի յաջողութիւնը:

Շատ ուրախ եղայ, երբ տեսայ որ Հնչակեան ընկերներս ալ փափաքող և համակիր են Միութեան խնդրոյն, խոստանալով նոյն իսկ քանի մը անձեր զոհել ի հարկին այդ մեծ գործը ի զուլս հանելու համար: Համոզուած էի թէ՛ քիչ

ատենէն այդ գործը պիտի յաջողի քանի՛ որ երկու կողմն ալ համակիր կ'երևան:

Լ. Մկրտիչեան յայտարարեց թէ ինքն արդէն անգամ մը հրապարակաւ խօսած է Գահիրէի մէջ այդ խնդրոյ առթիւ և դարձեալ պիտի խօսի, երբ ես հոն ըլլամ:

ՓԵՏՐՎԱՐ 13 Ր ԳԱՀԻՐԷ

Երեկոյեան Գահիրէի Հայոց դպրոցին մէջ նախապէս պատրաստած գաղափարս յայտնող գրութիւն մը կարդացի, որուն մի քանի հատուածները պատշաճ կը համարիմ հոս զետեղել:

«Հիմա մեզի բան մը կը մնայ ընել, այն է՝ օգտուիլ «անցեալի փորձառութենէն և մեր բոլոր ոյժերն ամփոփել, «անտեղի ցոյցերով, ողորմելի շարժումներով ժամավաճառ «չըլլալ, այլ լուրջ գործունէութեամբ ու շրջահայեցողութեամբ պատրաստուիլ ընդհ. շարժման՝ ընդարձակ սահմանի մէջ, աչքէ չը վրիպեցնելով խոհականութիւնն, շարհամարհելով մեզմէ խելացիներու խորհուրդները, մէկ կողմ «թողլով մեր անձնական կիրքերը, մոռնալով մեր «ես»ական «նեզ հաշիւները, ի մի՛ ձուլենք մեր նիւթաբծոս քարոյական ոյժերը և անմահ Պէշիքթալեանի հետ ԵՂԲԱՅԻ ԵՄՔ ՄՆՔ գոչելով յառաջ ընթանանք: Մեր ազգի նիւթական «ու բարոյական ոյժերը չեն սպառած, եղբայրներ, խնդրեմ շուտ միանանք, ձեռք ձեռքի տանք, սիրտ սրտի կապենք, «պատրաստուինք Ս. Գործին, ու հաւաքական զօրեղ ճիգ «մալ թափենք և տհա մենք ազատ ենք:»

Յետոյ՝ Լ. Մկրտիչեան նախ զիս ներկայացուց հասարակութեան և սիրով ընդունեցին զիս Հնչակեան ընկերներ, իբր այդ կուսակցութեան Պոլսոյ վարչութեան հիմնադիր... և այլն: Նայն երեկոյ Մկրտիչեան երկար ատենաբանութիւն մը ըրաւ, Միութեան հրատապ խնդրի մասին. ուրախ էի, չափազանց ուրախ տեսնելով որ բոլոր ընկերներս-Նոր Հնչակեան կուսակիցներս-տարօրինակ հրճուանօք մը կը փափաքէին Դաշնակցականներու հետ միանալ: Ես խորապէս հա-



ներուս: Հարցուցի զանազան մարդոց այդ կուսակցութեան մասին և տեսայ որ ամէն կողմ տարածուած էր ու բաւական զօրեղ: Եօթը տարի է ի վերէ գոյութիւն ունի նոյնը. չափազանց մեծ եղաւ զարմանքս թէ ի՞նչ պէտք է 2-3 յեղափոխական կուսակցութիւններ ունենալ և թէ ինչո՞ւ չեն միանար ատոնք ու մէկ մարմին մէկ ոյժ չեն կազմեր. կ'ապշէի թէ ինչո՞ւ 7 տարիէ ի վեր միացման ջանքեր չեն եղած, և միևնոյն ժամանակ չէի կրնար հաւատալ, երբ կ'առարկուէր թէ Նաղարբէկ եղաւ խանգարիչը: Ես զարմանօք կը խորհէի թէ՛ ի՞նչպէս մարդ մը ու կին մը կրնային խանգարել ամբողջ կուսակցութեան միացման փափաքը, օր ըստ օրէ ծանօթութիւններս լայնացան այդ երկու կուսակցութեանց վրայ, ես տեսայ որ Միութեան խնդիրն անհրաժեշտ էր բազմադիմի տեսակետով եւ խիստ փափաքելի, զիտնալով որ մեր ազատութեան յաջողութիւնը ազգային միացեալ ոյժերէն ծնունդ պիտի առնէ, յեղափոխութեան գործութիւնը Միութեան մէջն է գոնէ. ես այդպէս համազուած էի և այդ օրուրնէ սխտեալ իմ բոլոր ջանքերս նուիրեցի Միութեան սուրբ գաղափարին:

Նախ՝ դիմեցի Լ. Մկրտիչեանի իբր կեդրոնի անդամ. բացատրութիւններ պահանջեցի այդ կենսական խնդրոյ մասին: Բայց չափազանց անտարբեր տեսայ զիրենք դէպ ի այդ խնդիր: Մկրտիչեան պարզեց ինձ, թէ ընդհ. ժողովի ժամանակ իրենք դիմած էին Դաշնակցութեան, որոնցմէ ինչ ինչ պատասխաններ էին առած. նորէն զրամ էին եւ նամակներ անպատասխանի էր մնացած և այլն. այդ բացատրութիւնէն հետեւցուցի որ Դաշնակցականք չեն ու գեր միանալ: Առ այս քանի անգամներ տեսնուեցայ Դաշնակցութեան Եգիպտոսի ներկայացուցչին հետ, անկէ ալ իմացայ որ Արփիարի և ուրիշ մի քանի աղտոտ անձերու ու ապակեղբոնացման խնդիրներն են որ կ'արգիլեն Միութեան խնդրի յաջողութիւնը:

Շատ ուրախ եղայ, երբ տեսայ որ Հնչակեան ընկերներս ալ փափաքող և համակիր են Միութեան խնդրոյն, խոստանալով նոյն իսկ քանի մը անձեր զոհել ի հարկին այդ մեծ գործը ի զրուս հանելու համար: Համոզուած էի թէ՛ քիչ

ատենէն այդ գործը պիտի յաջողի քանի որ երկու կողմն ալ համակիր կ'երեւան:

Լ. Մկրտիչեան յայտարարեց թէ ինքն արդէն անգամ մը հրապարակաւ խօսած է Գահիրէի մէջ այդ խնդրոյ առթիւ և դարձեալ պիտի խօսի, երբ ես հոն ըլլամ:

Փետրվար 13 ր ԳԱՀԻՐԷ

Երեկոյեան Գահիրէի Հայոց դպրոցին մէջ նախապէս պատրաստած գաղափարս յայտնող գրութիւն մը կարդացի, որուն մի քանի հատուածները պատշաճ կը համարիմ հոս զետեղել:


«Հիմա մեզի բան մը կը մնայ ընել, այն է՝ օգտուիլ «անցեալի փորձառութենէն և մեր բոլոր ոյժերն ամփոփել, «անտեղի ցոյցերով, ողորմելի շարժումներով ժամովածառ «չըլլալ, այլ լուրջ գործունէութեամբ ու շրջահայեցողութեամբ պատրաստուիլ ընդհ. շարժման՝ ընդարձակ սահմանի մէջ, աչքէ չը վրիպեցնելով խոհականութիւնն, չարհամարհելով մեզմէ խելացիներու խորհուրդները, մէկ կողմ «թողլով մեր անձնական կիրքերը, մոռնալով մեր «ես»ական «նեղ հաշիւները, ի մի՛ ձուլենք մեր նխախառնութեան արդոյական ոյժերը և անմահ Պէշիթալեանի հետ ԵՂՅԱՅՐ ԵՄԲ «ՄԵՔ գոչելով յառաջ ընթանանք: Մեր ազգի նխախական «ու բարոյական ոյժերը չեն սպառած, եղբայրներ, խնդրեմ «չուտ միանանք, ձեռք ձեռքի տանք, սիրտ սրտի կապենք, «պատրաստուիինք Ս. Գործին, ու հաւաքական զօրեղ ձեռք «մալ թափենք և ահա մենք ազատ ենք:»

Յետոյ Լ. Մկրտիչեան նախ զիս ներկայայուց հասարակութեան և սիրով ընդունեցին զիս Հնչակեան ընկերներ, իբր այդ կուսակցութեան Պոլսոյ վարչութեան հիմնադիր... և այլն: Նայն երեկոյ Մկրտիչեան երկար ատենաբանութիւն մը ըրաւ, Միութեան հրատապ խնդրի մասին. ուրախ էի, չափազանց ուրախ տեսնելով որ բոլոր ընկերներս-նոր Հնչակեան կուսակիցներս-տարօրինակ հրձուանօք մը կը փափաքէին Դաշնակցականներու հետ միանալ: Ես խորապէս հա-

մոզուած էի այլ ևս թէ՛ հասարակութեան առջեւ Միութեան մասին այդքան գովեստով խօսող Մկրտիչեան մը անկեղծօրէն կը փափաքի Միութեան, բայց իմ այդ հաւատքս շուտով խաբուսիկ երազի փոփոխեցաւ . . . . .

Գահիրէի հայ հասարակութիւնը մինչև վերջ «Միութիւն», Միութիւն» կը զոչէր և աննկարագրելի ուրախութիւն մը կը զգար տեսնելով Հնչակեաններու տաք վերաբերումը դէպի Միութիւն, իսկ երբ կը լսէր Մկրտիչեանէն, թէ Դաշնակցականք պաղ կը վերաբերուին և չեն ուզեր Միութիւն. խիստ բարկութեամբ կը զինուէր ընդդէմ Դաշնակցականաց: Երբ իմացուեցաւ որ ես պիտի երթամ Լոնտոն և ժընէվ Միութեան խնդրոյ առթիւ բանակցելու համար, ամէնքն ալ լսկասն անհամբեր սպասել իմ ճամբորդութեանս արգիւնքներուն: Գնացի, ամէն ինչ տեսնելով վերագործայ և ահա այսօր կուգամ ճամբորդութեանս արգիւնքն ու Խիստը տպաւորութիւնները ցաւօք սրտի նկարագրել հայ հասարակութեան, որպէսզի բարեմիտ ժողովուրդը ճանաչէ Միութեան համակիրն ու հակառակողը, անկեղծն ու կեղծաւորը և մաքուրն ու աղտոտը:

~~Վերադառնալով~~ Գահիրէի պէս կարև ր երկրի մը մասնաճիւղը լուծեալ գտայ, յետոյ Լ. Մկրտիչեանի հրահանգով նոր ընտրութիւն մը եղաւ և մասնաճիւղ մը վերակազմուեցաւ: Գահիրէի բարձրաստիճան անձանց հետ տեսնուելէս առաջ գաղափար մը յղացայ, որուն իրագործումը շատ մեծ զարկ պիտի տար գործին: Երազրիս միտքը և բարձրաստիճան անձնաւորութեանց հետ տեսակցելու նպատակս համառօտակի պարզեցի Լ. Մկրտիչեանի, որ իր հիացումն արտայայտեց և իրեն գրած մէկ նամակիս պատասխանին մէջ ալ կ'ըսէր: «Ճանկիւրեան, թերևս Աստուած ձեզ ազդեցած է Եզիպտոս կարևոր դեր մը խաղալու յեղափոխական գործին մէջ:» Աւելորդ է մէջ բերել մեր միջև փոխանակուած հեռագիրներու և նամակներու պարունակութիւնը: Նահանգային վարչութիւնն և Մկրտիչեան խորհած էին Գահիրէ ինձ մօտ դրիկել Ռչտունին, որու մասին Մկրտիչեանէ յանձնա-



բարական նամակ մը ստացայ, որուն մէջ կարդացի հետեւեալ պարբերութիւնը.

«Պ. Ռչտունին՝ աւելորդ է ըսելս, մի շատ վստահելի, «անկեղծ ու փորձառու անձնաւորութիւն է, ամէն կերպով «կարող էք իրեն կապուիլ»:

Մկրտիչեանի այս յանձնարարականը զիս բոլորովին շքփոթեցուց, որովհետև Գաղափարի գաղափարանէն Ռչտունիի հետ դատապարտուած հայեր երբ Աքրիա արքայ եկան շատ վատ կը խօսէին Ռչտունիի մասին. նմանապէս Գահիրէ գտնուած առեմնս ալ շատերէ նոյն կրկնութիւնը կը լսէի: Վերջապէս Ռչտունին Գահիրէ գալով պահանջեց և ստիպեց զիս որ իբրև մի բարի մարդ ներկայացնեմ զինքը մարդու մը, որ արդէն իր մասին շատ վատ խօսած էր ինձ: Ուստի երբ Ռչտունիի սոյն առաջարկը մերժեցի՝ չափազանց վշտանալով ցրտացաւ հետս: Ռչտունիի հարցը իբր հանելուկ մը նաց ինձ համար, բայց ես հանելուկներով զբաղելու ժամանակ չունէի, կը ձգտէի Միութեան իրագործման և այլ մի խոշոր ձեռնարկի, առանց խորհելու թէ այդ աղտերը չմաքրած Միութիւնը վնասակար ու անկարելի կրնայ դառնալ:

ՄԵՐՏ 10 ՅԱՂԵՐՍԱՆԻՐԻՍ.


Գահիրէէն վերադարձայ, Մկրտիչեանի հետ երկար տեսնուեցայ ծրագրիս և բարձրաստիճան անձանց հետ տեսակցութեանս մասին, և անոնց խորհուրդները պարզեցի: Մկրտիչեանի ուրախութեան չափը աննկարագրելի էր: այդ ծրագրիս պիտի իրականանար Միութիւնը գոյանալէ վերջ:

Ուրիշ ծրագրի մը ևս յղացայ և պարզեցի Մկրտիչեանի. նա՛ նորէն հիացաւ և սքանչացաւ: Այդ ծրագրիս համար նորէն հարկ եղաւ Գահիրէ ելնել Մկրտիչեանի հետ, գացնիք վերջապէս և զինքը ներկայացուցի տեղւոյն մի քանի բարձրաստիճան անձանց. Մկրտիչեան յանձնարարեց ինձ որ ծրագրիս չիմացնեմ Ռչտունիի, որ Գահիրէ կը գտնուէր: Սոյն յանձնարարութիւնը խորհովին զիս ապաքնցուց քանի որ երկու օր առաջ Մկրտիչեան ինքն կը ներկայացնէր Ռչտուն-

մոզուած էի այլ ևս թէ՛ հասարակութեան առջեւ Միութեան մասին այդքան զովեստով խօսող Մկրտիչեան մը անկեղծօրէն կը փափաքի Միութեան, բայց իմ այդ հաւատքս շուտով խաբուսիկ երազի փոխուեցաւ . . . . .

Գահիրէի հայ հասարակութիւնը մինչև վերջ «Միութիւն», Միութիւն» կը զօշէր և աննկարագրելի ուրախութիւն մը կը զգար տեսնելով Հնչակեաններու տաք վերաբերումը դէպի Միութիւն, իսկ երբ կը լսէր Մկրտիչեանէն, թէ Դաշնակցականք պաղ կը վերաբերուին և չեն ուզեր Միութիւն. խիստ բարկութեամբ կը զինուէր ընդդէմ Դաշնակցականաց: Երբ իմացուեցաւ որ ես պիտի երթամ Լոնտոն և ժընէվ Միութեան խնդրոյ առթիւ բանակցելու համար, ամէնքն ալ լսկան անհամբեր սպասել իմ ճամբորդութեանս արգիւնքներուն: Գինացի, ամէն ինչ տեսնելով վերադարձայ և ահա այսօր կուգամ ճամբորդութեանս արգիւնքն ու տխուր տպաւորութիւնները ցաւօք սրտի նկարագրել հայ հասարակութեան, որպէսզի բարեմիտ ժողովուրդը ճանաչէ Միութեան համակիրն ու հակառակողը, անկեղծն ու կեղծաւորը և մաքուրն ու աղտոտը:

~~Վերադարձի~~ Գահիրէի պէս կարև ր երկրի մը մասնաձիւղը լուծեալ գտայ, յետոյ և Մկրտիչեանի հրահանգով նոր ընտրութիւն մը եղաւ և մասնաձիւղ մը վերակազմուեցաւ: Գահիրէի բարձրաստիճան անձանց հետ տեսնուելէս առաջ դաղափար մը յղացայ, որուն իրագործումը շատ մեծ զարկ պիտի տար գործին: Երազրիս միտքը և բարձրաստիճան անձնաւորութեանց հետ տեսակցելու նպատակս համառօտակի պարզեցի և Մկրտիչեանի, որ իր հիացումն արտայայտեց և իրեն զրամ մէկ նամակիս պատասխանին մէջ ալ կ'ըսէր: «Ճանկիւրեան, թերևս Սատուած ձեզ պարզեցի է Երգիպատս կարևոր դեր մը խաղալու յեղափոխական գործին մէջ:» Աւելորդ է մէջ բերել մեր միջև փոխանակուած հեռագիրներու և նամակներու պարունակութիւնը: Նահանգային վարչութիւնն և Մկրտիչեան խորհած էին Գահիրէ ինձ մօտ գրիկի Ռչտունին, որու մասին Մկրտիչեանէ յանձնա-



բարական նամակ մը ստացայ, որուն մէջ կարդացի հետեւեալ պարբերութիւնը.

«Պ. Ռչտունին՝ աւելորդ է ըսելս, մի շատ վստահելի, «անկեղծ ու փորձառու անձնաւորութիւն է, ամէն կերպով «կարող էք իրեն կայուել»:

Մկրտիչեանի այս յանձնարարականը զիս բոլորովին շքփոթեցուց, որովհետև Գաղատիոյ դատարանէն Ռուչտունիի հետ դատապարտուած հայեր երբ Աքրիա աքսոր եկան շատ վատ կը խօսէին Ռչտունիի մասին. նմանապէս Գահիրէ գտնուած ատենս ալ շատերէ նոյն կրկնութիւնը կը լսէի: Վերջապէս Ռչտունին Գահիրէ գալով պահանջեց և ստիպեց զիս որ իբրև մի բարի մարդ ներկայացնեմ զինքը մարդու մը, որ արդէն իր մասին շատ վատ խօսած էր ինձ: Ուստի երբ Ռչտունիի սոյն առաջարկը մերժեցի՝ չափազանց վշտանալով ցրտացաւ հետս: Ռչտունիի հարցը իբր հանելուկ մը նայ ինձ համար, բայց ես հանելուկներով դըրողնու ժամանակ չունէի, կը ձգտէի Միութեան իրագործման և այլ մի խոշոր ձեռնարկի, առանց խորհելու թէ այդ աղտերը չմաքրած Միութիւնը վնասակար ու անկարելի կրնայ դառնալ:

ՄԱՐՏ 10 ՅԱՂԵՔՍՍԵՒՐԻՍ.

Գահիրէէն վերադարձայ, Մկրտիչեանի հետ երկար տեսնուեցայ ծրագրիս և բարձրաստիճան անձանց հետ տեսակցութեանս մասին, և անոնց խորհուրդները պարզեցի: Մկրտիչեանի ուրախութեան չափը աննկարագրելի էր, այդ ծրագրիս պիտի իրականանար Միութիւնը գոյանալէ վերջ:

Ուրիշ ծրագիր մը ևս յղացայ և պարզեցի Մկրտիչեանի. նա՛ նորէն հիացաւ և սքանչացաւ: Այդ ծրագրիս համար նորէն հարկ եղաւ Գահիրէ ելնել Մկրտիչեանի հետ, գացնիք վերջապէս և զինքը ներկայացուցի տեղւոյն մի քանի բարձրաստիճան անձանց. Մկրտիչեան յանձնարարեց ինձ որ ծրագրիս չիմացնեմ Ռչտունիի, որ Գահիրէ կը գտնուէր: Սոյն յանձնարարութիւնը խորհրովն զիս ապացուցց ջանի որ երկու օր առաջ Մկրտիչեան ինքն կը ներկայացնէր Ռչտուն-

նին իբր մի վատահելի անձ, ու այսօր կը կասկածի անոր վրայ: Ես կը գարմանայի, թէ կեդր. վարչութիւնը մինչև այդ ատեն ինչո՞վ զբաղուէր է, որ միութեան համար երբէ ջանքեր չէ քրիր: Երբ իմ յղացած ծրագիրներուս վրայ նա կը հիանար. կարելի չէր ինձ ենթադրել թէ՛ կեդրոնը անուշտ ունենալու է իր սեփական գաղտնիքները, զորս չուզեր ինձ յայտնել:

Մինչ այս ամէնը կը կատարուէին, զանազան տեղերէ իմ նախկին ընկերներս ու բարեկամներս անունով միայն ծանօթ յեղափոխականներ, գաղտնի տեղեկութիւններ կը հազորդէին ինձ անոնց անցեալ ու ներկայ աղտոտութիւններու մասին. միևնոյն ժամանակ տեղեկացայ որ Արփիար ինքնին կուզայ Պոլսոյ վարչութեան մէջ կը մտնէ Մկրտիչեանի խորհրդով: Երբ Մկրտիչեան՝ կը ջանայ հաստատել թէ նազարբէկի հրամանով բերած է Արփիարը կուսակցութեան մէջ, Նազարբէկ յիշելով Արփիարի աղտոտ մեղայագիրը և թիֆլիսէն բերած 2000 ռուպլին, զոր իւր կոկորդն անցուցած էր, հրահանք կուտայ չընդունիլ գայն կուսակցութեան՝ և մաւաւանդ վարչութեան մէջ: Նոյն ատեն Մկրտիչեան նամակ էր կը գրէ Նազարբէկի. որուն մէջ կը գտնուի նաև սա՛ ռազմարովմանգակ հատուածը, որը այսօր Մկրտիչեան բոլորովին մոռցած է կարծեմ: «Այլևս չենք կարող Արփիարը չընդունիլ վարչութեան և կուսակցութեան մէջ. ինչու որ եթէ Արփիարը դուրս հանենք, կրնայ մատնութիւն առաջ գալ, որովհետև կուսակցութեան բոլոր գաղտնիքներուն տեղեակ է»:

Մկրտիչեանի այս նամակը՝ որ բացարձակապէս կը դատարարէ Արփիարը, այսօր գոյութիւն ունի և կը մնայ պ. Նազարբէկի քով: Երբ երկու տարի առաջ Արփիար կը ստիպուի վարչութենէն հեռանալ, Հնչակեան գործադիր ժողովը անկէ հաշիւ կը պահանջէ. Արփիար մատներու վրայ առանց գրաւոր նշանի մը հաշիւ կը ներկայացնէ, որուն մէջ (ըստ իրենց գիտցածին միայն) 2-300 լիրայի չափ բաց մը կը մնայ: Արփիար ասոր հակառակ կ'առարկէ, թէ այեղա-

փոխական գործը գաղտնի գործ մը ըլլալով, տօմարներով ու թղթերով գրաւոր հաշիւ տալն անհնար է . . .»: Ահա՛ հիազրի միջոց մը ժողովուրդը խաբելու և դրամ կորցելու, որուն մասը չէ տեսնուած ցարդ:

Լեոն Փաշալեան՝ Արփիարի միջոցաւ Պոլսոյ վարչութեան սնդամ ըլլալով, երբ կը վտանգուի հաշիւները մատներու վրայ տալով 300 լիրայի չափ բաց մ'ալ ան կը ձգէ և կը փախչի Եւրոպա: Ահա արփիարական մէթոտ մ'ալ յեղափոխական գործին համարատուութեան մէջ:

Ժողովի մը մէջ հրապարակաւ պահանջեցի որ Արփիարմ հեռայ վարչութենէն և կուսակցութենէն, քանի որ ժողովրդին վստահութիւն չը ներշնչեր և մաքուր անցեալ մը չունի: Բայց ինչ եղաւ. Արփիարի յար և նման Ռչտունի յայտարարեց թէ, «Արփիարը հեռացնելը զայն բարոյապէս մեռցնել ըսել է»: Իսկ գալով 2000 ռուպլի խնդրին, Ատոմ Ասլանեան կ'առարկէ, թէ 2000 ռուպլին կուսակցութեան յանձնուած է ամբողջովին և գործին համար ծախսուած է . . . : Ասկէ կրնանք հետեւցնել թէ՛ թերևս Արփիար մաս մը դրամ ալ անոր տուած է . . . :

Ատոմ Ասլանեան իմ ներայութեանս քանի մը կարևոր ընկերներու ու գործիչներու կը պատմէր Նազարբէկի անցեալը թէ՛ ինք 4-5 տարի առաջ կեդրոնն Աթէնք եղած ատեն, հոն տեսեր է Նազարբէկի համիտական բռնապետութիւնն ու զեղծումները և այլն, այս խոստովանութիւնները լսելով այլ ևս չկրցի համբերել ու բոխ Ասլանեանին. «Դուք ձեր բերնով կը խոտտովանիք ու կը դատապարտէք զայն, ինչո՞ւ ուրեմն այն ատեն այսինքն 4-5 տարի առաջ չը բողբեցիք. չարիքը դեռ փոքր եղած ատեն՝ կրնայիք առաջը առնել, ըսել է թէ դուք ալ անորյար և նման աղտոտներ եղած էք ու անոր զեղծմանց գործակից ու թելադրիչ: Ասլանեան այս խօսքերէս թէ և սաստիկ վշտացաւ, բայց ոչինչ չը կրցաւ արտասանել:

Ռչտունին որ իբր պատգամաւոր Լոնտոն շրջուած էր, ընդհ. ժողովի ցրուելէն ետքը՝ կեդրոնի և ընդհ. ժողովի

անդամոց ոմանց հետ գծտուելով երբ Աղեքսանդրիա կը վերադառնայ, անկեղծ Հնչակեան ընկեր մը (օրիորդ) կ'ուզէ հասկնալ Ռչտունիի գաղափարը նոր ընտրուածներու մասին, նա կը պատասխանէ հետեւեալը.

«Աժէնքէն լաւն ես եմ, ահա ես ալ խայտառակին ու պաշտօտին մէկն եմ, կարգ մը էջեր ընտրեցինք ու վերագարձանք»:

—Օր. ինչ, միթէ՞ ախոռ մ'է կեդրոնը:

(Այս խօսակցութեան ներկայ կը գտնուին Ասլանեան և իր ատկինը), յիշեալ ընկերը վշտանալով բացատրութիւն կը պահանջէ: Ասլանեան անոր զայրոյթը մեղմացնելու համար կ'ըսէ.

—Մի վշտանա՛ք օրիորդ, Ռչտունին ուզած է որ զինքը կեդրոնի անդամ (!) ընտրեն, որովհետև չէ ընտրուած, գէշ կը խօսի:

Այս կարևոր գործիչ կոչուած հրէշներու բարոյականութեան . . . և իրենց վատ անցեալի մասին զանազան տեղեկութիւններ ստացած էի, սակայն իմ նպատակս ուրիշ բան չէր, եթէ ոչ Միութիւն գոյացնելու ծրագիրս առաջ մղել, յուսալով որ Միութեան իրագործումէն ետքը բոլոր աղտոտները խայտառակուելով դուրս պիտի նետուէին և յեղափոխական ասպարէզը ինքնին պիտի մաքրուէր, ատոր համար լռիկ-մննչիկ համբերելով կը մտածէի թէ՛ ե՞րբ պիտի հասնիմ Փարիզ, ժընէվ և Լոնտոն:

ՄԱՐՏ 31 Ի ՄԱՐՍԷՅԼ

Հոս կը լսեմ որ կուսակցութեան կեդրոնը Փարիզ է. Լոնտոնինը միայն անուանական բան մ'է, ասկէ կը հետեւցընեմ թէ անշուշտ կան գաղտնիքներ գորս ծածկած են ինձմէ, հետեւաբար գործը գուցէ լաւ դրութեան մէջ է:

ԱՊՐԻԼ 3 Ի ՓԱՐԻՉ

Հոս ծանօթացայ Աղասիի, Լեոն Փաշալեանի և Չօպանեանի հետ: Առաջինը երևակոյածէս բոլորովին տարբեր գըտայ. միայն հայոց իշխանական թագը կը պակսէր գլխէն. այնքան հպարտ ու գոռոզ էր: Ամբողջ Հայ Յեղափոխու-

թիւնը իր ձեռքին մէջ կը կարծէր . . . եսասիրութիւնն ու փառասիրութիւնը զինքը բոլորովին կուրացուցած մինչև սիրտ խառնելու աստիճանին հասուցած էր: Արդարև ապշեցայ և առաջին վայրկենէն իսկ նշմարեցի որ Միութեան բոլորովին հակառակ են այդ պարոնները, որոնք կը համոզէին զիս բնաւ ժընէվ չերթալ Միութեան պատճառով: Իմ այն ծրագիրը՝ զոր Փարիզի մէջ պիտի իրականացնէի, ատոնց կողմէ ամէն տեսակ արգելքներու հանդիպեցաւ, այդ ծրագիրս ալ ինչպէս ուրիշ շատ մը բաներ ջուրը ինկան: Յաւօք սրտի տեսայ որ փարիզաբնակ հարսուտ հայերու համակրութիւնը անարժանաբար շահած են այդ պարոններ և օրական առ նուազն 15-17 ֆրանկ կը ծախսէին ջուրի պէս: Շուայտութիւն, զուարճութիւն և լիտի ցոփութիւն իրենց գլխաւոր ու միակ յատկանիշներն էին: Ես ալ իբր հիւր երբ Փաշալեանի բնակած օթեանը կը մնայի աչքովս տեսայ, որ յեղափոխական դիմակի տակ ապրող Փաշալեան և Չօպանեան իրենց սիրուհի ֆրանսուհին հօթէլ բերելով մինչև լոյս անոր հետ ժամանակ անցուցին . . . : Ահա ատոնք որ «ազգային գործիչ»ներ կը կոչուին, փոխանակ «ազգային սրիկայ»ներ բտուելու: Յարգելի ընթերցող, ես մանրամասնութեանց մէջ չեմ կարող մտնել ինչու որ բարոյականութեան պահանջներու գեւմ մեղանշած կը լինիմ. ես քիչ կը գրեմ դու շատ հասկըցիր ու ըստ այնմ դատէ:

Լեոն Փաշալեան իմ ներկայութեանս ըսաւ Աղասիին.

—Աղասի՛, դու իմ աստուածս և արարիչս ես:

Այս խօսքի իմաստը գիտէի, որովհետև անձամբ տեսայ թէ Աղասիի միջոցաւ ինչ դեր կը խաղային . . . և ուրիշ հարուստներու դրամը կորզելու գործին մէջ:

Իմ ծրագիրս Փարիզի մէջ իրականացնելն արգիլեցին այդ պարոնները, միայն իրենց տեսակի մէջ հերոսացած այդ հրէշները, որոնք իրենց սուր հոտառութեամբ շատ լաւ կանխատեսեցին որ այդ ծրագիրս իրականանալէն ետք իրենք այլևս չպիտի կարողանային հարուստներու գըրպանէն օրական 15-17 ֆր. սրիկայութեամբ շռայլել, գլխա-

նարով որ նարակազմելի միացած Հայ Յեղափոխութեան գը-  
ները իրենց և իրենց նման բաղդախնդիր սրիկայ խաբերանե-  
րու համար այլևս պիտի փակուէին, այդ մտալուտ կո-  
րուստը նկատի ունենարով խանգարեցին ծրագրիս իրակա-  
ացումը . . . :

Ընդարձակ նամակներ գրեցի Մ տիչեանի և կարելի ե-  
ղածին չափ մանրամասնօրէն նկարագրեցի այն բաղմազիմի  
աղտոտութիւնները, զորս տեսած էի աչքովս և ցաւօք սրտի  
ծրագրիս իրականացման անկարելիութիւնը յայտնած էի:  
Մկրտիչեան բոլոր այդ նամակներս անսպասուխանի թողուց  
և այսքան միայն գրեց.

«Ձեր նամակներէն ոչինչ չեմ հասկնար, խնդրը պարզէ՛  
եթէ կարելի, վիշտերուդ գարման մը գտնենք:»

Գ ա՛ռն ծիծաղ, Մկրտիչեան չէր հասկնար հետեւեալ  
հատուածները, զորս կը քաղեմ իրեն զրկած նամակներէս:

«Բաղդախնդիրներով ու սինլքօրներով լեցուած է հրա-  
պարակը, աղտոտներուն թիւն անհամար է, ժողովուրդը կը  
խաբէք և իրեն վստահութիւնը չարաչար կը դործածէք, իմ  
յգացած ծրագրիս լոկ երազի փոխուեցաւ, այժմէն կը հրա-  
ժարիմ. որովհետեւ «փառք»ի և «ես»ի համար չեմ կարող գոր-  
ծիք ըլլալ, քանի որ յեղափոխական Ս. գործը ապրուելու միջոց  
մը, արհեստ մը եղած է և անոր անունը պղծուած է կարգ  
մը սրիկայ բաղդախնդիրներէ . . . այնպիսի անձերու հետ  
չեմ կարող ընկերանալ և այդպիսի անձերու հետ ո՛չ թէ  
անձս, այլ եղունգս և մազս անդամ չեմ զոհեր: Այն ծրա-  
գիրս որուն վրայ կը հիանայիր, ձերիններու կողմէ կ'ար-  
գելուէի, նոյն իսկ ժընէվ երթալուս արգելք կ'ըլլան . . . » և  
այլն և այլն:

Այդ երկար նամակներուս բովանդակութիւնը ասանկ  
բաներ էին, ատոր համար Մկրտիչեան չէր հասկնար թէ  
ինչ ըսել կ'ուզեմ . . . այո՛, գործին չէր գար հասկնալ, ո-  
րովհետեւ ինքն ալ անոնցմէ էր:

Հնչակեան այս գործիչներու վրայէն այլ ևս հաւատքս  
վերցաւ. Արփիարն արդէն ինձ համար ընաւ կարեւորութիւն


չո. նէր, թէ և կեղերնի անդամ էր: Միայն պ. Տամատեան  
էր իմ Թ տարուան անկեղծ ընկերս, որուն հետ միայն կը  
թղթակցէի, երբ յարաբերութիւնս խղեցի գործոյ անձանօթ  
բաղդախնդիրներու հետ:

Ասոնց բոլոր աղտոտութիւնները տեսնելով այն գեղեցիկ  
Փարիզն ինձ համար դժոխք դարձաւ, ինչու որ այդ աղտոտ-  
ները միշտ արգելք կ'ըլլային ո՛ր և է նշանաւոր հայու մը հետ  
տեսնուելուս: Երկրին ու լեզուին անձանօթ ըլլալով դժուար  
էր ինձ ուղած մարդոցս տները գտնել և գաղափարս պար-  
զել. շուարած կը մտածէի գիշեր և ցերեկ. վերջապէս մտա-  
գրեցի նախ սպասել և կեղերնի գաղտնիքներուն մէջ մտնելով  
ուսումնասիրել անոնց բոլոր կեղտոտութիւնը և ապա դի-  
մակնին պատուել ու հասարակութեան առջև պարզել գոյ-  
ներնին, որպէսզի թէ՛ ժողովուրդը և թէ՛ կուսակցական  
անկեղծ ընկերներս վերահասու ըլլան թէ՛ այդ վատաբարոյ  
սրիկաներու խաբէութեանց զոհ գացած են: Որոշեցի հա-  
սարակութեան աչքերը բանալ և զգուշացնել զինքը, որ այլ  
ևս չի խաբուի «Հնչակեան-վարիչներ» կոչուած այս աղտոտ  
խմբակի ծուղակներէն: Այս ճամբով թէ և Միութեան փա-  
փաքիս չէի կրնար հասնիլ գէթ աղտոտներէն քիչ մը մաք-  
րուած կ'ըլլար Ազգ. հրապարակը: Իսկ այժմ համոզուած  
եմ, որ Միութեան արգելքները այդ 8-9 անձերն են, որոնց  
հեռացումէն կ'սխաւում ունի Հայ Յեղափոխականներու մի-  
ութիւնը:

Սա՛ ալ պէտք է գիտնալ որ ինքզինքս համակիր կը ցուց-  
նէի նորակազմ կեղերնին, որ այդ միջոցաւ թերեւս յաջո-  
գէի. ատոր համար «Մարտ»ի առաջին թիւին մէջ անունս  
գրելու արտօնութիւն տուի: Փարիզէն այլ ևս յոյսս կտրե-  
ցի, ժընէվ պիտի երթայի Միութեան խնդրոյ առթիւ, բայց  
Լոստոնէն զիս կանչեցին վարչութեան հետ նախօրօք խոր-  
հրդակցելու և ապա ժընէվ երթալու համար:

ԱՊՐԻԼ 25 Ի ԼՈՍՏՈՆ

Արփիարը ճանչնալու դժբաղդութիւնը ունեցած չէի:  
Հասած օրս իսկ ուզեց առիթէն օգուտ քաղել:



Ես քիչ մը տկար էի. և շոգեհասի երրորդ կարգով ճամբորդած ըլլալով անձրեւի խոնաւութիւնը տկարութիւնս սաստկացուցած էր:

Արփիարի առաջին գործն եղաւ ինքնաբերաբար 2,000 բուպիի խնդիրը բանալ, ինք չէր կարող ուրանալ այդ գումարի իրեն յանձնուիլը, կ'ուզէր զիս համոզել որ յանձնած են իրեն իբր անձնական ստակը, բայց ինք բերած ու կուսակցութեան յանձնած էր: Յողնած ու տկար վիճակով փոքրիկ դէտողութիւն մը ըրի, որուն Արփիար պատասխանեց հետեւեալը.

— Ըլլայ իմս, ըլլայ կուսակցութեանը. վերջապէս ծախսուած է կուսակցութեան մէջ:

Ես պահանջեցի որ ցոյց տայ թէ՛ որո՞ւ գիտակցութեամբ և ի՞նչ բաներու ծախսուած է, պիտի գումար մը չէ:

— Չե՛մ կարող յիշել, թէ ի՞նչ բանի և որո՞նց գիտակցութեամբ ծախսուեցաւ, որովհետեւ սոմար չկայ:

— Անկարելի է, բանի որ իմ հասցէիս բերած ես և գործի անունով, պէտք է կամ ցոյց տաս՝ թէ որո՞ւ թոյլտուութեամբ և ի՞նչ բաներու համար ծախսած ես, և կամ պիտի վճարես, յարեցի ես:

— Չե՛մ յիշեր, չե՛մ գիտեր, ըսելով խնդիրը փակեց, ողորմելի՛ մարդը անպատճառ վշտացաւ, երբ տեսաւ որ իր ճիշդութիւններէն խաբուող տեսակ մարդիկներէն չեմ:

Կեդրոնի պաշտօնասենեկին մէջ կ'ուզեն ինձմէ լսել Փարիզ ունեցած գործունէութեանս մասին, որովհետեւ պ. Տաճարեանի ուղղած նամակներուս միոյն մէջ դժգոհութիւն յայտնած էի Փարիզի գործիչներու մասին: Արփիար կ'ըսէր կարծէր թէ իմ աչքէս վրիպած է իւր սիրեցեալ աղտոտներու լկտի ընթացքը, առաջ ուրախութեամբ կը լսէր ըսածներս. իսկ երբ տեսաւ որ ամէն բան տեսած, լսած ու հասկացած եմ, իսկոյն դեղնեցաւ, ձեռքը գլխուն զարկաւ, սկսած սենեկին մէջ պտտիլ ու կատաղութեամբ ըսել.

— Ախ, ի՞նչ յիմար տղաքներ են, որ ձեզի հետ այդպէս վարուեր են:

Արփիարը վշտացաւ՝ որովհետեւ իր սիրելիները չեն ունեցած պէտք եղած ճարպիկ ճիղուիթութիւնն, որ իրենց աղտոտ լրբութիւնները պահէին ինձմէ:

Արփիար փորձեց ուրանալ և պնդել թէ՛ Փաշալեան ու Չօպանեան Հնչակեաններ չեն և թէ Աղասին ոչ մի դեր ունի Փարիզի մէջ: Ի հարկէ ես անկարող էի հաւատալ Արփիարի խօսքերուն, որովհետեւ աչքովս տեսած էի, թէ յիշեալ անձերը ի՞նչպիսի կարեւոր դիրք մը ունէին իբր Հնչակեան յեղափոխականներ Փարիզի մէջ, և թէ՛ ի՞նչպէս անոնք տեղեակ էին Հնչակեան կուսակցութեան բոլոր գաղտնիքներուն. . . գիտէի, որ Հնչակեան մասնաճիւղերու հասցէները Փաշալեանի բոլոր էին. . . գիտէի, թէ անոնք ի՞նչպէս կ'ապրէին Փարիզի մէջ իբր Հնչակեան. . . և վերջապէս գիտէի, թէ Չօպանեան ինչո՞ւ համար Լուսինեան իշխանին համար վատ կը խօսէր. որովհետեւ. . . : Բայց ես ուզեցի Արփիարի բոլոր առարկութիւններուն վերջ դնել կտրուկ առաջարկով մը:

— Եթէ Փաշալեան ու Չօպանեան Հնչակեան չեն և Աղասին դեր մը չը խաղար Փարիզի մէջ իբր Հնչակեան, պէտք է հրատարակէք այդ «Մարտ»ի մէջ, որ տեսնողները չգայթակղէին ամբողջ Հնչակեան կուսակցութենէն:

Արփիար քիչ մը մտածելէն վերջ պատասխանեց.

— Այդ բան ընել չե՛նք կարող:

— Չէ՛ք կարող հրատարակել:

— Չե՛նք կարող:

— Ուրեմն խոստովանեցէք, որ Հնչակեան գործիչներ են, յարեցի ես, այսպիսով հարցը փոխուեցաւ:

Պարզեցին ինձի կեդրոնի շատ անձուկ նիւթական վիճակը, զոր բարւոքելու համար (Միութեան մասին նախնական բանակցութիւններ ընելէս առաջ) Արփիար առաջարկեց ինձ Ամերիկա երթալ և դրամ հանգանակել. ես այդ բանը յանձն չառի, բանի որ վստահ չէի Հնչակեան կարգ մը կարեւոր գործիչներու բարոյականին վրայ, բացի պ. Տամատեանէ: Ուստի՛ նախ որոշեցի ժընէվ երթալ, Միութեան մա-

ես քիչ մը տկար էի. և շոգեխաւի երրորդ կարգով ճամբորդած ըլլալով անձրեւի խոնաւութիւնը տկարութիւնս սաստկացուցած էր:

Արփիարի առաջին գործն եղաւ ինքնաբերաբար 2,000 բուսկի խնդիրը բանալ, ինք չէր կարող ուրանալ այդ գումարի իրեն յանձնուիլը, կ'ուզէր զիս համոզել որ յանձնած են իրեն իբր անձնական ստակը, բայց ինք բերած ու կուսակցութեան յանձնած էր: Յոգնած ու տկար վիճակով փոքրիկ դէտողութիւն մը ըրի, որոնք Արփիար պատասխանէց հետեւեալը.

— Ըլլայ իմս, ըլլայ կուսակցութեանը. վերջապէս ծախուած է կուսակցութեան մէջ:

Ես պահանջեցի որ ցոյց տայ թէ՛ որո՞ւ գիտակցութեամբ և ի՞նչ բաներու ծախսուած է, պիտիկ գումար մը չէ:

— Ձե՛մ կարող յիշել, թէ ի՞նչ բանի և որո՞նց գիտակցութեամբ ծախսուեցաւ, որովհետեւ տօմար չկայ:

— Անկարելի է, բանի որ իմ հասցէիս բերած ես և գործի անունով, պէտք է կամ ցոյց տաս՝ թէ որո՞ւ թոյլտուութեամբ և ի՞նչ բաներու համար ծախսուած ես, և կամ պիտի վճարես, յարեցի ես:

— Ձե՛մ յիշեր, չե՛մ գիտեր, ըսելով խնդիրը փակեց, ողորմելի՛ մարդը անպատճառ վշտացաւ, երբ տեսաւ որ իր ճիգուիթութիւններէն խարուող տեսակ մարդիկներէն չեմ:

Կեդրոնի պաշտօնասենեկին մէջ կ'ուզեն ինձմէ լսել Փարիզ ունեցած գործունէութեանս մասին, որովհետեւ պ. Տաւաթեանի ուղղած նամակներուս միոյն մէջ դժգոհութիւն յայտնած էի Փարիզի գործիչներու մասին: Արփիար կ'կը կարծէր թէ իմ աչքէս վրեպած է իւր սիրեցեալ աղտոտներու լկտի ընթացքը, առաջ ուրախութեամբ կը լսէր ըսածներս. իսկ երբ տեսաւ որ ամէն բան տեսած, լսած ու հասկացած եմ, իսկոյն դեղնեցաւ, ձեռքը գլխուն զարկաւ, սկստանեակին մէջ պտտիլ ու կատաղութեամբ ըսել.

— Ախ, ի՞նչ յիմար տղաքներ են, որ ձեզի հետ այդպէ վարուեր են:

Արփիարը վշտացաւ՝ որովհետեւ իր սիրելիները չեն ունեցած պէտք եղած ճարպիկ ճիգուիթութիւնն, որ իրենց աղտոտ լրբութիւնները պահէին ինձմէ:

Արփիար փորձեց ուրանալ և պնդել թէ՛ Փաշալեան ու Չօպանեան Հնչակեաններ չեն և թէ Աղասին ոչ մի դեր ունի Փարիզի մէջ: Ի հարկէ ես անկարող էի հաւատալ Արփիարի խօսքերուն, որովհետեւ աչքովս տեսած էի, թէ յիշեալ անձերը ինչպիսի կարեւոր դիրք մը ունէին իբր Հնչակեան յեղափոխականներ Փարիզի մէջ, և թէ՛ ինչպէս անոնք տեղեակ էին Հնչակեան կուսակցութեան բոլոր գաղտնիքներուն . . . գիտէի, որ Հնչակեան մասնաճիւղերու հասցէները Փաշալեանի բովն էին . . . գիտէի, թէ անոնք ինչպէս կ'ապրէին Փարիզի մէջ իբր Հնչակեան . . . և վերջապէս գիտէի, թէ Չօպանեան ինչո՞ւ համար Լուսինեան իշխանին համար վատ կը խօսէր. որովհետեւ . . . : Բայց ես ուզեցի Արփիարի բոլոր առարկութիւններուն վերջ դնել կտրուկ առաջարկով մը:

— Եթէ Փաշալեան ու Չօպանեան Հնչակեան չեն և Աղասին դեր մը չը խաղար Փարիզի մէջ իբր Հնչակեան, պէտք է հրատարակէք այդ «Մարտ»ի մէջ, որ տեսնողները չբայթակղէին ամբողջ Հնչակեան կուսակցութենէն:

Արփիար քիչ մը մտածելէն վերջ պատասխանեց.

— Այդ բան ընել չե՛նք կարող:

— Ձե՛ք կարող հրատարակել:

— Ձե՛նք կարող:

— Ուրեմն խոստովանեցէք, որ Հնչակեան գործիչներ են, յարեցի ես, այսպիսով հարցը փոխուեցաւ:

Պարզեցին ինձի կեդրոնի շատ անձուկ նիւթական վիճակը, զոր բարւոքելու համար (Միութեան մասին նախնական բանակցութիւններ ընելէս առաջ,) Արփիար առաջարկեց ինձ Ամերիկա երթալ և դրամ հանգանակել. ես այդ բանը յանձն չառի, բանի որ վստահ չէի Հնչակեան կարգ մը կարեւոր գործիչներու բարոյականին վրայ, բացի պ. Տամատեանէ: Ուստի՛ նախ որոշեցի ժընէվ երթալ, Միութեան մա-



սին եղած կարծիքներն ու չմիանալու պատճառներն իմա-  
նալ, անկէ վերջ Ամերիկա երթալ գրամ հանգանակելու:

Քանիցս առաջարկեցին ինձ «Մարտ»ի մէջ պաշտօնապէս  
ստորագրութեանս ներքեւ հրատարակել, թէ ես կը պատկա-  
նիմ նորակազմ Հնչակեան վարչութեան, առ ալ յետաձգեցի:

Դիւրութեան համար, ինձ դալիք նամակներու հասցէն  
տուած էի Աղասիի հասցէն, այս պարոնը իբր պատուաւոր  
օրինակելի բարոյականի տէր մէկը, կը բանար իմ նամակ-  
ներս և իրեն համար անհաճոյ թուած նամակներս կ'ոչնչացնէր,  
ահա՛ Ձէյթունի «հերոս»ը և անոր բարոյականութիւնը: Նա-  
մակներս բանալ, կարդալ, պահել և ոչնչացնել, Ատոմի,  
Ռչտունիի և Մկրտիչեանի համար ալ յանցանք մը չէր սա՛,  
որովհետև ատոնք ալ ըրին:

Երեք անգամ Արփիարի հետ տեսակցելէ ետքը, քիչ մը  
հասկցայ իւր հրէշաւոր ու ճիւղաղային նկարագիրն ու իր կա-  
րողութիւնը, ամէն ոք կը կարծէ թէ կարող մէկն է,  
բայց չգիտէին թէ միայն աղտոտ ու ճիւղուիթական էնթրիքնե-  
րուն մէջ կարող է: Եղտոտութիւն մը երբէք չը կրնար ոյժ մը  
համարուիլ. իսկական ոյժը միայն ճմարտութեան մէջն է:

Արփիար նկատեց որ կը հետաքրքրուիմ իրենց ներքին  
գործերով, քանի մը անգամ ըսաւ ինձ ուսերը թոթուելով և  
վիզը ծռելով:

«Կը տեսնես, ես կ'նքապահ եմ, բայց կ'նիքն իմ քով չեմ  
պահեր, կ'նիքը, ստակի հաշիւներն և ամէն բան պ. Տամատ  
«եանի քովն է. ինչ պիտի ընեմ, ես ատանկ բաներու խառ-  
նուիլ չեմ ուզեր»:

Ես լաւ կը հասկնայի Արփիարի նպատակը, բայց նա  
այլևս չէր կարող զիս խաբել, սակայն ինչ որ ալ ըլլար, ես  
կ'ուզէի գեռ քանի մը գաղտնիքներ ձեռք բերել, ատոր հա-  
մար պէտք էր ինձ վստահութիւն ներշնչել իրենց, ուստի  
իբր միջոց «Մարտ»ի մէջ իմ հասցէս հրատարակել տուի,  
նամակներս դան խմբագրութեան անունով:

Արփիարի մասին կազմած գաղափարս իսկոյն գրեցի Մ  
կրտիչեանի, բայց ամբողջ մեր թղթակցութեանց միջոցը  
Մկրտիչեան բնաւ այդ հարցը չը շօշափեց, և միթէ՞ կրնա

շօշափել, չէ՞ որ ինքն ալ Արփիարի մանրանկարն էր ու անոր  
փոքրացած պատճէնը:

Ժընէվ երթալս միշտ կը յետաձգուէր զանազան չնչին  
պատճառներով, գլխաւորաբար Արփիարի կողմէ, բայց երբ  
տեսան որ զիս այդ գաղափարէն կասեցնել ու համոզել ան-  
կարելի է, վճռեցին զիս կեդրոնի կողմէն իբր լիազօր զրկել  
նախնական բանակցութեանց համար, մտադրելով ապագային  
նոր արգելքներ հանել Միութեան դէմ: Կեդր. վարչութեան  
կողմէն գրուեցաւ հետեւեալ պաշտօնական թուղթը «Իրօ-  
չակ»ի խմբագրութեան, որուն բնագիրը ցարդ կը գտնուի  
նոյն խմբագրութեան մօտ:

Լոնտոն, 6 Մայիս 1897

«Իրօչակ»ի խմբագրութեան



Յարգելի Հայրենակիցներ

1896 նոյ. 28 և 30 թուակիր մեր ապահովագրեալ նա-  
մակներուն պատասխանը ձեզէ ստացած չըլլալով և ոչ՛ ալ  
մեր պաշտօնաթերթ «Մարտ»ի մէջ մեր կողմանէ Միութեան  
խնդրի մասին գրուածին ո՛ր և է պատասխան մը, թերևս ան-  
յարմար թուէր նորէն խմբագրութեանդ հետ բանակցիլ.  
սակայն ազգին գերագոյն շահերը կը պահանջեն ո՛ր և է  
փափկանկատութիւն զոհել համերաշխութիւն հաստատելու  
համար երկու յեղափոխական մարմիններու միջև, այս նը-  
կատումներով անգամ մը ևս օգտակար կը համարինք ձեզի  
դիմում ընել:

Մեր հանրածանօթ ընկեր պ. Յարութիւն ծանկիւլեան,  
կը փափաքի կեդրոնական վարչութեան կողմանէ պաշտօն  
ստանձնել և անձամբ ժընէվ գալով Դաշնակցական և Հնչակ-  
եան կուսակցութիւններուն միութեան կամ գէթ համերաշ-  
խութեամբ գործելու խնդրին համար անձամբ իմանալ Դաշ-  
նակցական ձեռնհաս մարմիններու հայեացքները և առաւ-

Չարկները և անոր համեմատ վերջնական բանակցութեան պատրաստութիւններ տեսնել, այո՛ կամ ո՛չ:

Ուստի կը խնդրենք որ հաճիք մեր այս նամակին պատասխանը կարելի եղածին չափ կարճ ժամանակամիջոցի մը մէջ մեզի հասցնել:

Ընդունեցէք մեր յարգանքները:  
Հնչ. Կուսակցութեան Կեդր. Վարչութիւն  
Ատենադպիր Ատենապետ  
ԼԵՒՈՆ ԲՍՊՐՍՏ ԳՐ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

(Կ ն ի ք)

Նամակը գրուած է խիստ քաղաքավար և ճիղուիթական ձևով, եթէ Արփիարի կամքին թողէի, դեռ շատ ձևեր պիտի մտցնէր մէջը, ինչպէս և կար ու ջնջեցի: Նամակը գրող Արփիար ինքն ալ չէր հաւատար մէջը յայտնուած մտքերուն... «Ժողովրդի գերագոյն շահ» և այլն այս տեսակ բառեր պատրաստ ունի այդ անձն իւր շրթունքներու վրայ. իսկ սիրտը սև օձերու բոյն մէ:

Այս նամակը ղրկուելէն ետք, Արփիար Փարիզ գնաց կարեւոր գործի մը համար, բայց ատոր մասին մեզի բնաւ տեղեկութիւն չը տուաւ, ամէն բան իրեն վերապահելով: Փարիզ մնաց 25 օր, վերադարձաւ և 350 Փր. ծախքի հաշիւ մը տուաւ, մինչդեռ նոյն 25 աւուր մէջ պ. Տամատեանը, գրաշարը և ես ծախսած էինք միայն 50 Փր. այս փաստը բաւական է լուսամիտ ընթիւրցողներու հասկցնել, թէ ի՞նչ խղճի ու բարոյականի տէր է Արփիար . . .

Կեդրոնի ղրկած նամակին «Իրօչակ»ի խմբագրութիւնը անմիջապէս պատասխանեց միայն Տամատեանին և զիս ժընէվ հրաւիրեց, բայց ո՛չ իբր պաշտօնական անձ մը. ինչպէ՞ մեր կեդրոնը առաջարկած էր, այլ իբր պարզ անհատ մը միջնորդ մը, հիւր մը: Տամատեան իսկոյն այդ նամակը Փարիզ Արփիարին ղրկեց, այս վերջինը այդպիսի կարեւոր նամակի մը հինգ օրէն վերջ պատասխանեց. ստիպուած մի

կրկնակի հարցումներէն, մինչդեռ ուրիշ մասը մուկը խնդրներու համար ամէն օր կը գրէր կեդրոնին:

Այն ժամանակ կեդրոն դեռ ևս փոքր միջոց մը ունէր և կարող էր իմ ճանապարհածախսս վճարիլ, բայց Արփիար որոշած էր ինձի ճանապարհածախս չը տալ, որով ըստ իւր կարծեաց պիտի անհնար դառնար իմ ժընէվ երթալս:

Այդ պատճառով Հիւանդութիւնս քիչ մը սաստկացաւ, հետեւապէս ուղեցի «Իրօչակ»ի խմբագրութեան հետ նամակով բանակցիլ. միութեան մասին անձամբ տեսակցիլը քիչ մը յետաձգելով, բայց «Իրօչակ»ի խմբագրութիւնը անհրաժեշտ համարած էր իմ անձնական ներկայութիւնս. ի բացաստի իրենց նամակներէն ալ կ'երևէր որ համամիտ էին Միութեան: Պ. Տամատեանի հետ շատ ուրախ եղանք, որ քիչ օրէն Միութիւնը պիտի իրականանար. ուղեցինք Մկրտիչեանն ալ մասնակից ընել մեր ուրախութեան, ուստի «Իրօչակ»ի խմբագրութեան նամակի պատճէնը իրեն ղրկեցինք, բայց «Միութիւն. Միութիւն պօռացող Մկրտիչեանն երբ կը տեսնէ որ «Իրօչակ»ի խմբագրութիւնը համամիտ է Միութեան, առանց որ և է պատճառարանութիւններ մէջ բերելու, լապոնական կարճ ոճով մը ինձի կը գրէ հետեւեալը.

«Ան պ ա յ մ ա ն կերպով ժընէվ չը պէտք է երթաս Միութեան մասին նախնական բանակցութիւններ կատարելու: Երանի թէ ժընէվ չերթացած այս նամակս քեզ հասնէր ու երթալը բ ո լ ո թ ո Վ ի ն յետաձգէիր»:

Արփիարը Փարիզէն վերադառնալով նորէն սկսաւ խանգարել ժընէվ երթալս զանազան ուղղակի և անուղղակի միջոցներով: Փարիզէն ալ շուտ վերադարձաւ, որովհետեւ պ. Տամատեան իրեն գրեց որ Փարիզ գործ չունի. թող յետ գայ, եթէ ոչ պ. Ճանկիւլեան առանց իրեն սպասելու կը մեկնի ժընէվ:

Արփիարը դարձեալ նիւթականի խնդրը մէջ բերաւ, բայց ես քանի որ վ ե ը ջ ն ա կ ա ն ա պ է ս որոշած էի ժընէվ երթալ՝ պատասխանեցի իրեն կտրուկ կերպով.

—Ես ժողովրդի շահերն ամէն բանէ բարձր կը դասեմ, պէտք է ամէն բան զոհել անոր համար. եթէ դուք այսօր ինձի ճանապարհածախս չը տալով կը կարծէք որ պիտի արգիլէք ժընէվ երթալս Միութեան գաղափարը չիբականացընելու համար, ես կը ծախսեմ այն ստակէն՝ որ պարտքերուս յատկացուցած եմ (1): Ես անպատճառ պիտի երթամ, քանի որ ամբողջ Հայ ժողովուրդը Միութիւն կը պօռայ, պէտք է այդ ցանկալի Միութեան արգելք եղող պատճառները իմանամ ու ժողովրդին պարզեմ:

Արփիար երբ տեսաւ որ նիւթականի միջոցով ալ չկըրցաւ խանգարել, ճիզուիթաբար համակերպեցաւ: Պ. Տամատեան սկիզբէն ի վեր համակիր էր Միութեան, նոյն երեկոյ ճամբայ պիտի ելնէի. Արփիար իր վերջին խօսքն ըսաւ:

—Գիտեմ Միութեան համար Դաշնակցականները իմ անձս պիտի պատճառաբանեն և պիտի պահանջեն որ ես հեռանամ վարչութենէն. եթէ ես պիտի ըլլամ Միութեան արգելք անոնց աչքին, հոս վերադառնալէդ անմիջապէս ետքը կը հրատարիմ:

Արփիարի այս խոտուածն ինձի հաւատ սլի չթուեցաւ, որովհետեւ գիտէի թէ ինչ ճիզուիթ մէկն է.

**ՅՈՒՆԻՍ 10 ԺԸՆԵՎ**

Դրօշակի խմբագրութեան երեք ներկայացուցիչներու հետ երեք օր բանակցեցանք խմբագրատան մէջ: Ասոնք ըսկիզբէն մինչև վերջը պնդեցին, որ վստահութիւն չունին Հնչակեան նորակազմ վարչութեան և գործիչներու վրայ, որ ովհետեւ անկեղծ չեն վերաբերուիր դէպի գործը:

(1) Բանտէն ազատուելէս ի վեր թէ՛ ճանապարհածախսս և թէ՛ ազատուելու համար տուած կաշառքներս որ փոխառութեամբ հոգացած էի, վճարուած ո՛չ մի կուսակցութեան ստակով չէ, այլ մասնաւորներու նուէրներով, ուստի հրապարակաւ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ այդ մասնաւոր ազնիւ անձերու:

Առաջարկեցին համերաշխութեան մասին բանակցիլ, ես մերժեցի. առարկելով թէ՛ անվստահելի անձերու հետ համերաշխութիւնն ալ օգուտ չունենար բացի վնասէն: Երբ Միութիւնն անկարելի կը նկատէք, կարող էիք նամակով հաղորդել, թէ վարչութեան և գլխաւոր գործիչներու վրայ վստահութիւն չունիք, որով զիս ալ ազատած կ'ըլլայիք այս հեռաւոր ճամբորդութենէն այս տկար վիճակիս մէջ. ես վաղը կը մեկնիմ պատասխանեցի:

Միւս օր, ներկայացուցիչները կարծիքս առնելով, իրենց միւս ընկերներով ուղեցին ընդհ. ժողով մը ընել: Վերջին նիստ մը գումարեցինք, սրու մէջ նախ կարդացուեցաւ Արփիարի ոստիկանութեան դուռը բանտարկուած միջոցին տըւած հարցաքննութեան հայերէնի թարգմանութիւնը, որ կերպով մը ձեռք բերած էն: Ատոր մէջ Արփիար կը դաւաճանէր Տ. Յ. Թ. գանձապետ, Վ. Պ. Տ. որ սպաննել տուած էր զիս մատնող Սաչիկ փաստաբանը, Պէշիքթալցի Յ. Ս. և Սորէն Նարպէյը:

Ես այդ թուղթը վաւերական և բաւարար չգտայ, քանի որ ճիշդ թուրքերէնի պատճէն կամ ինքնագիրը չէր: Ես արդէն իրենց ըսած էի, որ Արփիարի վրայ համարում չունիմ, բայց այդ դրութեան հիման վրայ չէի կարող վճառաբար ըսել թէ՛ Արփիար դաւաճաւ: մըն է և ո՛չ ալ հակառակը պնդել:

Ժողովը միաձայնութեամբ ըսաւ. «Մենք բոլոր Դաշնակցականներս Սրփիարն իբր դաւաճան կ'ընդունինք և ժամանակին մահուան դատապարտեցինք զինքը:»

Ես իրաւունք ունէի լսել Դաշնակցութիւնը ներկայացնող մարմնի մը կողմէ ըսուածները և Միութեան բանակցութեանց իբր արգելք ճանչնալ Արփիարը:

Ատկէ վերջ կարդացուեցաւ Սուրէն Սուրէնիանի (կեզրոնի անդամ) ու շրջանակով ինքնագիր նամակը, որու ձեռագիրը տեսնելով ճանաչեցի ու հաստատեցի, ահա այդ նամակի պատճէնն, որու բուն նամակը (Դրօշակ) ի խմբագրատունն է:

6 նոյեմբեր 1896 Լոստոն

Յարգելի փրօֆէսոր!

Երկար ատեն չը գրեցի, բայց կարծեմ պատճառը կիսով չափ յայտնի է: Օգոստ. 8էն սկսեալ մինչև օրս 30 կանոնաւոր ժողովներ ունեցանք, որոնց մէջ մեր վիճաբանութեան նիւթերը շատ փափուկ և բազմակողմանի էին: Յայտնի է ձեզ թէ այդ նիւթերու լուսաբանութիւնը գրեթէ ամբողջովին ինձմէ կախում ունէր. հետեւաբար կարող էք ենթադրել թէ ինչ ծանր աշխատութիւններու դատապարտուած էի: Երբ այդ ընկերներու հետ միացայ, որոնցմէ շատեր ինձ անձանօթ էին, հետեւեցայ ձեր գծած ուղղութեան, թէև ինքզինքս ամբողջութեամբ այդ մարդոց տրամադրութեան տակ չգրի. մինչև վերջ ինքնուրոյնութիւնս պահեցի, և կարծեմ այդ բան ընելու համար պիտի չզղջամ:

Մենք ամէն բան ըրինք, ամէն բան կարգադրեցինք շատ զգուշութեամբ, ժամերով, օրերով վիճաբանելէ վերջ և մինչև անգամ ձեռք դարկինք հրատարակելու «որ-Հնչակ»: բոլորովին նոր ուղղութեամբ և բոլորովին մերժելով ընկերվարական դրութիւնը, որ պատճառ դարձաւ Հայ ժողովրդի շատերու այս գործէն չէզոքանալուն, այդ ամէնը լաւ. պէտք էր ամենամեծ գործին ձեռնարկել. կեդրոն մը ընտրել, այն պիտի կեդրոն մը, որուն պարտքն ըլլար միայն վերհսկողութիւն, ան ու չափաւոր աստիճանով մը: Ինչպե՞ս յաղթեալ արուեստականին և ահա դիմակաւորները երեւան եկան անոնք որոնք կ'ուզէին Նազարբէկեանները տապալել առաջին անգամ գաղտնի նկատողութիւններով: վերջ-վերջ հասկցուեցաւ որ անձնական էր այդ նպատակը, և գործին օգուտը խորհելէն աւելի անձնական շահեր պահանջողներ հին ու անպատիւ անցեալի մը վրայ ազգամիրական վարձագոյրով մը ծածկողներ եղան:

Երկրի մէջ ես շատ վատ լսած էի Ռչոունիի մասին նոյնը լսեցի և արտասահմանի մէջ, բայց ի հարկէ այնքո

որոշ կերպով չէի կարող ըմբռնել այդ ամբաստանութիւններու իսկութիւնը, եթէ անձամբ իրեն հետ չտեսնուէի և անոր ներքին ձգտումները, գաղտնի տրամադրութիւնները աչքի առաջ չուենայի: Աստ՛ւած իմ, ի՛նչ աստիճանի բարոյական հրէշներ ծածկուած են եղեր յեղափոխութեան խաւերուն մէջ. որքան մենք, երկրի ժողովուրդս յափշտակուող ու ըլլացող ենք եղեր երեւոյթէ, առանց կարենալ ըմբռնելու կամ ըմբռնել ջանալու այդ ազգասիրութեան անունով մեր մէջ սպրդող բաղախնդիրներու իսկական նպատակը: Անբարոյական շահատակութիւններ կոյս ու միամիտ ժողովրդի մը մէջ, անտանելի է այս բանը և մենք մէկդի առնելով բնիկ երկրացի գործիչները երբէք պատմութեան մէջ պատուաւոր էջ մը չենք կարող նուիրել այդպիսիներու, որոնց երեսէն ազգը այնքան տուժեց և կը տուժէ տակաւին: Անձնական մեքենայութիւններու վարժուած ջըլլալով բնական էր որ ես չէի կարող ընկերանալ այդ վատ միջոցը իրենց արհեստ ընողներու հետ. իբր մարդ կատարեցի իմ բարոյական պարտականութիւնս, պարզելով իրենց անցելոյն մէջ կուտակցութեան պետերուն խաղցած խաղը Հայ ժողովրդի ձակատագրի հետ: Այդ պարտականութիւնս կատարելու համար դուք ևս արտօնութիւն տուիք ինձ, այժմ իմ կատարելիք դերս լրացաւ և կ'ուզեմ բոլորովին չէզոքանալ ու այլ ևս չընկերանալ այնպիսի մարդոց հետ, որոնք դիմակաւոր դէմքեր ունին և կեղծ խօսքեր իրենց շրթուներէն դուրս գրայ:

Չգիտեմ ի՛նչ պիտի ընեմ ասկէ վերջ, շուտով մնացել եմ, պատրաստի գործ մը չկայ որ պիտի. Ամերիկա կամ ուրիշ տեղ երթալու համար նիւթական միջոց չունիմ, եթէ դուք կարողանայիք իմ այս շուտով գրութեանս մէջ ուղի մը ցոյց տալ, շնորհակալ կ'ըլլայի:

Պ. Լեոն Hartings է իր գործին, չափէն դուրս գոհ է իրմէն նաև master-ը: Ազգապէս մենք շատ պատուաւոր կերպով մեկնեցանք. առանց մէկը վշտացնելու և մինչև իսկ շնորհակալութեան գիր ալ տուինք. բայց ներկայիս այդ ազգապէս չեմ կարող երթալ: Եթէ ուրիշ գործ մը կարողա-

նայիր մատնանիչ ընել կերթայի:  
 Վիճակինն շատ ծանր է. Աստուած վերջը բարի ընէ:  
 Յարգանքներ Զեզ և Տիկնոջ:  
 (Ստորագրուած է) Ա. ՍՈՒՐԷՆ

Կարծես մեծ տակառ մը սառ չուր լեցուցին գլխուս:  
 Ես ո՛չ աչքերուս և ո՛չ ականջներուս չէի հաւատար. . . սա  
 այն Սուրէ՛նն է որ այժմ կեդրոնի անդամ է. . . : Բայց  
 այդ դեռ ոչինչ. . . դեռ աւելի խիստը կար ետքէն:  
 Կարգացուեցաւ Զէյթունի հռչակաւոր ու պաշտելի հե-  
 րոս Աղասիի առ նոյն Սուրէն ուղղեալ մի նամակը, որուն  
 գիրն ու ստորագրութիւնը նմանապէս իսկոյն ճանաչեցի, այդ  
 Աղասիի ձեռագիր նամակն էր:

Սիրելիդ իմ Սուրէն,

Այսօր առի երեկի նամակը և կը փութամ իսկոյն պա-  
 տասխանել. նախ շատ կը ցաւիմ հիւանդութեանդ մասին և  
 կը մաղթեմ շուտ առողջութիւն: Եղբայր. . . ցիներու նա-  
 մակին շուտով կ'ուզէի պատասխանել, բայց ահաւասիկ չորս  
 օրէ ի վեր ես ալ կը գողցնեմ, և այսօր միայն անկողնէս ե-  
 լած եմ. այսօր իրենց ալ կը գրեմ. Զեզ ալ կ'իմացնեմ մեր  
 գործերու վիճակը, այսպիսով կարգադրութիւն մը ըրէք: Մեր  
 մ ե ծ - գ ո ը ծ ի մասին միշտ յոյս կուտաս, բայց ե՛րբ պիտի  
 իրականանայ չեմ գիտեր, Աստուած վերջը բարին կատարէ:

Խորհեցէք ուրեմն այդ տղոց մասին յարմարը, ա՛լ չեմ  
 գիտեր թէ ինչպէս մտածեմ. Ամերիկա երթան գործ կրնա՞ն  
 գտնել. Կիպրոս երթան՝ ի՞նչ պիտի ընեն, կ'ուզեն Փարիզ  
 թող գան. Հայր Եարմթանի բացած ա շ ի Լ Ը մնան, բայց  
 յետո՛յ. . . : Ա՛խ, եղբայր, հոգիս կ'ելլայ, բայց ստակ  
 տուող տղին ալ, ո՛չ թէ ստակին համար հոգին կ'ելլայ, այլ  
 գիշեր ու ցորեկ maitresse-ներուն ետեւէն վազելէն ու մտա-  
 ծեկէն հոգին կ'ելլայ ու ժամանակ չունի ք է օ բ օ Ղ Լ ի ն. . .  
 հասկցա՛ր ու շանալուն պատճառը:

Սիրելիս Սուրէ՛ն, շատ տխրեցայ տխուր նամակիդ վրայ.  
 Բայց հոգ մի ընե՛ր բնաւ. թող մենք խեղճ ու մինակ մնանք,  
 քայց մարուր մնանք, օր մը չէ օր մը նաղարբէկ իր կեղտո-  
 տութիւններուն չափը կ'ստանայ: Աշխարհի մէջ ա՛լ մի մտա-  
 ծէր, թէ ուղիղ մարդ կրնաս գտնել. եթէ անպատճառ կ'ու-  
 զես հատ մը գտնել, առտուան դէմ, պառկած ատենդ ձեռքդ  
 . . . . . հոն միայն ու զի դ մը կը  
 գտնես, որովհետեւ կը հաւատամ Ապահի այն խօսքին որ  
 կ'ըսէ միշտ: «Բան (՛) զ. . . (ուղիղ բան չկայ)»:

Եթէ մեր առջևն ալ երբեմն կը խոնարհին շատերը, մեր  
 ունեցած ոյժերէն ու անուններէն իրենց անձին համար օ-  
 գուտ մը բաղելու մէջ կը կայանայ: Ո՞վ է այսօր ազգ մը-  
 տածողը. ազգը ջուրին տալէն ետքը, ամէնքն յուսահատ սև  
 օձին ալ ու ք. . . իդ ալ կը փաթթուին:

Վաղը պիտի գան. . . . . տղաքն ալ. անոնք մեզ  
 թշնամի պիտի ըլլան, այսօրուրնէ ձեզի բացարձակ ըսեմ. . .  
 բայց ի՞նչ կ'արժէ անոնց թշնամութիւնը, թո՛ղ երթան ըլ-  
 լան, ազգը եթէ խաբուի այդ բոլոր գայլեցու տո՛վալունկ վոհ-  
 մակէն, հակառակ մեր այնքան պարտաճանաչութեան ու  
 զգուշացման, . . . . . լը ի վար, ինչպէս կ'ըսէ դամիկը. իր վիզը  
 իր ձեռքով կտրած կ'ըլլայ:

Ինչ որ ես աւելի կը մտածեմ, այն ալ ձեր նեղ կա-  
 ցութիւնն է. ի՞նչպէս պիտի ընենք. ո՛ւր են Ամերիկայի պօլ-  
 պօլ քուէարկողները եօթն անդամի և երկու ընտանիքի հա-  
 մար: Ա՛խ եղբայր, կարծես թէ մենք իրենց ջիղերէն շատ  
 նուաղ ջիղեր ունինք զգալու համար. . . . . բայց ամենէն  
 գործնական կէտը կը մոռնային. . . . . ինչո՞ւ չեն օգներ:

Սուրէ՛նս, գրած էիր նաև քու երկու հայրենակիցներուդ

(՛) Հերոս Աղասի՛ իր գրութեան մէջ բարոյականի կանոնները  
 բոլորովին գանյ առնելով, իր նամակի մէջ սրիկայաբար,  
 վտիարբար գրած է ամէն տեսակ անբարոյական խօսքեր,  
 զորս հոս գետեղել անվայել համարելով կէտադրութեամբ մի-  
 այն անցած եմ:

համար: պ. \* և \* անուն պարոններու գէնքերու մա-  
սին, անկեղծօրէն կ'ըսեմ, որ կը փափայքէի այդ գործ-  
նական դերին մէջ աջակցել, բայց կը ցաւիմ յայտնել. որ  
միշտ ետեւէս երեք լրտես ունիմ, մին օսմանեան (Ֆրանս-  
սացի մը) երկրորդը Ֆրանսական, երրորդը նազարէկեան:  
Առաջինն ու վերջինը հոգս չէ այնչափ, բայց Ֆրանսականը  
չատ կը հսկէ: Գիրքս հրատարակելէս յետոյ Հանաթօն զայ-  
րացած է ինձ դէմ, սակայն մէկ անգամ բնակութեան թուղթ  
առած լինելնուս համար, չկրցաւ մեզ արտաքսել. բայց  
միշտ կը հետեւին մեզ թեթեւ յանցանքի մը մէջ բռնել. այն-  
պէս որ այդ խնդիրը մեր արտաքսման, գէնքերու գրաւման  
և տղայոց ալ քիչ մը նեղութեան առիթ կուտայ. հետեւա-  
բար կը ցաւիմ որ չեմ կրնար կատարել միայն կրնամ սի-  
րով տեսնել զիրենք, եթէ գալու լինին:

Սուրէնս, վերջին խօսքս ալ ըսեմ, երբէք մի մտածել  
այս ու այն ա ս է կ օ ս է ի ն, եթէ սա գործը չյաջողե-  
ցաւ, նազարէկը . . . . նեց մեր մարն ալ իր մարն ալ  
իսկ եթէ յաջողեցանք, մենք . . . . ցինք իր կնիկը: (Աս անու-  
կտորները ուրիշներուն մի կարդար): Եթէ չեղաւ, ոչ մէկ  
ալ ք. . . մը չկրնար ուտել. գոնէ կ'ունենանք մաքուր ա-  
նուն, մաքուր խիղճ և կ ա ր և ո ր մ ա ր գ ո ց վ ս տ ա  
հ ու թ ի բ ն ը:

Պիտի ըսես, հապա աղղը: Ան տւ կ'երևայ թէ դեռ  
խելքը գլուխը եկած չէ 130,000 կատորածով, մինչև ոչ  
խելքը գլուխը գայ, կը ջարդուի ու կը ջարդուի. մինչև ոչ  
հայոց կնիկները մնան թրքաց հարէմներուն մէջ և Եւրոպա  
կամ Ամերիկա գաղթած. Լ ա կ ու ա ն ե ը ն ա Լ ի ո Ֆ ա ծ  
բ ո ղ ե ը ո շ գ ի ը կ ը ս ա տ կ ի ն:

Պինդ կը համբուրեմ քեզ և ընկերները: . . . . ի մա-  
սին շուտ գրէ, ի՞նչ եղաւ:

(Ստորագրած է) ԱՂԱՍԻ

Յարգելի ընթերցողներ:

Իսկապէս գրական ամէն բարոյական սկզբունքներ

դէմ է այսպիսի աղտոտ և լյտի նամակ մը տպագրութեան  
յանձնել, բայց ստիպուած էի ընել որ ժողովրդի աչքը  
բացուի որպէսզի ամէն մէկ պատահած հրէջը չհերոսացը-  
նէ. շխաբուի անոր արտաքինով միայն և քիչ մ'ալ աչ-  
խատի թափանցել անոր ներքին ախարհը, ու դէպի անոր  
ձգտումները:

Երբ Սուրէնի նամակը կարդացին, ես այնքան ալ չը  
յուզուեցայ, բայց երբ «Ձէյթունի հերոս» Աղասիի նա-  
մակը կարդացին, երբ «հերոս» անուն վայելող անձի մը  
մտերիմի մը ուղղած նամակին մէջ տեսայ այնքան ան-  
բարոյական արհամարհանք մը դէպի ազգը, դէպի անոր  
50,000 որբերը. այն մերկ ու անպաշտպան մակտին, որ  
այսօր օտարի ողորմութիւնով միայն կ'ապրի, այն ատեն  
ալ արցունքներս չկրցայ զսպել և ներկաներու առաջ սկսայ  
հեղեղել դառն արտասուքներս: Ուրեմն ա՛յս է հերոսնիս  
կը մտածէի ես, որ այժմ կը մտածէ միայն «պատուաւոր  
անձերու համակրութիւն և վստահութիւն» ունենալու մա-  
սին. որ նիւթական միջոցներ ձեռք բերէ, որ իր զգուելի  
գոյութիւնը միայն ապահովէ Փարիզի գեղանիններու հետ . . .  
ափսոս, ափսոս քեզ խեղճ ու անպաշտպան ժողովուրդ,  
որ ատանկ հրէջ մը, ատանկ անբարոյական մը հերոս կ'ա-  
նուանես. մարդ՝ մը որ ո՛չ միայն յեղափոխական է, այլ  
նոյն իսկ հայ անուանելու արժանի չէ բնաւ . . . : Ոյս ա-  
մէնը տեսնելով միթէ՞ կարելի է մարդու մը դառն կսկծա-  
նօք չզգածուիլ և Երէմիայի նման ողբ չկարդալ:

Արքիարի աղտոտ անձնաւորութեան և այդ երկու նա-  
մակներու պատճառով Դրօշակեանները ըստ իս իրաւունք  
ունէին Միութեան համար նախնական որ և է բանակցու-  
թեան չմտնելու. պէտք էր անպատճառ վերնային այդ ար-  
գելքները, երկու կողմէն ալ լիազօր պատգամաւորներ ըն-  
տրուէին և օր առաջ բանակցութեան մտնէին:

Եւ որովհետև մեր կատարած բանակցութիւններու ժա-  
մանակ՝ խնդրոյն օրինական ձև տալու համար հարկ էր ար-  
ձանագրութիւն մը ունենալ, գրուեցաւ երկու օրինակ ա-

ատենագրութիւն, որոնց մէկն իմ և միւսը խմբագրութեան  
ըզմ քննաց:

Ժընէվ, 1/13 Յունիս 1897

## ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներքև ստորագրեալները Հ. Յ. Դաշնակցութեան օրգանին «Դրօշակ»ի խմբագրութեան ներկայացուցիչները և Յ. Կ. Ճանկիւլեան, որ թէև սկզբան շնչակեան վերակազմեալ վարչութեան կողմէ պաշտօնապէս առաջարկուած և նախնական բանակցութիւններ կատարելու Դաշնակցութեան հետ, բայց պաշտօնական յարաբերութիւնը հնարաւոր գատուած չըլլալուն ստորև յառաջ բերուած պատճառներով իբր մասնաւոր միջնորդ մը ներկայացած էր դարձեալ նոյն դատարարութեամբ, 1897 Յունիս 1/13 կիրակի նիստ գումարեցին «Դրօշակ»ի խմբագրատան մէջ, ամփոփելու համար նախորդ երեք օրուան երկուստեք փոխանակուած խօսակցութիւնները:

Այդ բանակցութիւններն ակներև ապացուցին, որ Դաշնակցութեան Միութեան խնդրին անտարբեր չըլլալ զատ՝ ընդհակառակը միշտ խորհած է և այժմ ալ կը խորհի գործնական միջոցներ գտնել այդ մեծ գործն ի գլուհանելու: Եւ Դաշնակցութեան մինչև հիմայ բռնած գգուշաւոր դիրքը Միութեան խնդրին նորոգ յուզուելէն ետքը կը բացատրուի միայն յետագայ պատճառներով, որոնք բարձու միայն հնարաւոր պիտի ընէ բանակցութեան ըկզբնաւորութիւն մը վերակազմեալ վարչութեան և Դաշնակցութեան միջև:

Ա. անհրաժեշտ է իսպառ հեռացնել Արփիար Արփիարեանը թէ՛ Հնչակեան կեդր. վարչութենէն և թէ՛ կուսակցութենէն, քանի որ այդ անձը նկատուած է իբր դաշնան ամբողջ Դաշնակցութեան կողմէ:

Բ. նկատելով որ Դաշնակցութիւնը խիստ բնաւ պատճառներ ունի կասկածելու նորակազմ վարչութեան

և կամ անոր մօտիկ շրջանակներու մէջ գտնուող կարգ մը անձերու անցեալին և նոյն իսկ անկեղծութեան մասին— բան մը որ փաստերով ապացուցուեցաւ պ. Յ. Կ. Ճանկիւլեանին—, ու հետեւաբար, այդ վարչութեան անունով կատարուելիք բանակցութիւնները պիտի չը կարենան երաշխաւորել այն անկեղծ, անաչառ և բանգէտ ըմբռնումը գործին, որ յաւէտ փափաքելի է Դաշնակցութեան, այդ փափուկ և կնճռոտ խնդիրը գործնական լուծումի մը յանգել տալու համար: Անհրաժեշտ տեսնուեցաւ որ Հնչակեան վերակազմեալ վարչութեան կողմէ կարգուելիք լիազօր պատգամաւորները ընտրուին այն անձերու մէջէն, որոնք կը վայելն նաև Դաշնակցութեան վստահութիւնը. ուստի և անոնց անունները նախապէս պէտք է հաղորդուին «Դրօշակ»ի խմբագրութեան:

Ծանօթ.— «Դրօշակ»ի խմբագրութիւնն ալ իր կողմէն պատրաստ է հաղորդելու իր լիազօր պատգամաւորներուն անունները. եթէ այդ բանը պահանջուի Հնչակեան վերակազմեալ վարչութենէն:

Խմբագրութեան ներկայացուցիչներ  
Ռոստոմ, Վահագ, Արմէն Կարօ,

Յ. Կ. Ճանկիւլեան

Իմ գործս արդէն վերջացած էր և իմ սիրտս ուրախութեամբ լեցուած, որ այլ ևս Միութեան մեծ գործը իր ուղիղ ճամբուն վրայ ինկաւ և աղտոտ ու անբարոյական անձեր այլ ևս չեն գտներ ո՛ր և ասպարէզ սուրբ գործին մէջ: Բայց բանակցութիւնները դեռ ևս կարող էին քիչ մը երկարել և ժողովուրդը՝ վրայ այդ բանը գէշ ազդեցութիւն մը պիտի թողէր, ուստի խորհեցայ հայ ժողովուրդին հետեւեալ յուսատու «բաց նամակ»ը խմբագրել, որ պէտք էր հրատարակուէր «Մարտ»ի և «Դրօշակ»ի մէջ:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՒՆ

Սիրելի Հայրենակիցներ  
Ամիսներէ ի վեր հետամուտ եղայ թէ ի՞նչ արգելքներ

ատենագրութիւն, որոնց մէկն իմ և միւսը խմբագրութեան  
քով մնաց:

Ժընէվ, 1/13 Յունիս 1897

## ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներքև ստորագրեալները Հ. Յ. Դաշնակցութեան օրգանին «Դրօշակ» ի խմբագրութեան ներկայացուցիչները և Յ. Կ. Ճանկիւլեան, որ թէև սկզբան շնչակեան վերակազմեալ վարչութեան կողմէ պաշտօնապէս առաջարկուած և նախնական բանակցութիւններ կատարելու Դաշնակցութեան հետ, բայց պաշտօնական յարաբերութիւնը հնարաւոր դատուած չըլլալուն ստորեւ յառաջ բերուած պատճառներով իբր մասնաւոր միջնորդ մը ներկայացած էր դարձեալ նոյն դիտարութեամբ, 1897 Յունիս 1/13 կիրակի նիստ գումարեցին «Դրօշակ» ի խմբագրատան մէջ, ամփոփելու համար նախորդ երեք օրուան երկուստեք փոխանակուած խօսակցութիւնները:

Այդ բանակցութիւններն ակներեւ ապացուցին, որ Դաշնակցութեան Միութեան խնդրին անտարբեր ջըլլալ զատ՝ ընդհակառակը միշտ խորհած է և այժմ ալ կը խորհի գործնական միջոցներ գտնել այդ մեծ գործն ի գլուհանելու: Եւ Դաշնակցութեան մինչև հիմայ բռնած զգուշաւոր դիրքը Միութեան խնդրին նորոգ յուզուելէն ետք կը բացատրուի միայն յետագայ պատճառներով, որոնք բարձու միայն հնարաւոր պիտի ընէ բանակցութեան ըկզբնաւորութիւն մը վերակազմեալ վարչութեան և Դաշնակցութեան միջև:

Ա. անհրաժեշտ է խաբար հեռացնել Արփիար Արփիարեանը թէ՛ Հնչակեան կեդր. վարչութենէն և թէ՛ կոսակցութենէն, բանի որ այդ անձը նկատուած է իբր դաւաճան ամբողջ Դաշնակցութեան կողմէ:

Բ. նկատելով որ Դաշնակցութիւնը խիստ բանաւ պատճառներ ունի կատարելու նորակազմ վարչութեան

և կամ անոր մօտիկ շրջանակներու մէջ գտնուող կարգ մը անձերու անցեալին և նոյն իսկ անկեղծութեան մասին— բան մը որ փաստերով ապացուցուեցաւ պ. Յ. Կ. Ճանկիւլեանին—, ու հետեւաբար, այդ վարչութեան անունով կատարուելիք բանակցութիւնները պիտի չը կարենան երաշխաւորել այն անկեղծ, անաչառ և բանգէտ ըմբռնումը գործին, որ յաւէտ փափաքելի է Դաշնակցութեան, այդ փափուկ և կնճռոտ խնդիրը գործնական լուծումի մը յանգել տալու համար: Անհրաժեշտ տեսնուեցաւ որ Հնչակեան վերակազմեալ վարչութեան կողմէ կարգելիք լիազօր պատգամաւորները ընտրուին այն անձերու մէջէն, որոնք կը վայելն նաև Դաշնակցութեան վստահութիւնը. ուստի և անոնց անունները նախապէս պէտք է հաղորդուին «Դրօշակ» ի խմբագրութեան:

Ծանօթ.— «Դրօշակ» ի խմբագրութիւնն ալ իր կողմէն պատրաստ է հաղորդելու իր լիազօր պատգամաւորներուն անունները. եթէ այդ բանը պահանջուի Հնչակեան վերակազմեալ վարչութենէն:

Խմբագրութեան ներկայացուցիչներ  
Ռոստոմ, Վահագ, Արմէն Կարօ,

Յ. Կ. Ճանկիւլեան

Իմ գործս արդէն վերջացած էր և իմ սիրտս ուրախութեամբ լեցուած, որ այլ ևս Միութեան մեծ գործը իր ուղիղ ճամբուն վրայ ինկաւ և աղտոտ ու անբարոյական անձեր այլ ևս չեն գտներ ո՛ր և ասպարէզ սուրբ գործին մէջ: Բայց բանակցութիւնները դեռ ևս կարող էին քիչ մը երկարել և ժողովուրդը՝ վրայ այդ բանը գէշ ազդեցութիւն մը պիտի թողէր, ուստի խորհեցայ հայ ժողովուրդին հետեւեալ յուսատու «բաց նամակ»ը խմբագրել, որ պէտք էր հրատարակուէր «Մարտի և «Դրօշակ» ի մէջ:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրելի Հայրենակիցներ

Ամիսներէ ի վեր հետամուտ եղայ թէ ի՞նչ արգելքներ



կրնան ըլլալ. որ յետածգէին ժողովրդի այս ձգնածամի մէջ կենսական եղած մի ու թե ան խնդիրը: Յեղափոխութեան ամէն դասակարգերու հետ տեսնուեցայ, որոնց վերջինն էր «Դրօշակ»ի խմբագրութիւնը, որու հետ երկար տեսակցութիւն մը ունեցայ ժընէվի մէջ. հոս իմացայ և իրաւացի գտայ գլխաւոր պատճառները, որոնք արգելք եղած էին Միութեան խնդրին համար կատարուելիք բանակցութեանց: Արգելքներ՝ որոնց վերնալուսն մասին ջանքեր պիտի լինին: Ուստի կը փութամ հրատարակաւ ծանուցանել հայ հասարակութեան, թէ արգելքները վերնալէն վերջ, Հնչակեան վերակազմեալ վարչութեան և Դաշնակցական կուսակցութեանց կողմէն ընտրուած լիազօր պատգամաւորներու բանակցութիւնը քիչ ատենէն պիտի սկսի, ժողովուրդը իրականացած պիտի տեսնէ իւր բաղձալի Միութիւնը:

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԻԼԵԱՆ

15 Յունիս 1897, ժընէվ

ՅՈՒՆԻՍ 17 ԼՈՆՏՈՆ

Քաղցր տպաւորութեան և լաւ յոյսերու ազդեցութեան տակ մեկնեցայ ժընէվէն. «Դրօշակ»ի ներկայացուցիչները խոստացան, որ եթէ երբէք իրենց մէջ ալ աղտոտներ մատնան: ըլլան, անմիջապէս կ'արտաքսուին կուսակցութենէն: Եւ յերաւի, Միութենէ կը վարնան միայն աղտոտները, որովհետեւ Միութեան մէջ այդ աղտոտները տեղ չեն ունենար . . . :

Ժընէվ գնալէս առաջ արդէն Արփիար խոստացած էր հեռանալ կուսակցութենէն, եթէ իր անձն ըլլայ խանգարողը. ուրեմն առ ըմացած էր իմ կարծիքով: Կը մնար Ս. Ի և Աղասիի խնդիրը, որոնց հրէշային աղտոտութիւնները հաստատող ինքնագիր նամակները կային, հետեւապէս կը մտածէի ես, թէ՛ որքան ալ հերոս ըլլան ատոնք, կուսակցութեան մէջ չեն կարող մնալ երբէք: Այս տեսակ քաղցր մտածմունքներ կ'օրօրէին զիս երկաթուղիի մէջ և ես այլ ևս համոզուած էի, որ քիչ ատենէն ամէնուս բաղձացեալ Մի-

ութիւնը պիտի իրականանար և յեղափոխական գործը նոր ու լայն ծաւալ մը պիտի առնէր, որով մեր բազմատանջ Հայրենիքի վրէժը լուծելու ու անոր վէրքերուն սպեղանի դնելու կարող պիտի ըլլայինք . . . Ինչ քաղցր երազներ:

Լոնտոն հասնելուս պէս՝ առաջին անգամ Արփիարը հետաքրքրուելով իսկոյն լսել ուզեց բանակցութեանց արդիւնքը: «Գող, սիրտը դող» կ'ըսէ առածը: Կը ցաւիմ ըսելու, — ըսի ես, — որ ձեր կասկածածին պէս եղաւ, պատճառը ձեր անձը կը նկատեն:

Արփիար նախ յանձն չառաւ հրաժարիլ. ընկերական ատեան և այլն պահանջելով: Ես ստիպեցի որոշ բան մը ըսել, որ միւս օր գրեմ «Դրօշակ»ի խմբագրութեան: Վերջապէս Արփիար յանձն առաւ հրաժարիլ ինչպէս որ ժընէվ երթալէս առաջ խոստացած էր. և ինձ յանձնուեցաւ միւս օրը գրել առ ժընէվ: Եւ գրեցի:

Ժընէվ մեկնելուս երկրորդ օրը, գրաւար պարոն Հրանտը Արփիարին կ'ըսէ, որ պ. Ճանկիւլեան պիտի յաջողի այս գործին մէջ: Արփիար կը կատղի լսելով.

— Այո՛, Ճանկիւլեան անկեղծօրէն կը ձգտի Միութեան, բայց չպիտի յաջողի, որովհետեւ մենք Միութեան պէտք չունինք և չենք ալ ուզեր:

Ժընէվ եղած ատենս Արփիար կ'սկսի ճնշում բանեցնել պ. Տամատեանի վրայ, ստիպելով որ կուսակցութեան տառերը դնէ իր տրամադրութեան տակ, որպէսզի ինք իր հաւելոյն «Նոր Կեանք» անունով հակայեղափոխական թերթ մը հանէ: Պ. Տամատեան կը հակառակի, բոլոր ճնշումներուն կը դիմադրէ, մինչև որ ես Լոնտոն կը հասնիմ:

Արփիարն իբր հրաժարեալ նկատելով, իմ «բաց նամակ»ի պատճէնը ցոյց տուի միայն պ. Տամատեանի, որ գանձազան դիտողութիւններ ըրաւ այդ նամակի վրայ, բայց ի վերջոյ ինք խմբագրեց մի նոր «բաց նամակ» որ պիտի հրատարակուէր «Մարտ»ի և «Դրօշակ»ի մէջ: Այս ալ ըսեմ, որ այդ «բաց նամակ»ի բնագիրը Արփիար գողացաւ կեղրոնի սենեակէն, պ. Տամատեանի հետ ընդ երկուսն էլ

կրնան ըլլալ. որ յետաձգէին ժողովրդի այս ճգնաժամի մէջ կենսական եղած մի ու թ ե ա ն խնդիրը: Յեղափոխութեան ամէն դասակարգերու հետ տեսնուեցայ, որոնց վերջինն էր «Դրօշակ»ի խմբագրութիւնը, որու հետ երկար տեսակցութիւն մը ունեցայ ժընէվի մէջ. հոս իմացայ և իրաւացի գտայ զլիաւոր պատճառները, որոնք արգելք եղած էին Միութեան խնդրին համար կատարուելիք բանակցութեանց: Արգելքներ՝ որոնց վերնալուսն մասին ջանքեր պիտի լինին: Ուստի կը փութամ հրատարակաւ ծանուցանել հայ հասարակութեան, թէ արգելքները վերնալէս վերջ, Հնչակեան վերակազմեալ վարչութեան և Դաշնակցական կուսակցութեանց կողմէն ընտրուած լիազօր պատգամաւորներու բանակցութիւնը քիչ ատենէն պիտի սկսի, ժողովուրդը իրականացած պիտի տեսնէ իւր բաղձալի Միութիւնը:

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

15 Յունիս 1897, ժընէվ

ՅՈՒՆԻՍ 17 ԼՈՆՏՈՆ

Դաղցր տպաւորութեան և լաւ յոյսերու ազդեցութեան տակ մեկնեցայ ժընէվէն. «Դրօշակ»ի ներկայացուցիչները խոստացան, որ եթէ երբէք իրենց մէջ ալ աղտոտներ մտնան, չըլան, անմիջապէս կ'արտաքսուին կուսակցութենէն: Եւ յիրաւի, Միութենէ կը վախնան միայն աղտոտները, որովհետեւ Միութեան մէջ այդ աղտոտները տեղ չեն ունենար . . . :

ժընէվ գնալէս առաջ արդէն Արփիար խոստացած էր հեռանալ կուսակցութենէն, եթէ իր անձն ըլլայ խանգարող. ուրեմն ատ ըմբացած էր իմ կարծիքով: Կը մնար Ս. Ի և Աղասիի խնդիրը, որոնց հրէշային աղտոտութիւնները հաստատու ինքնագիր նամակները կային, հետեապէս կը մտածէի ես, թէ՛ որքան ալ հերոս ըլլան ատոնք, կուսակցութեան մէջ չեն կարող մնալ երբէք: Այս տեսակ քաղցր մըտածմունքներ կ'օրօրէին զիս երկաթուղիի մէջ և ես այլ ևս համոզուած էի, որ քիչ ատենէն ամէնուս բաղձացեալ Մի-

ութիւնը պիտի իրականանար և յեղափոխական գործը նոր ու լայն ծաւալ մը պիտի առնէր, որով մեր բազմատանջ Հայրենիքի վրէժը լուծելու ու անոր վէրքերուն սպեղանի դնելու կարող պիտի ըլլայինք . . . Ինչ քաղցր երազներ:

Լոնտոն հասնելուս պէս՝ առաջին անգամ Արփիարը հետաքրքրուելով իսկոյն լսել ուզեց բանակցութեանց արդիւնքը: «Դող, սիրտը դող» կ'ըսէ առածը: Կը ցաւիմ ըսելու, — ըսի ես, — որ ձեր կասկածածին պէս եղաւ, պատճառը ձեր անձը կը նկատեն:

Արփիար նախ յանձն չառաւ հրատարիլ. ընկերական ատեան և այլն պահանջելով: Ես ստիպեցի որոշ բան մը ըսել, որ միւս օր գրեմ «Դրօշակ»ի խմբագրութեան: Վերջապէս Արփիար յանձն առաւ հրատարիլ ինչպէս որ ժընէվ երթալէս առաջ խոստացած էր. և ինձ յանձնուեցաւ միւս օրը գրել ատ ժընէվ: Եւ գրեցի:

ժընէվ մեկնելուս երկրորդ օրը, գրաչար պարոն Հրանտը Արփիարին կ'ըսէ, որ պ. Ճանկիւլեան պիտի յաջողի այս գործին մէջ: Արփիար կը կատղի ըսելով.

— Այո՛, Ճանկիւլեան անկեղծօրէն կը ձգտի Միութեան, բայց չպիտի յաջողի, որովհետեւ մենք Միութեան պէտք չունինք և չենք ալ ուզեր:

ժընէվ եղած ատենս Արփիար կ'սկսի ճնշում բանեցնել պ. Տամատեանի վրայ, ստիպելով որ կուսակցութեան տառերը դնէ իր տրամադրութեան տակ, որպէսզի ինք իր հաւուսին «Նոր Կեանք» անունով հակայեղափոխական թերթ մը հանէ: Պ. Տամատեան կը հակառակի, բոլոր ճնշումներուն կը դիմադրէ, մինչև որ ես Լոնտոն կը հասնիմ:

Արփիարն իբր հրատարեալ նկատելով, իմ «բաց նամակ»ի պատճէնը ցոյց տուի միայն պ. Տամատեանի, որ զանազան դիտողութիւններ ըրաւ այդ նամակի վրայ, բայց ի վերջոյ ինք խմբագրեց մի նոր «բաց նամակ» որ պիտի հրատարակուէր «Մարտ»ի և «Դրօշակ»ի մէջ: Այս ալ ըսեմ, որ այդ «բաց նամակ»ի բնագիրը Արփիար գողացաւ կեղրոնի սենեակէն. պ. Տամատեանի հետ ընդ երկար փնտռելով կու-

դովին մէջ կտորները հաւաքեցինք (Տամատեանի գիր) և քովէ քով դնելով նորէն վերակազմեցինք, ահա՛ պատճէնը:

**ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ**

Ամիսներէ ի վեր հետամուտ եղայ իմանալ, թէ ի՞նչ արգելքներ կրնան ըլլալ, որ յետաձգած են ժողովրդի այս ճեղք-նաժամի մէջ կենսական եղած Միութեան խնդիրը:

Յեղափոխական ամէն դասակարգերու հետ տեսնուեցայ, որոնց վերջինն էր «Դրօշակ»ի խմբագրութիւնը, որուն հետ երկար տեսակցութիւն մը ունեցայ ժընէվի մէջ: Տեսայ որ թէև բաւական լուրջ գծաւարութիւններ կան, որք արգելք հանդիսացած են կատարուելիք բանակցութեանց, բայց միևնոյն ժամանակ երկու կողմէն ալ Միութեան փափաքն անկեղծ է և հաշտարար տրամադրութիւն մը կայ մէջտեղն եղած գծաւարութիւնները վերցնելու:

Ուստի կը փութամ հրապարակաւ ծանուցանել հայ հասարակութեան, թէ գծաւարութիւնները վերնալէն վերջը Հնչակեան վերակազմեալ վարչութեան և Դաշնակցութեան կողմէն ընտրուած լիազօր պագամաւորներու բանակցութեամբ յուսալի է, որ քիչ ատենէն ժողովուրդը իրականացած պիտի տեսնէ Միութիւնը, որուն կը փափաքի:

Ժընև 15 Յունիս 1897

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

Այս նամակը ժընէվ ղրկեցի, բայց փոխուած ըլլալու համար չի հրատարակեցին... Այս բոլոր նախնական բանակցութիւնները ներքին խնդիր ըլլալով, իմացուցի պ. Տամատեանին, հարկ տեսայ և համառօտակի գրեցի նաև Մկրտիչեանի, իմացնելով իրեն Արփիարի հեռացման խնդիրը, Սուրէնի և Աղասիի նամակներու գոյութիւնը և ատենագրութեան երկու կողմէն ստորագրուելը և այլն: Տամատեանն նոյնը կը գրէ իրեն. միայն կ'աւելցնէ նաև «բաց նամակ» մը հրատարակելու դիտաւորութիւնս:

Լ. Մկրտիչեանի ջիղերուն կը դպչի, երբ կը լսէ իր նմա ճիգուիթ և խաբեբայ Արփիարի հրաժարելու խնդիրը, իսկոյ իր «երիցագոյն անդամ» յօրջորջած Ռչտունին և հացկատ

Ատոմ Ասլանեան գործիք դարձնելով իր աղտոտ ձեռքերուն մէջ, կը խմբագրէ հետեւեալ լիտի ու ստոր նամակը. Ռչտունիին իբր նամակին հեղինակ ստորագրել կուտայ, իսկ Ատոմ Ասլանեան իբր համակարծիք «Դրօշակ»ի խմբագրութեան կը գրկէ, առանց ինծի գծագրութիւն կամ այլ բան մը գրելու: Ահա այդ հրաշալի նամակին պատճէնն ալ:

Աղէքսանդրիա, 29/6/1897,

«Դրօշակ»ի խմբագրութեան:

ի ԺԸՆԷՎ,

Մեծարոյ Պարոններ,

Մեծ ցաւ է ինձ համար և դժբաղդութիւն միանգամայն, որ փոխանակ աղէկ օրերու և մխիթարական լուրերու տպաւորութեան տակ, ես ալ իբրև մի անհատ և յեղափոխական կեանքին մէջ իբրև մի խոնարհ ծառայող ընկեր, իմ խնդակցութիւնս կամ բարեմաղթութիւններս արտայայտել կարենալու, շատ տխուր և ամենավատ երևոյթներու առթիւ, ձեր հասցէին սոյն առաջին և թերևս վերջին դիտողագիրս զրկելու հարկին մէջ կը գտնուիմ:

Թերևս լաւ է կ'ըլլաք որ Հնչակեան կուսակցութեան վերջին անցքերու առթիւ, մեր Լոնտոն գտնուած պահուն, ընդհ. ժողովոյ զխաւոր զբաղումը և խնդրոյ առարկայ եղած է Միութեան հարցը, որուն ամենաջերմ կուսակիցը և պաշտպանը հանդիսացած եմ: Այս մասին կարող են վկայել ընկերներս և ընդհ. ժողովոյ ատենագրութիւնները. եթէ երբէք պէտք ունենաք. բայց գոնէ այսքան կարող էք վստահաբար գիտնալ, որ նոյն ատեն, բանակցութեան առթիւ, ձեր հասցէին ուղղուած նամակներու «Ալֆարի» ստորագրութիւնը ինձ կը պատկանէր. մինչև որ մեր վարչութիւնը վերջնականապէս կազմակերպուեցաւ. և ես ալ նոյն քաղցր տպաւորութեան տակ մեկնեցայ Լոնտոնէն, մտածելով թէ քիչ օրէն ամէն խոչնդոտ պիտի բարձուի և միացեալ ոյժերով, գոնէ չմեռած, նորէն գործելու պիտի սկսինք, յօգուտ և յանուն ընդհանուրի դասին ու շահուն: Անմիջապէս ամէն կողմ պաշտօնական ու

անպաշտօն, ուղղակի և անուղղակի այս մտօք հրահանգներ  
 զրկուեցան մեր կուսակցութեան կողմէ. որպէսզի մեր ըն-  
 կերները միշտ սիրով վարուին մեր Դաշնակցական եղբայրնե-  
 րուն հետ, երբէք Նազարբէկի օրով եղածի նման խեթիւ չը  
 նային անոնց ու չը հակառակին. այլ պատրաստուին թե-  
 րեւս մի օր բոլորովին զիրար գրկելու, համբուրելու, և որ  
 ամենէ ցանկալին է, ձեռք ձեռքի տուած աշխատելու . . .  
 բայց մեզք որ մեր բոլոր յոյսերը յօդս ցնդեցան և վերջնա-  
 կանապէս համոզուած ենք այսօր որ գործին մէջ անկեղծու-  
 թիւն չկայ, անշարնդրութիւն չկայ, և մէկ խօսքով ժողո-  
 վրդին ամենագառն վիճակը նկատողութեան առնել ու դար-  
 մանել ուղղ չկայ, վասնզի ձեր մինչև այսօր հետեւած ուղ-  
 ղութիւնը ցոյց կուտայ թէ, դուք ո՛չ թէ կը խորհիք Միու-  
 թեան, Համերաշխութեան և Յեղափոխական գործունէու-  
 թեան կանոնաւոր ուղղութեան մասին, այլ մի միայն ձեր  
 փառասիրական ձգտումների մասին, և որ ամէնէն ցաւալին  
 է, դուք ձեր նպատակին հասնելու համար կ'ընտրէք և կ'ըն-  
 դունիք ամէն տեսակ անազնիւ միջոցները:

Ըսածս հաստատելու պէտք չունիմ մեծ աշխատանք կամ  
 ճիգեր թափելու. ապացոյցները շատ պարզ ու բացորոշ են:  
 Երբ առաջին անգամ Նազարբէկի խնդիրը իմացաք, ձեր սրբ-  
 տերը հրճուանքով լեցուն՝ թերեւս կը մտածէիք թէ Նազար-  
 բէկի խայտառակ անկումը Հնչակեան կուսակցութեան վերջ-  
 նական քայքայումը առաջ կը բերէ և հրապարակը ձեզ կը  
 մնայ. հետեւաբար սկսաք ամէն կողմ անուղղակի հրահանգ-  
 ներով պատրաստել. որպէսզի ամէն ջանք ի գործ դնեն Հըն-  
 չակեանները հաւատքի բերել, կամ ձեր բառով կ'ուլ տալ.  
 և այսպէս ամէն բան վերջանայ: Ձեր գործակալները ամէն  
 կողմ սկսան մէկ կողմէն հարուածել Նազարբէկին, որ ժամ  
 առաջ հոգին փչէ և միւս կողմէ անպատուել ու բամբասել  
 Հնչ. կարեւոր գործիչները, որպէսզի ասոնք ալ ոյժ չունե-  
 նան Հնչ. կուսակցութիւնը վերակազմելու: Դուք ձեր գա-  
 նազան տեղերի կօմիթէների «Թուղթիկ»ներով խայտառա-  
 կութիւն չը մնաց, որ չը թափէիք Հնչակեանների գլխին:

Եւ երբ մեր կողմանէ դիտողութիւն մը տեղի ունենար և բա-  
 ցատրութիւն պահանջուէր մի Դաշնակցական պարոնէ, պա-  
 տասխանը շատ պարզ էր, բայց ծիծաղելի էր: «Ախր ընդհ.  
 Դաշնակցութիւնը ինչո՞վ է մեղաւոր, այսինչ տեղի մասնաւոր  
 կօմիտէի համար. դա իրենց տեղական կարծիքն է, լաւ էր  
 որ չանէին, բայց մենք նրանց գործին միջամտելու իրաւունք  
 չունինք և այլն և այլն»: Եւ իրօք ալ այնպէս է արտաքին  
 երևոյթով, ո՛չ ապաքէն ապակեգրոնացականներ էք . . . :  
 Դուք տեսաք որ այս միջոցներն ալ չը զօրեցին և այն ատեն  
 դիմեցիք ուրիշ միջոցների: Այն մի քանի Հնչակեանները, ու-  
 րոնք զանազան պատճառներով մենէ արտաքսուած կամ հե-  
 առցած էին, ատոնք ձեռք առիք իբրև բարի պտուղ զաւակ-  
 ներ ու անոնց միջոցաւ կուուեցաք մեզ հետ. կարծելով թէ  
 այս անգամ կը յաջողիք, բայց դարձեալ անօգուտ. վասնզի  
 գոնէ դուք կարող էք խոստովանիլ որ մենք սկիզբէն ի վեր  
 ո՛չ Նազարբէկի թշնամանք ու հայհոյանքներուն պատաս-  
 խանեցիք նոյն ոճով և չ'ալ ձեր ընտրած միջոցներով, այլ  
 գլուխնիս կախած մեր գործերուն հետ զբաղուեցանք ամե-  
 նայն կանոնաւորութեամբ և այսպէս ալ կը շարունակենք:  
 Իսկ այժմ խնդիրը տարբեր կերպարանք ստացաւ: Շատ ցա-  
 ւով իմացանք որ դուք այս անգամ ամենէն կտրուկ ճանա-  
 պարհէն կ'երթաք քաղաքը ն երսէն առնել . . . :  
 Եթէ իրականանայ գէշ խորհուրդ չէ, բայց դարձեալ մի՛ յու-  
 սաք. ինչ որ ալ պատահի, ձեր այս անգամի ջանքերն ալ ի  
 գերև կ'իլեն: Դուք այս անգամ մեր ընկերներէն մին, այն  
 է՝ ճանկիւլեանը ձգած էք ձեր թակարդը. քաջ ճանչնալով  
 ու գիտնալով անոր տկար կողմերը, խելքը ու դատելու կա-  
 րողութիւնը. ի նկատի առած էք միայն անոր անունը և ան-  
 կէ ուղած էք օգտուիլ, ստորագրել տուած էք անոր խայտա-  
 ռակ մի թուղթ, անտեղի, խաղախ. չինձու ու երեւակայա-  
 կան տօքումաններու վրայ չափուած և մտադիր էք «Իրօ-  
 շակ»ի միջոցով հրատարակել և վերջնական հարուած իջեցը-  
 նել Հնչակեան կուսակցութեան գլխուն, ասպարէզին վեր-  
 ջնականապէս տ'ըրանալու համար: Բայց հիմակուց կը վրս-

տաճացնեմ ձեզ որ դարձեալ չը պիտի յաջողիք: Ուստի պարուններ, յանուն ժողովրդի օգտին կը խնդրեմ ու կ'ըզուզեցնեմ ձեզ, որ այդ բան չընէք. հակառակ պարագային արդիւնքը ուրիշ բան չպիտի ըլլայ. բայց եթէ մենք ալ պիտի ստիպուինք այս անգամ մեր լուծութիւնը խզելով հրապարակ նետուիլ և յայտնել ձեր այսքան տարուան գործունէութիւնն ու գործիչների մասին այնքան իրականութիւններ ու անհերքելի տօքումաններ որ շատ սուղի պիտի նստի ձեզի համար: Իսկ թէ հետեւանքն ինչ կ'ըլլայ, այդ ամէնը այժմէն գուշակել կարելի չէ և որուն ամբողջ պատասխանատուութիւնը կը մնայ ձեր վրայ: Միայն այսքանին համար կարող էք ապահով ըլլալ որ եթէ ձանկիւլեան ալ իբրև անկեղծ մարդ իր սխալը չուղղէ. նա ալ կը գնայ միտնելու իր միւս ընկած ընկերներու շարքին ու Նաղարբէկի նման իր անցեալ ու շատ անձուկ փառքը ողբալու, դուք ալ ձեր կարգին: Մօսքիս ու անկեղծութեանս մասին պէտք է վստահ ըլլաք:

Հնչ. կուսակցութեան անդամ  
Ա. ՌՇՏՈՒՆԻ

Ընկերոջս պ. Ա. Ռշտունիի վերոյիշեալ բոլոր նկատողութեանց կատարելագոյն համաձայն ու համակարծիք եմ:

Հնչ. կուսակցութեան անդամ  
ԱՏՈՄ ԱՍԼԱՆԵԱՆ

Սիրելի ընթերցող

Հեռի՛ ըլլան ինձմէ յաւակնոտ ձգտումները... Ես միշտ եղած եմ ու կը մնամ ազգային դատի պարզ զինուոր մը, իբր լաւ ու վատ կողմերով, երբէք մտքէս անցած չէ զինքս հանձարեղ մէկը ներկայացնել կամ ազգային գործերու ղեկավարն ըլլալ... քաւ լիցի, այդ իմ կարողութենէս շատ բարձր է. ես միշտ այս զգացած եմ: Բայց ինչ բարոյականութիւն է այս երրորդութեան՝ Լ. Մկրտչեանի, Ռշտունիի և Ասլանեանի բրածը: Ձեզի կը հարցնեմ, եթէ ես այդքան մտաւոր թոյլ կարողութիւններ ունէ՞ի. այդքան յիմար էի. ինչո՞ւ այնպէս

փառաւոր ընդունելութիւն ըրին ինձ թէ՛ Աղեքսանդրոյ և թէ՛ Գափրէի մէջ... ձեռքի վրայ պտտցուցին, այս ու այն անձանց ներկայացուցին, ծափահարութիւններով ընդունեցին... վերջապէս կեղբորնի կողմէն իբր պաշտօնական պատգամաւոր ուզեցին ժընէվ զրկել, բայց «Իրօչակ» ի սմբագրութիւնը չընդունեց իմ կեղբորնի կողմէն երթալս: Ձէ՞ որ եթէ «Իրօչակ» ի սմբագրութիւնը ընդունէր. ես ժընէվ նոյն բաները պիտի ընէի իբր պաշտօնական պատգամաւոր: Ուրեմն ինչո՞ւ եղան սկզբները այնքան լաւ՝ այնքան սիրալիր ընդունելութիւններ, այնքան պատիւներ ու յարգանքներ, իսկ էրբ անկեղծօրէն ըսի. «որ Գափաղցութիւնը իրաւունք ունի մինչև օրս պաշտօնական բանակցութեան չը մտնելու», այն ատեն ըսկասն աջամարհել զիս յիմար, տկարամիտ, «անցեալ անձուկ փառքի տէր» անուանելով... Այո՛, մենք կը հասկընանք ձեզ, խարդախ ու ստոր արարածներ, դուք ուզեցէք կըղիքել ձանկիւլեանի ո՛ր և է բիծ չունեցող անունը, որովհետեւ ձեր ամենուն վրայ ալ աղտեր կ'պած են. ան ալ խոշոր. ստոր տեսակներու աղտեր... ուզեցիք անոր անաղարտ անունն իբր դիմակ ծառայեցնել ձեզի, որ այսուհետեւ ալ հայ ժողովուրդը... Բայց ժողովուրդը ղձեզ ճանչցաւ, այժմ ձեռքերնիդ երկնցուցիք քանի մը բարձրաստիճան հարուստներու, որոնք թէև խիստ լսելացի մարդեր, բայց անգիտակ են ձեր անցեալ լրբութեանց ու ներկայ դիւռային ազոտ բարոյականութեան, և դուք ուզեցիք ձանկիւլեանը գործիք դարձնել ձեր կ'ղիքի ստոր գործերու մէջ: Իսկ երբ տեսաք որ ձանկիւլեան այնչափ «մոխիր կ'ըլլ» չէ. ձեր սատանայական մեքենայութիւնները հասկնալ սկսած է, իսկոյն «յիմար, տկարամիտ» և այլ սկսեցիք պօռալ... Դուք անխիղճ հրէշներ էք, այո՛, դուք որ պատճառ եղաք ժողովուրդն այս թշուառութեան հասցնելու և մոխիրի վրայ նստեցնելու, այժմ գոնէ առանց մազի մը չափ գութ ունենալու, և նորէն կ'ուզէք տղբուկներ մնալ թշուառ ժողովրդի արիւնը ծծելու համար, դուք ձեր անձնական շահերու և լիկ փառասիրութեան համար տարիներով աչք գոցեցիք Նաղար-

բէկի ըրածներուն և նազարբէկը այս աստիճանին հասուցիբ, առանց մտածելու և տեսնելու հազարաւոր անկեղծ ու անձնուէր Հնչակեաններ, որոնք պատրաստ էին ամէն ժամանակ Ս ու Լ Բ Բ Գ ո ր ծ Ի ն համար մեռնելու, դո՛ւք, դո՛ւք հրէշներ այն պաշտելի Հնչակեան կուսակցութեան դրօշակը այնչափ ստորնացուցիբ որ տիղմերու մէջ դնելու աստիճանին հասուցիբ: Ի՞նչ խաչագողութիւնը ձեզ արհեստ բնորելով ժամանակին խղրած էք ամէն անկեղծ Հնչակեաններու արդարացի բողոքներն ու ձայները: Ո՛ւր է Շիրվանեան, այդ անձնուէր ու անկեղծ հայրենասէր երիտասարդի ոսկորները դեռ կը մնան Կիպրոսի հողերուն տակը, դո՛ւք անգութ ոճրագործներ: Ալ հերիք, ալ հերիք, որչափ որ հաղարար Հնչակեաններ գոհեցիք ձեր լեռնին համար: Այսօր Հնչակեան կուսակցութիւնը ունի իր մէջ հաղորարու անկեղծ և անձնուէր անձինք, անոնք են որ Հրնչակեան կուսակցութիւնը կը կազմեն, դուք ձեր խմբով այլ ևս արժանի չէք անոնց մէջ մնալու և ասկէց վերջ Հնչակեան ըսուելու և այդ սուրբ բառն իսկ ձեր բերանն առնելու: Գնացէ՛ք, արդէն լաւ գտեր էք զիրար ու կը յարմարիբ իրարու դնացէ՛ք, այն դարն ա՛յցաւ, անգլին ցեցերը, մնացէ՛ք ձեր աղտոտութեան լճի մէջ, իսկ ժողովուրդը կը հետեւի մաքուր և անկեղծ այն գործիչներուն, որոնք կը նետուին մահուան և արիւնի ասպարէզը և ոչ թէ Աղիքսանդրիոյ զինետուններն կամ Փարիզի անառականոցները, դո՛ւք ալ հրէշային վէրքերով վարակուած էք, ոչ մի մարդկային ոյժ չը կրնար ձեզ բռնել: որովհետև զիմակները պատուած է այլ ևս: Անագնիւ նամակներուդ մէջ կ'սպառնաք Դաշնակցութեան, «դուք մեր աղտը մի բանաք, որովհետև մենք ալ ձեր մասին տօքումաններ ունինք, զանոնք կը հրատարակենք»: Չէ՞ որ ես ձեզի ըսի:— Ինձ համար ըլլայ Հնչակեան՝ ըլլայ Դաշնակցական բառական է որ իմանամ և ապացուցուի թէ աղտոտ ու բազդախնդիր, (ատանկներ նոյն իսկ ըլլան երկու դաւակներս) անխնայ կը հարուածեմ մինչև որ ասպարէզէն հեռանան. ինչո՞ւ ցոյց չը տուիք ինձ եթէ ունէիք. ունի՞ք բան մը, զը-

րեցէք, որ հասարակութիւնը իմանայ, եթէ ոչ Դաշնակցութեանէ դժգոհ, խաչագող և պնակալէղ անձի մը անօթութիւնն օրտուելով անոր զրպարտութիւններն իբր տօքուման մի ներկայացնէք. եթէ իրականութիւններ են և իրօք զեղծումներ տեղի ունեցած են, թող այդ պնակալէզն երեւան հանն և հրատարակէ:

Իայց թողունք այդ նամակը, անցնինք մեր պատմութեան թելին:

Կեդրոնական վարչութեան սենեակը կուգայ Արփիարը բոլորովին յուզուած և կը դիմէ ինձ ու կ'ըսէ.

— Ժընէվ նամակ գրեցի՞ք:

— Այո՛, այս առաւօտ:

Արփիար սկսեց պօռալ ու կանչել, թէ ինք չը պիտի հրատարի, թէ ինք ետ պաւած է իւր հրատարելու խօսքը. թէ ~~եւ~~ պէտք է որ մի նամակ ևս գրեմ ժընէվ և իմացնեմ թէ ինքը չպիտի հրատարի: Ես մերժեցի, յետոյ պ. Տամատեանի առաջարկեց որ հոն գտնուող Դաշնակցական իր մէկ բարեկամին գրէ ու ան ալ մերժեց:

Ինչպէս ըսի, Արփիար խիտ ձիգութիւնով և խորամանկ մէկըն է. ես այդ հասկցած էի վճռեցի լռել որ ինք միայն պօռայ ու խօսի և իր գոյնը լաւ մը դուրս տայ: Իմ այս հաշիւս Արփիարի տօմարին մէջ չկար: Արփիար տեսնելով իմ լռութիւնս կարծեց որ ես իրեն համակարծիք եմ, ուստի սկսաւ պ. Տամատեանի հետ կանչել ու պօռալ: Նախ սկսաւ պնդել որ չի հրատարի, մինչև որ բոլոր պատգամաւորներն իրենց ստորագրութեան ներքև չխոստովանին թէ սխալմամբ ընտրած են Արփիարը: Յետոյ նորէն սկսաւ պահանջել կուսակցութեան տառերը, «Նոր Կեանք» անուն իր թերթին համար և ըսաւ.

— Կամ տառերն իմ տրամադրութեանս տակ գրէք կամ ձախեցէք ինձի, քանի որ «Մարտ» չենք կարող հրատարակել և պէտք ալ չունինք ասկէ ետքը հրատարակել, քանի որ ձրի թերթ մըն է: Եւ որովհետև յեղափոխութիւնը մեռած է այլ և ս Հայ ազգին համար, ես

բէկի ըրածներուն և Նազարբէկը այս աստիճանին հասուցիք, առանց մտածելու և տեսնելու հազարաւոր անկեղծ ու անձնուէր Հնչակեաններ, որոնք պատրաստ էին ամէն ժամանակ Ս ու Ր Բ ո Ր Ժ ի ն համար մեռնելու, դ՛ուք, դ՛ուք հրէշներ այն պաշտելի Հնչակեան կուսակցութեան զբօշակը այնչափ ստորնացուցիք որ տիղմերու մէջ դնելու աստիճանին հասուցիք: Դ՛ուք խաչագողութիւնը ձեզ արհեստ ընտրելով ժամանակին խղճած էք ամէն անկեղծ Հնչակեաններու արդարացի բողոքներն ու ձայները: Ո՞ւր է Շիրվանեան, այդ անձն ու էր ու անկեղծ հայրենասէր երիտասարդի ոսկորները դեռ կը մնան Կիպրոսի հողերուն տակը, դ՛ուք անգութ ոճրագործներ: Այլ հերիք, ալ հերիք, որչափ որ հազարաւոր Հնչակեաններ զոհեցիք ձեր ձեռքին համար: Այսօր Հնչակեան կուսակցութիւնը ունի իր մէջ հազարաւոր անկեղծ և անձնուէր անձինք. անոնք են որ Հրնչակեան կուսակցութիւնը կը կազմեն, դուք ձեր խմբով այլ ևս արժանի չէք անոնց մէջ մնալու և ասկէց վերջ Հնչակեան ըսուելու և այդ սուրբ բառն իսկ ձեր բերանն առնելու: Գնացէք, արգէն լաւ գտեր էք զիրար ու կը յարմարիք իրարու դնացէք, այն դարն անցաւ, զոգրին ցեցերը, մնացէք ձեր աղտոտութեան լճի մէջ, իսկ ժողովուրդը կը հետեւի մաքուր և անկեղծ այն գործիչներուն, որոնք կը նետուին մահուան և արիւնի ասպարէզը և ոչ թէ Աղիքսանդրիոյ զինետուններն կամ Փարիզի անառականոցները, դ՛ուք ալ հրէշային վէրքերով վարակուած էք, ոչ մի մարդկային ոյժ չը կրնար ձեզ բժշկել. որովհետեւ զիմակները պատուած է այլ ևս: Անաղնիւ նամակներուդ մէջ կ'սպառնաք Դաշակցութեան, «դուք մեր աղտը մի բանաք, որովհետեւ մենք ալ ձեր մասին տօքումաններ ունինք, զանոնք կը հրատարակենք»: Չէ՞ որ ես ձեզի ըսի:— Ինձ համար ըլլայ Հնչակեան՝ ըլլայ Դաշակցական բաւական է որ իմանամ և ապացուցուի թէ աղտոտ ու բազդախնդիր, (ատանկներ նոյն իսկ ըլլան երկու զաւակներս) անխնայ կը հարուածեմ մինչև որ ասպարէզէն հեռանան. ինչո՞ւ ցոյց չը տուիք ինձ եթէ ունէիք. ունի՞ր բան մը, գը-

րեցէք, որ հասարակութիւնը իմանայ, եթէ ոչ Դաշակցութեան դժգոհ, խաչագող և պնակալէղ անձի մը անօթութիւնն օգտուելով անոր զրպարտութիւններն իբր տօքուման մը ներկայացնէք. եթէ իրականութիւններ են և իրօք զեղծումներ տեղի ունեցած են, թող այդ պնակալէղն երեւան հասնէ և հրատարակէ:

Իայց թողունք այդ նամակը, անցնինք մեր պատմութեան թելին:

Կեղրոնական վարչութեան սենեակը կուգայ Արփիար բոլորովին յուզուած և կը զիմէ ինձ ու կ'ըսէ.

— Ժընէվ նամակ գրեցի՞ր:

— Այո՛, այս առաւօտ:

Արփիար սկսեց պօռալ ու կանչել, թէ ինք չը պիտի հրատարի, թէ ինք ետ պառած է իւր հրատարելու խօսքը: Թէ ~~կը~~ պէտք է որ մի նամակ ևս գրեմ ժընէվ և իմացնեմ թէ ինքը չպիտի հրատարի: Ես մերժեցի, յետոյ պ. Տամատեանի առաջարկեց որ հոն գտնուող Դաշակցական իր մէկ բարեկամին գրէ ու ան ալ մերժեց:

Ինչպէս ըսի, Արփիար խիստ ճիգուիթ և խորամանկ մէկըն է. ես այդ հասկցած էի վճռեցի լռել որ ինք միայն պօռայ ու խօսի և իր գոյնը լաւ մը դուրս տայ: Իմ այս հաշիւս Արփիարի տօմարին մէջ չկար: Արփիար տեսնելով իմ լռութիւնս կարծեց որ ես իրեն համակարծիք եմ, ուստի սկսաւ պ. Տամատեանի հետ կանչել ու պօռալ: Նախ սկսաւ պնդել որ չի հրատարի, մինչև որ բոլոր պատգամաւորներն իրենց ստորագրութեան ներքև չխոստովանին թէ սխալմամբ ընտրած են Արփիարը: Յետոյ նորէն սկսաւ պահանջել կուսակցութեան տառերը, «Նոր Կեանք» անուն իր թերթին համար և ըսաւ.

— Կամ տառերն իմ արաւմադրութեանս տակ գրէք կամ ձախեցէք ինձի, քանի որ «Մարտ» չենք կարող հրատարակել և պէտք ալ չունինք ասկէ ետքը հրատարակել, քանի որ ձրի թերթ մըն է: Եւ որովհետեւ յ ե Ղ ա փ ո խ ու թ իւ ն ը մ ե ո ա ծ է այլ և ս Հ ա յ ա Ղ գ ի ն հ ա մ ա Ր, ես

յեղափոխական չէի ի վաղուց. այժմ ալ չեմ և ետքէն ալ չը պիտի ըլլամ, ինչո՞ւ զիս ընտրեցին. ես զիտեմ...: Աւ սկսաւ պահանջել 20) ֆրանքն, որքան ուղեցիք իմանալ յորմէ փոխ առնելն չըսաւ: Առ հասարակ երբ ուղեհար կը դրէր փարիզ և ուղածին չափ ստակ բերել կ'ուտար: Որքան ջանացի անհրար եղաւ իմանալ թէ ուրկէ՞ էին այդ ստակները: Արփիարի պօռալ կանչելը տեւեց մինչև գիշերուան ժամ 11 1/2ը: Պարոն Տամատեան քանիցս ստիպեց զիս որ միջամտեմ վեճին, բայց ես յամառութեամբ լռեցի՝ և համամիտ ըլլալ ձեւացուցի Արփիարի ըսածներուն:

Տամատեան չէր գիտեր իմ լռութեանս պատճառը. միտչեաւ ես անգլիական օրէնքներուն անտեղեակ ըլլալով կը վախնայի թէ այդքան գոռում դոչուով վրայ մի գուցէ ստիկանութիւնը ներս մտնէ ու ձերբակալէ մեզ, հրապարակաւ չի խոյտառակուելու համար միշտ խոյս կուտայի:

Արփիարի դիմակն այլ ևս պատռած էր, ես իմ նպատակին հասած էի, միջամտեցի, լռեցուցի, որ խայտառակութիւն չը ծագի: Վերջապէս ժամը 12ին Արփիարը համոզեցի լռել, առի վայն մինչև իր առնը տարի, ճանապարհին ալ մտեթ մնացած կէտերը պարզել տուի, որով կատարեալապէս համոզուեցայ թէ Արփիար բարոյական նկարագրէ բոլորովին գուրկէ և...:

Միւս առաւօտ պ. Տամատեան քիչ մը պաղած գտայ, նա կ'արժէր էր, թէ ես համոզուած եմ Արփիարի ըսածներուն և իսկապէս համամիտ եղած եմ: Ես նախատակս պարզեցի, նա ամէն ինչ հասկցաւ:

Եկաւ Արփիար շողջողուն յոյսերով, որ այս անգամ պիտի յաջողի: Նախ սկսաւ «Նոր Կեանք» հրատարակելու պատրաստութեանց վրայ ճառել, բայց իսկոյն ապշեցաւ մնաց տեսնելով որ ես կը հակառակիմ պ. Տամատեանէ աւելի, ես դարձայ իրեն ըսի:

—Քանի որ «Մարտ» ի խմբագիրը դու ես, իրաւունք չունիս հակայեղափոխական թերթ մը հրատարակելու. սկիզբէն մինչև վերջը ճնշում բանեցուցած ես պ. Տամատեանի վրայ,

նա առանձինը չէ կարող արտօնել. պէտք է ո՛չ միայն պատօնակիցներդ այլ նոյն իսկ ընդհ. ժողովի անդամներն ալ համաձայնին. քանի որ խնդիրը ծանր ու փափուկ է, անոնք չեն հաճիր, մենք քեզի թոյլ չենք տար որ հրատարակես. վերջնականապէս հրաժարէ կուսակցութենէն, այնուհետեւ ազատ ևս ի՛նչ կ'ուզես ըրէ:

Պ. Տամատեան Արփիարին ըսաւ:  
—Դրէ Լեոն Մկրտիչեանի տեսնենք ինչ կը պատասխանէ:

—Լեոն Մկրտիչեան իր անձնական գործով կ'ապրի, ես ինչով պէտք է ապրիմ, «Նոր Կեանք»-ով. ես միայն իմ ապրուստս կ'ուզեմ հայ թայ թեւ, ի՛նչ ձեռով կ'ըլլայ թող ըլլայ:

Երբ հաստատեցի պ. Տամատեանի առաջարկին օրինաւորութիւնը, Արփիար պտտապխանեց.

—Մ'չ վարչութեան անդամները կը ճանչնամ, ո՛չ պատգամաւորները, ո՛չ մասնաձիւղերը և ո՛չ ալ ժողովուրդը, ես կ'ուզեմ ապրիլ, քանի որ թուրքիա և Ռուսիա չեն կրնար մտնել, զիս կ'սպաննեն, թերթս պիտի հրատարակեմ. ես յեղափոխական չէի, չեմ և ասկէ վերջ չպիտի ըլլամ, յեղափոխութիւնը մեռած է Հայ ազգին համար, ինչո՞ւ զիս բերին մտցուցին այս գործին մէջ... այո՛ ստիպուած էին մտցնել, որովհետև չէին կարող չը մտցնել:

Երբ Արփիար ատանկ լըբօրէն պօռաց թէ և ո՛չ մէկը չուզեր ճանչնալ, ես բարկացած ոտք ելայ ու ըսի.

—Ես ալ քեզ չեմ ճանչնար և ասկէ վերջ այս պաշտօնատեսեակն չպիտի մտնես. կը վճնտեմ քեզ հասկցա՞ր... որովհետև դու բաղդախնդիր, շահասէր, ստախօս: Խաբեբայ գող և սրիկայ մըն ես:

Պ. Տամատեան միջամտեց և Արփիարը տնէն դուրս հանելով դուռը գոցեց: Բայց Արփիարի համար ամօթ ըսուած բանը Աստուած դեռ նոր պիտի ստեղծէ. միւս օրն եկաւ և բարեւելով նստաւ, (եւ չպատասխանեցի) նա խնդրեց որ մեզու կերպով տեսնուինք:



եղափոխական չէի ի վաղուց. այժմ ալ չեմ և ետքէն ալ չը պիտի ըլլամ, ինչո՞ւ զիս ընտրեցին. ես գիտեմ... : Ու սկսաւ պահանջել 20) ֆրանքն, որքան ուղեցիք իմանալ յորմէ դիտ առնելն չըսաւ: Առ հասարակ երբ ուզեանար կը գրէր Փարիզ և ուղածին չափ ստակ բերել կ'ուտար: Որքան ջանացի անհրար եղաւ իմանալ թէ սերկէ՞ էին այդ ստակները: Արփիարի պօռալ կանչելը տեսց մինչև գիշերուան ժամ Ա՛յը: Պարոն Տամատեան քանիցս ստիպեց զիս որ միջամտեմ վէճին, բայց ես յամառութեամբ լռեցի՝ և համամիտ ըլլալ ձեւացուցի Արփիարի ըսածներուն:

Տամատեան չէր գիտեր իմ լուռութեանս պատճառը. մինչդեռ ես անգլիական օրէնքներուն անտեղեակ ըլլալով կը վստահայի թէ այդքան գոռում գոչումի վրայ մի գուցէ ստիկանութիւնը ներս մտնէ ու ձերբակալէ մեզ, հրապարակաւ չի խայտառակուելու համար միշտ խոյս կուտայի:

Արփիարի դիմակն այլ ևս պատռած էր, ես իմ նպատակիս հասած էի, միջամտեցի, լռեցուցի, որ խայտառակութիւն չը ծագի: Վերջապէս ժամը Ա՛յին Արփիարը համագեցի լռել, առի վայն մինչև իր տունը տարի, ձանապարհին ալ մուտ մնացած կէտերը պարզել տուի, որով կտտարկուպէս համոզուեցայ թէ Արփիար բարոյական նկատարար է բոլորովին գուրկէ և... :

Այս առաւօտ պ. Տամատեան քիչ մը պաղած գտայ, սա կարծել էր, թէ ես համազուած եմ Արփիարի ըսածներուն և խեղապէս համամիտ նղած եմ: Ես նպատակս պարզեցի, նա ամէն ինչ հասկցաւ:

Եկաւ Արփիար չողջողուն յոյսերով, որ այս անգամ պիտի յաջողի: Նախ սկսաւ «Նոր Կեանք» հրատարակելու պատրաստութեանց վրայ ճառել, բայց իսկոյն ապշեցաւ մնաց տեսնելով որ ես կը հակառակիմ պ. Տամատեանէ աւելի, ես դարձայ իրեն ըսի.

—Քանի որ «Մարտ» ի իմբապէրը դու ես, իրաւունք չունիս հակայեղափոխական թերթ մը հրատարակելու. սկիզբէն մինչև վերջը ճշում բանեցուցած ես պ. Տամատեանի վրայ,

նա առանձինը չէ կարող արտօնել. պէտք է ո՛չ միայն պատօնակիցներդ այլ նոյն իսկ ընդհ. ժողովի անդամներն ալ հատաձայնին. քանի որ խնդիրը ծանր ու փափուկ է, անոնք չեն հաճիր, մենք քեզի թոյլ չենք տար որ հրատարակեալ վերջնականապէս հրածարէ կուսակցութիւնէն, այնուհետեւ ազատ ևս ինչ կ'ուզես ըրէ:

Պ. Տամատեան Արփիարին ըսաւ:  
—Գրէ Լեոն Մկրտիչեանի տեսնենք ինչ կը պատասխանէ:

—Լեոն Մկրտիչեան իր անձնական գործով կ'ապրի, ես ինչո՞վ պէտք է ապրիմ, «Նոր Կեանք» ով. ես միայն իմ ապրուստս կ'ուզեմ հայ թայ թել, ինչ ձեւով կ'ըլլայ թող ըլլայ:

Երբ հաստատեցի պ. Տամատեանի առաջարկին օրինաւորութիւնը, Արփիար պտտասխանեց.

—Ո՛չ վարչութեան անդամները կը ձանձնամ, ո՛չ պատգամատուրները, ո՛չ մասնաձեւերը և ո՛չ ալ ժողովուրդը, ես կ'ուզեմ ապրիլ, քանի որ թուրքիա և Ռուսիա չեն կրնար մտնել, զիս կ'սպաննեն, թերթս պիտի հրատարակուես յեղափոխական չէի, չեմ և ասկէ վերջ չպիտի ըլլամ: Ենդափոխութիւնը մեռած է Հայ ազգին համար, ինչո՞ւ զիս բերին մտցուցին այս գործին մէջ... այո՛ ստիպուած էին մըտցնել, որովհետեւ չէին կարող չը մտցնել:

Երբ Արփիար ատանկ լըբօրէն պօռաց թէ և ո՛չ մէկ չուզեր ձանձնալ ևս բարկացած ոտք ելայ ու ըսի.

—Ես ալ քեզ չեմ ձանձնար և ասկէ վերջ այս պաշտօնատեսնեակն չպիտի մտնես. կը վունտեմ քեզ հասկցա՞ր... որովհետեւ դու բազդախնդիր, չահասէր, ստախօս: Խարերայ գող և սրիկայ մըն ես:

Պ. Տամատեան միջամտեց և Արփիարը տնէն դուրս հանելով դուռը գոցեց: Բայց Արփիարի համար ամօթ ըսուած բանը Աստուած դեռ նոր պիտի ստեղծէ. միւս օրն եկաւ և բարեւելով նստաւ, (եւ չպատասխանեցի) նա խնդրեց որ մեզ կերպով տեսնուինք:

Նախ իրենց նիւթական անձկութիւնը պարզեց, խոստացաւ հրաժարիլ քանի մը օրէն վերջ, միայն թէ տառերը իր տրամադրութեան տակ դնենք կամ իրեն ծախենք պահանջած 200 ֆրանքին փոխարէն: Ես ստիպուեցայ իրեն հասկցնել, թէ Միւռութեան համար ո՛չ թէ միայն իր անձը պէտք է զոհուի, այլ եթէ հարկ լինի քանի մը անձեր ևս պէտք է զոհուին. նոյն իսկ եթէ իմ անձս լինի, ամենայն յօժարութեամբ կը զոհեմ. քանի որ ժողովրդի գերագոյն շահերն այսօր կը պահանջեն Միւռութիւնն: Իսկ գալով տառերուն, ոչ թէ միայն մենք, այլ և ոչ մի վարչութեան անդամ չէ կարող ծախել որովհետեւ ամբողջ կուսակցութեան կը պատկանին:

—Է՛յ, ի՞նչ ընելու եմ հապա, դուք կ'ըսէք հրաժարէ. տալու էք իմ ապրուստս. եթէ ոչ Լոնտոնի փողոցներուն մէջ անօթի պիտի մնամ... իմ ապրուստս ժողովուրդը տալու է մինչև ցմահ, քանի որ այսչափ ատեն յեղափոխական գործին մէջ կ'աշխատիմ:

Արփիարի ճիզութիւնը, աղտոտութիւնն ու լրբութիւնը միայն անոնք կրնան լաւ գիտնալ որոնք իրեն հետ գործ կ'ունենան. ամօթ ըսուած բանը չը գիտեր. այսօրուան ըսածը վաղը կը հերքէ, վաղուանը միւս օրը:

Խօսեցայ իրեն Նազըմի մասին. ինք խոստովանեցաւ, թէ՛ ինք և թէ՛ Փաշալեան մտերմօրէն կը տեսնուին եղբւր և քանի մը անգամներ ալ ճաշած են անոր տունը, երբ ես ղիտողութիւն մը ըրի, ըսաւ.

—Մ'ենք այնպիսի շահեր ունեցած ենք անոր հետ, որ ո՛չ միայն ձեզ այլ և ո՛չ մէկու մը կրնամ յայտնել:

Գրաչար պ. Հրանտը 16 ոսկիի չափ պահանջ մը ունէր կեդրոնէն: Արփիար այդ բանը կ'ուզէր իր նպատակին ծառայեցնել, ցոյց կուտայ պ. Հրանտին իր քով եղած ոսկիները ու կ'ըսէ.

—Գնա՛ այդ էջ Տամատեանը համոզէ, որ տառերը ծախէ ինձի. այն ժամանակ այս ստակները կ'առնես առնելիքիդ փոխարէն:

Արփիարի քով միշտ ստակ լեցուն էր, օրական երեք անգամ ճաշարանը կը ճաչէր. իսկ մենք շատ ժամանակ պանիր անգամ առնելու ստակ չէինք ունենար: Հրանտ և ես հիւանդ ըլլալով հանդերձ չոր հաց կը կրծէինք... Պ. Տամատեան երբ ստակ կ'ուզէր իրմէ կեդրոնի նամակները զրկելու համար, իսկոյն Արփիար լրբօրէն կը պատասխանէր.

—Կամ տառերը ինձի ծախէ, կամ պատճէնի մեքենան ծախէ և կամ բարդիսուդ գրաւ դիր ու նամակներդ զրկէ, կեդրոնը բնաւ իմ հոգս չէ:

Օր մըն ալ բացարձակապէս ինձի ըսաւ.  
—Ո՛չ գործիչ մը, ո՛չ ժողովուրդը և ոչ ալ հայ անհատ մը իրաւունք ունի կեդրոնի գործին միջամտելու և աղտոտութիւններու մասին ղիտողութիւններ ընելու:

Գրաչար պ. Հրանտը որ արդէն հիւանդ էր և չէր կարող ցամաք հաց ուտել մեզ հետ, մէկ շփիւն ուզեց Արփիարէն, չը տուաւ և փողոցին մէջ դառնալով ըսաւ.

—Այն է չ ու բէ գէ վէ է ն կ ժողովուրդն և պատգամաւորները որ կ'ուզեն իմ հրաժարիլս. թող բերեն իմ ապրուստս տան և ապա հրաժարեցնեն զիս. եթէ ոչ երբէ՛ չեմ հրաժարի:

Արփիարի այս խօսքերէն շատ յուզուեցաւ պ. Հրանտ ըսաւ.

—Արփիար, դու շատ լիրբ մարդ ես. ղիտե՛ս, կը յիշե՛ս օր մը դու ինձի նորէն այսպէս փ... շտ ըսած ես:

Արփիար անիթութեամբ, խրտմբտալով մը պատասխանեց.

—Է՛հ, ի՞նչ կ'ըլլայ փ... շտ ըսելով, դուն ալ ինձ փ... շտ ըսէ:

Կը լսէ՞ք: Լսեցէ՛ք դուք, որ Արփիարը կը պաշտպանէ՛ր դուք... որ յեղափոխական գործի մը ղեկավարը կը ճաննաք Արփիարը, ահա՛ Արփիար...:

Արփիարի դէպի Հոյ ժողովուրդը նետած այդ հայհոյանքի հետ միասին մտածեցի բառնալ անոր վատ ու ստոր կեանքը, փախլով ոսկորները Լոնտոնի փողոցներուն մէջ,

բայց շուտով ինքզինքս զսպեցի և խոհեմութիւն համարեցի վերջնականապէս յարաբերուիլ իւր ինքեւն ապր ինկած մարդկային հրէշի և ճիւղղի հետ:

Իրաց այս անմիտթար կացութիւնը տեսնելով, գիշերը սրտիս զգացած կրակն ու յուզումը չը կրցան մեղմացնել աչացս արտասուքները, կարծես միշտ միայն արտասուքներս ինձ բաժին եղած էին ողբալ այս կացութեան վրայ աչքի առաջ ունենալով թշուառ ժողովրդի վիճակը, յիշելով հայրենիքի աւերակ զրութիւնը, միշտ կ'ողբայի ու կը ըսէի.

—Ձէ՛, չէ՛, Հայ աղբը և ժողովուրդը բնաւ արժանի էր այս վիճակին, բայց Արփիարի նման ճիւղղներ, հըրէշներ, անգութներ ու ոճրագործներ այս աստիճանին հասուցին, ափսո՛ս, հաղար ափսո՛ս, Հայ ազգն ու ժողովուրդը...

Կարծես միշտ ցաւալի զուգադիպութեան կը հանդիպէի: Միւս օրը Մկրտիչեանէ նամակ մը ստացայ որուն մէջ ըսէր.

«Լոնտոն գալու համար 60 անգլիական ոսկի կ'ուզեմ սպարճածախս. Աղեքսանդրիաէն մինչև Լոնտոն եթէ և ոսկիէն պակաս լինի չեմ կրնար գալ, որովհետև...»:

Ականջներուս չէի հաւատար, 60 ոսկի՛, անգլիական, որտի ծախսէ գրեթէ աւելի. ժողովուրդն ալ ինչո՞ւ հոգ յինէ. ղեկավարներէն մին լորտ է եղեր:

Համբերեցէք քիչ մը որ խօսքս վերջացնեմ, դեռ աւելին կայ:

Մկրտիչեան նոյն նամակին մէջ աւելին կ'ըսէր, (լսե՛ք դուք աւելի Ամերիկայի Հնչական ընկերները):

«Քանի որ Ամերիկայի մասնաճիւղերն ու Պ... վար-թիւնը ստակ չեն զրկեր և չեն կարող մեզ (կեզրոն) պէցնել. ալ ինչ պիտի ընենք այն կուսակցութիւնն ու ասնաճիւղերը որ առաջ թողնելու ենք և հետեւեալ ըրածներս ընելու ենք, քանի որ Սըվալդեան անոնց հետը լաւ բարեկամ է»:

Յետագայ տողերը գլխատառերով գրած էր Մկրտիչեան էֆէրտի և տակը երկգիծերով դժած էր:

Ան պայման կերպով ես կ'առաջարկեմ իմ սա վերջնական որոշումս, թողնենք կուսակցութիւն և մասնաճիւղեր և երթանք կապուիւնը Բարի գիտնաժողովի հետ, քանի որ կուսակցութիւնը չէ կարող մեր ծախքերը հոգալ:

Աւելի երկար էր նամակը, բայց այժմ այսչափը կը միջնէ: Ես այս մասին ոչինչ չեմ ուզեր գրել, ժողովուրդի լուրջ գասակարգի դատողութեանը կը թողում:

Այս աղտոտութիւնները տեսնելով մտածեցի որ խոհեմութիւն կ'ըլլայ հրաժարիլ Հնչական կուսակցութենէն, որուն մէջ մինչև այսօր հազարաւոր անկեղծներ ու անձնազոհներ կան: Քանի մը օրինակ հրաժարագրեր գրեցի որ հըրատարակիլ տամ անկողմնակալ թերթերու մէջ:

Պ. Տամատեան (\*) արդէն վաղուց գրուած էր Արփիարէն և միշտ կ'ըսէր, պէտք չէ ասանկ խաբել ժողովուրդը ու անոր վստահութիւնը չարաշար գործածել. մենք պահանջուած գործին մարդիկները չենք:

Պ. Տամատեան հետեւեցաւ իմ օրինակիս և պատրաստեց իր հրաժարականը: Հրաժարականները պատրաստած կ'ուզէի թղթատարին յանձնել յանկարծ մի ուրիշ բան խորհեցանք:

Արդէն Արփիար և իր նմանները կ'ուզէին որ իրենց աղտոտութեանց դէմ բողոքողները ասպարէզէն հեռանային, որ իրենք միջոց ունենային սանձարձակ գործադրել իրենց բոլոր շահատակութիւնները: Ուստի պէտք էր մէջը մնալ ու մաքառիլ և ժողովրդին պարզել ամէն ինչ: Հրաժարականները յետաձգեցինք և որոշեցինք որ ես Աղեքսանդրիա երթում. միջոցները մտածեմ բոլոր անկեղծ Հնչական ընկերներուս հետ:

(\*) Մենք անյարմար սեպեցինք այս գրքոյկի մէջ գրել պ. Տամատեանի բռնած ընթացքը. որոյ մասին գրել մեզ կը վերապահենք:

ՅՈՒՂԻՍ 6 ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.

Նահանգային վարչութեան, Մկրտիչեանի և ուրիշ ընկեր-  
ներու ժողովի մը մէջ ճամբորդութեանս հաշիւները սուրբ, երբ  
տեսայ որ Արփիար կը պաշտպանուէր ահագին մեծամասնու-  
թեան կողմէ, շատ յուզուեցայ: Ժողովէն վերջ ճանապարհէն  
Ռշտունին ինձ ըսաւ.

—Բեզի համար կ'ըսեն թէ պաղ արիւն չես, բայց շատ ու  
շատ պաղարիւն և համբերող ես. եթէ ես ըլլայի քու տեղդ ըլ-  
լայի ատոնց ամէնուն գլխուն մէկ մէկ աթու իջեցնելով կը  
կը սատկեցնէի. և ապա հոս կը վերադառնայի. կեցցե՛ս լա՛ւ  
համբերութիւն է:

Միւս օր Մկրտիչեանի յայտնեցի որ հրապարակաւ պիտի  
հրաժարիմ Հնչ. կուսակցութենէն: Նա պ. Պ.ի (ատենապետ  
նհնգ. վարչ.) հետ զիս համոզեց որ յետաձգեմ հրաժարիլ  
խոստանալով քիչ ատենէն գործերը կարգադրել, և շատ մը  
խնդիրներու վճռումը որոշել ան պատճառ:

Երկրորդ ժողովի մը մէջ կարգադրուեցաւ Արփիարի ըն-  
դարձակ նամակը որ հրաժարական էր և խօսուեցաւ միու-  
թեան խնդրոյ առթիւ: Ես իբրև միջնորդ երկու կուսակցու-  
թիւններու մէջ, ժողովի խմբագրած երկու նամակներն իմ  
ստորագրութեամբ «Դրօշակ»ի խմբագրութեան զրկեցի: Առա-  
ջին ժողովէն սկսեալ նշմարեցի, որ բոլոր ընկերներու կողմէ  
տեսակ մը պաղութիւն և հակակրութիւն կար դէպի ինձ  
հարցուցի Մկրտիչեանին՝ նա ուրացաւ, ոչինչ չկայ ըսելով  
ես կը յուսայի անկեղծօրէն թէ՛ քիչ ատենէն խնդիրները պիտի  
կարգադրուին. իսկոյն հեռագրեցին Կիպրոս Սըվաղլեանին, որ  
գայ: Այդ ատենները ընկերական շրջանակներէ ժողովի մը մէ-  
ջս, երբ իմ կարծիքս հարցուցին: Եթէ Միութիւն ալ յա-  
ռաջ գայ, պէտք է օրէնք մը գնել, բոլոր բաղդախնդիրներն ու  
գրամական զեղծում ընողները (սկսեալ Ծ դահեկանէ մինչեւ  
հաղարատը) պէտք է տեւորի ենթարկուին. որովհետև բաղ-  
դախնդիր մը կրնայ նաև գողնալ, մատնութիւններ ընել  
այն. ասանկով միայն կարելի է հրապարակը մաքրել:

Ռշտունին իսկոյն ըսաւ.

—Ի՞նչ կ'ըսես եղբայր, սալախանայ (սպանդանոց) պիտի  
ընես, ասանկ գործերու մէջ մատնութիւն և ատանկ բաներ  
միշտ կ'ըլլան:

Պարզ է որ, Ռշտունին գիտէր թէ կային ահագին թուով  
բաղդախնդիրներ, որոնց մահը չէր ուզեր ինքը... Թերևս ինք  
իբր գլխէն ալ երկիւղ ունէր:

Աղեքսանդրի քանի մը օր մնալէս վերջը ամէն ինչ պար-  
զուեցաւ, այն Մկրտիչեանը՝ որ Գահիրէի մէջ ահագին հրապա-  
րակախօսութիւններ կ'ընէր Միութեան անհրաժեշտութեանը  
մատին և մանաւանդ կուսակցութեան ներքին խաղերն իմացած  
էի ու ինքն ալ գիտէր արդէն: Նաև նոյն Արփիարը՝ որ «Մար-  
տ»ի մէջ ոգևորուած կոչ կ'ընէր Դաշնակցականներուն միանալ,  
«մէկ բանակ, մէկ ոյժ» կազմել, ի վերջոյ հասկցուեցաւ որ  
այդ բոլոր անձերը դէմ էին Միութեան և այդ անձերը որ ըս-  
կիցները կը պօռային թէ Միութիւնն է ժողովրդի շահերուն  
պաշտպանութեան միակ միջոցը հակառակ այս քարոզներու  
ցոյց կուտային որ Դաշնակցականները Միութիւն չեն ուզեր...  
և ահա այսօր պարզուեցաւ որ ատիկայ լոկ միջոց մըն է եղեր  
ժողովուրդը խաբելու և անոր բարեկամ ձեւանալով համակրու-  
թիւնը շահիլ: Միութիւնը իբր գիմակ գործածելով կեղեքել հայ  
հասարակութիւնը, բայց երբ տեսան ըր Դաշնակցականները  
կ'ուզեն մի մտալ. երբ տեսան որ նախնական բանակցութիւնք  
կատարուած և պարզուած են երկու կողմի պահանջները, այն  
ժամանակ Մկրտիչեան և Արփիարներ սկսան յետ միախիլ ե-  
րկութեան հակառակիլ... «Գողը միշտ մութ գիշերներ կ'ուզէ  
և ձկնօրսը պղտոր ջուր», կ'ըսէ ժողովրդի առածը:

Մկրտիչեանի ներկայութեան օր մը Ռշտունին ընկերոջ  
Գ. Տ. ի և ինձ ըսաւ.

—Մեզի Միութիւն պէտք չէ և չենք ուզեր. եթէ կատու  
ասպարէզէն քաշուի՝ մուկերը ասպարէզ կը գտնեն. մենք կա-  
տու ենք, Դաշնակցականները մուկ. պէտք է երկուքս ալ հրա-  
պարակի վրայ մնանք և Դաշնակցականները հալածենք:

Բանակցութեանց համար ընտրելի լիազօր պատգամ-  
ւորները երկու կողմի համար ալ վստահելի անձեր ըլլալ

պայմանին կը հակառակէր Ռչտունին: Ազնուաշուք Տիա  
 Անտոն Ռչտունի կը պահանջէր ու կը պնդէր որ այդ պատ-  
 դամաւորներու մէկն ինքն ըլլար ան պատճառ (°°)  
 Պարոնը շատ կը պնդէր այդ կէտին վրայ թէ ինչո՞ւ ես համա-  
 ձայնած եմ, որ մուտ գտած են կարգ մը աղտոտ անձեր կեդ-  
 րոնի և անոր շրջապատող անձերու մէջ: Խեղճը կը կարծէր որ  
 ինքն ալ ատոնց մէջն էր և պիտի դուրս ընկնէր կուսակցու-  
 թենէն... իր ըսած կարգ մը աղտոտ անձեր ըսածները Սուրէն  
 ու Աղասին էին, որոնց ձեռասիր նամակները բռնուած էին:

Մկրտիչեան երկար աշխատեցաւ, երկար ուղեց գիտ սի-  
 րաչահիլ որ լռեմ և տեսած աղտոտութիւններս չը յայտնե-  
 հասարակութեան, կարծելով որ ես ալ ուրիշներու պէս օրա-  
 կան ապրուստս ձեռք բերելու համար պիտի համակերպիմ  
 պիտի սողամ իր ստրեբրուն տակ... չէր գիտեր այդ ողորմելի  
 որ նախամեծար կը համարիմ անօթութենէ մեռնիլ և փողոց-  
 ներու մէջ մուրալ. քան անկեղծ համոզումներուս գէժ երթալ  
 պնակալեզու թիւն ընել...: Երկար փորձեց ճիշդութեամբ  
 գիտ սիրաշահիլ, բայց երբ տեսաւ որ անհնար է գոյնը ցոյց  
 տուաւ: Օր մը ընկերոջս հետ սկսանք խնդրել, աղաչել ու պա-  
 ղատել իրեն որ համաձայնի մեզ հետ գիմել ժողովրդի յարգուած  
 ու վստահելի անձանց, պարզել անոնց գործին նեղ կացութիւ-  
 նը ու ողբալի վիճակը. հրաւիրել անոնց մասնակցելու որ կա-  
 րող ըլլանք լուրջ գործի մը ձեռնարկել: Մկրտիչեան բարկա-  
 ցած ըսաւ.

—Մենք լաւ ու խելացի մարդիկներու պէտք չունինք, կա-  
 րող էք դիմել, ուր կամ որու որ կ'ուզէք:

Մկրտիչեանի ճիշդութեամբ այլևս պարզուած էր մեզ  
 համար չ'Արփիարի ջերմ պաշտպան ու մտերիմ բարեկամն էր  
 անոր նման ամէն բանով...: Քանի մը օրէն... ինձ հասա-  
 Ռչտունի աղտոտ նամակի լուրը, երբ այդ բանը Մկրտիչեանի  
 հաղորդեցի գունատուեցաւ, սկսան ձեռքերն ու ոտքերը դո-  
 զալ, խեղճը կը կարծէր որ օձիքէն պիտի բռնեմ իբր այդ ստոյ  
 նամակի բուն հեղինակը նկատելով զինքը (գող, սիրտը դող),  
 Բայց ես այդ չըրի, այդքան աղտոտութենէ զզուած՝ յայտնեցի

որ այլևս ո՛չ մի գործ չունիմ իրենց պէս բարոյականէ զուրկ  
 հրէշներու հետ, և խղեցի յարաբերութիւնս: Ակիզները ես  
 կը յուսայի որ խելացի, անկեղծ ու վստահելի անձեր գործի  
 գլուխ անցնելով զեկն իրենց ձեռքը պիտի առնեն: Միութեան  
 հակառակողները դուրս նետուելով ասպարէզը պիտի մաքրեն  
 աղտոտներէ՝ ըլլան Հնչակեան թէ՛ Իրօշակեան: Այս յուսով  
 կ'ապրէի և քանի մը անգամ ալ ըսած էի, եթէ Միութիւն չգո-  
 յանայ՝ ես պիտի քաշուիմ ասպարէզէն դառնացած սրտով.  
 Կէթ ապագային ըլլալիք աղտոտութեանց ու զեղծմանց մաս-  
 նակից ու պատասխանատու չը մնալու համար: Սըվազլեան  
 ինձ գրած նամակին համաձայն կ'ըստատէի իր գալուսն, մեծ  
 յոյս մը չունէի անոր վրայ ալ, որովհետեւ գիտէի թէ ինք եր-  
 բէք յեղափոխական եղած չէ, թէ և քիչ շատ ուսեալ է, բայց  
 յեղափոխական գործին անտեղեակ, ու բարձրամտութեան  
 հովեր ունեցող մարդ մըն է: Վերջապէս եկաւ և ինկաւ ձի-  
 ղուիթ Մկրտիչեանի ծուղակը, համակերպեցաւ անոր բոլոր  
 բնածներուն: Երեք անգամ տեսնուեցայ հետը, բայց ի զո՛ւր:  
 Յիշեմ անոր քանի մը խօսքերը, որ պարզուի թէ ինչ խելքի  
 տէր մարդ է վարչութեան ատենապետը: Երբ Փաշայեանի և  
 Չօպանեանի ընթացքը պարզեցի պատասխանեց.

—Մենք չենք կարող հրատարակել որ անոնք Հնչակեան-  
 ներ չեն: Ո՛չ միայն անոնք՝ այլ շատ մը ուրիշ բաղդախնդր-  
 ներ ալ եթէ «Հնչակ»ի անուան տակ ժողովրդէն ստակ կոր-  
 դեն, մենք ոչինչ չենք կարող ընել. մենք ո ս տ ի կ ա ն ու  
 թիւն չունինք. մեր ներքին խնդիրը երբ մենք ուզենք կըր-  
 նանք մաքրել, երբ չուզենք չենք մաքրեր:

Երբ խօսքը դարձաւ երկու կուսակցութեանց մասին ըսաւ.

—Ես գիտեմ մինակ կեդրոնացում բառի նշանակութիւ-  
 նը, ապակեդրոնացման մասին 4-5 ժամ խօսեցան, ես բան  
 մը չը հասկցայ, մեզի պէս կեդրոն մը չունին կ'ըսէք: Ես Մի-  
 ու թ ե ա ն հ ա կ ա ո ա կ է ի, ինչո՞ւ առանց իմ որոշու-  
 միս ժընէվ գնացիր. չէ՞ որ վարչութեան ատենապետն ես եմ,  
 այն նամակը որ վասն ատենապետի ստորագրուած է և պաշ-  
 տօնական կնքով կնքուած է, վաւերական չէ ևն. ևն.

Յոյսս կտրած այդ ղեկավար կոչուած անձերէն. սկսեալ գրել մասնաճիւղերուն և պարզել բոլոր ներքին խնդիրներն ու զեղծումները, որ տեղի կ'ունենան և դեռ ատոնց մի մտաբար զոհ կ'երթան շատ մը անկեղծ և ազնիւ ընկերներ մասնաճիւղերուն գրելս իմ սրբազան պարտականութիւնս համարեցի. ամէն հայու պարտքն է բանալ չզիտցող գործիչներու աչքը, որ այլևս չխաբուին Արժիարներու, Մկրտիչեաններու, Ռչտունիներու և այլոց: Մկրտիչեանի գրած և Ռչտունի ու Ասլանեանի ստորագրած լիտի նամակին համար ես ընկերական դատ պահանջեցի Սրվազլեանէ, առաջարկեցի քննել երկու կողմին ալ վարմունքը, ով որ մեղաւոր ըլլայ, անոր կամահուն վճիռ կամ իր ստորագրութեամբ «ես ստոր և աղտոմարդ եմ» բառերով հրատարակել տալ մամուլի մէջ: Իմ առաջարկս խիստ երեցաւ վախկոտներուն. գիտէին որ պիտի բացայայտուէր իրենց վատութիւնը: Ես ՉՉ տարուան յեղափոխական կեանքէս կասկած մը չունէի. իսկ իրենք...: Սրվազլեան առաջարկեց ընկերական շրջանի մը մէջ համբուրուիլ և հաշտուիլ. ես մերժեցի այդ անմաքուր և անխիղճ անձերու հետ հաշտուելու առաջարկը: Սրվազլեան և Մկրտիչեան ինձ մէջ բացատրութիւն պահանջեցին, թէ ես ինչ իրաւունքս ներքին խնդիրներու մասին գրած եմ մասնաճիւղերուն և կարգ մը բարձրաստիճան անձանց: Ասոնք կը կարծէին թէ ես պիտի ուրանամ, բայց ես պնդեցի ըսելով թէ՛ միշտ պիտի գրեմ ու պարզեմ խնդիրները, քանի որ Հնչակեան կուսակցութիւնն մաքրուած չէ իրենց պէս աղտոտներէն:

Մկրտիչեան կարմրելով միայն կը դիտէր, ան ալ լոկ բարկութենէն, ամօթ ու խիղճ ըսուած բաները չկան այդ ճիշդութիւններու մօտ, նա էր որ խիստ մօտէն գիտէր Եւրոպա մեկնելէս առաջ յղացած ծրագիրս, որ Միութիւն ըլլալէն վերջ պիտի իրականանար և գործին միջոցները պիտի հայթայթուէր, գիտէր, և ամէն ճիշդութեան միջոցներ ի գործ դրաւ որ խանգարէ Միութիւնը, և իմ ծրագրիս իրականացումը արգիլէց, որպէսզի ինք և իր նմանները չը կորցնեն իրենց «կեղծոյնի անդամ» անունը ու հասարակութեան մէջ բռնած դերը:

Այդ այն Մկրտիչեանն էր որ առանց ամաչելու գլուխն ու մօրուքը շարժելով ըսաւ ինձ. «Իբր գործիչ մը իբր Հնչակեան մը և իբր հայ ժողովրդի զաւակ մը իրաւունք չունիս տեսած աղտոտութիւններդ պարզել ընկերներուն ու ժողովրդին, կեղծոյնի միայն կը պատկանի իր աղտոտութիւնները մաքրելու կամ չը մաքրելու գործը. կեղծոնը երեք տարի պայմանաժամ ունի իր պաշտօնը վարելու. ուղածին պէս կը վարէ գործերը. ոչ որ իրաւունք չունի խառնուելու»: Կարծես վաճառականական պայմանագրութիւն մը ունէին այդ տխմարները ազգին հետ...: Կատարեալ առևտրական գործակալներ երեցան ինձ և ոչ իբր յեղափոխականներ, այդ երկու փառամուլ արարածներու խօսքերը խիստ զայրացուցին զիս, հետևապէս թքեցի իրենց վրայ ու ոտքի ելլելով ըսի.

—Նազարբէկն անմեղ էր, իրաւունք ունէր երբ ձեզի հետ համիտական գրութեամբ կը վարուէր. և այդ գրութիւնը ըստեղծողները ձեզի պէսներն եղած են. որովհետև Նազարբէկ որչափ որ բռնապետ մը ըլլար. եթէ իր շուրջը գտնուած գործիչներն անկեղծ ըլլային, բնաւ չպիտի կարողանար այդ ընթացքով վարուիլ, որով աղքէ այս թշուառութեան ենթարկուեցաւ և հաղարաւոր անմեղներ զուր տեղը կորսուեցան: Երդուեցայ միշտ և միշտ հալածել զիրենք, ու հեռացայ:

Սրվազլեանէն միշտ կը պահանջէի որ եթէ երբէք սխալած եմ Միութեան խնդրոյն մէջ, պատրաստ եմ խոստովանիլ յանձանքս ու թերթերու մէջ հրատարակել տալ և միևնոյն ժամանակ պատրաստ եմ պատիժս կրել որքան ալ ծանր լինի: Նպատակս այս էր որ հրապարակաւ իրենց գոյները պարզեմ ժողովրդին առջև: Ու երբ Սրվազլեան տեսաւ որ ինձմէ դերբաւ չազատուիր. մտածեց փաստաբանական ճարպիկութեամբ պահանջել ինձմէ որ երեքշաբթի օր գրաւոր կիրպով հաղորդեմ իրեն իմ պահանջս, մինչդեռ ինք երկուշաբթի օր նաւ նստելով կիրպրոս փախաւ, կարծելով թէ իր փախուստն անյայտ պիտի մնայ: Ես չի զարմացայ ատոր վրայ քանի որ այդ խմբակը «սըտով» կ'ապրէր: Այն Մկրտիչեանն՝ որ Յ-4 ամիս առաջ հրապարակաւ Միութիւնը կը քարոզէր, այժմ տարբեր լեզու

մը կը գործածէ, կը հարցնեն իրեն, թէ ինչո՞ւ ձանկիրւեալ գտուած է ձեզմէ. կը պատասխանէ Մկրտիչեան. — «Որովհետեւ Միութիւն կը քարոզէ և Միութիւն կ'ուզէ»:

Ահա «գլուխ գործոց», բայց երեսն իրն է ինչպէս ուր կը գործածէ. ամօթ և նախատինք իրեն, որ «հասարակական շահ» բառերը չնշած է իր բառարանէն:

Երկրորդ ծրագրիս գործադրման համար քանի մը հարիւր ֆրանքի պէտք զգացուեցաւ, Մկրտիչեան յայտեց թէ կեղքոնն ու նհնգ. վարչութիւնը ստակ չունին այդ ծախքերը հոգալու. արդեօք կարելի՞ էր որ իրենց արտօնէի իմ անունով հանգանակութիւն մը բանալ Աղքատաբարձի մէջ ինձ համար իբր ճանապարհածախս, և այդ հանդանակուած գումարը ծրագրիս գործադրման յատկացնել: Ես պատասխանեցի թէ քանի որ նպատակը սուրբ է և գործին համար է. մանաւանդ որ չէի կրնար հրապարակաւ յայտնել, իրաւունք կ'ուտամ ձեզ ըսի՝ իմ անունովս այդ հանգանակութիւնը ընելու Եւրոպայէն վերադարձին անունովս հանգանակուած դրամները նպատակին գործածուած չըլլալուն համար յետ պահանջեցի, միայն 5/2 անգղիական ոսկի տուին ինձ և խոստովանեցան որ այդ դրամէն 2 ոսկին իրենք ծախսած են: Ստակներս ինձ յանձնողի աղնուութեան վրայ վստահ էի, բայց միշտ կը կասկածէի Մկրտիչեանի վրայ թէ՛ մի գուցէ աւելորդամ հաւաքած ու ինձ այդչափը միայն վճարած լինի:

Ես միայն իմ աչքովս տեսածներս ու ականջներով լսածներս պատմեցի, այժմ խնդիրը կը թողում Հնչակեան անկեղծ ընկերներու և պատուաւոր անձանց, որ ատեն մը կազմեն և գատեն մեղաւորն ու արդարը. եթէ ես սխալ լելով յանձանք մը գործած եմ մահուան դատապարտութիւն գէթ հանրութեան շահերու համար կը մեռնիմ և ինձմէ ետք եկողները կ'օգտուին: Եթէ այդ աղտոտները մեղաւոր եղան (որուն համար երբէք չեմ կասկածիր), այն ժամանակ գէթ յեղափոխական սուրբ ասպարէզը կը մաքրուի այդ «տաք սը փարայի» բարոյականութիւն չունեցող անձերէն, և ուրիշներուն ալ օրինակ կը լինի. . . . :

ԳԱՆԻ ՄԸ ՏՈՂԵՐ ԱՆՑԵԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ

1890ի ցոյցէն առաջ Արփիար մեր Պուրայ վարչութեան ղեկնց իր ընկերներով, (Փաշալեան, Հրանտ Կիւրճեան ևն.) և խնդրեց միանալ մեզ հետ: Մ. . . ը զրկեցինք որ երկու անգամ երկար տեսակցութիւններ ունեցաւ. Արփիարեաններ իրենց քով ունէին 50 ոսկի, խոստովանեցան թէ իրենք յեղափոխականներ չեն. բայց այդ գումարը մեր վարչութեան յանձնելով կ'ուզէին վարչութեան ղեկը իրենց ձեռքն առնել (․․․). Կ'առաջարկէին մեզ որ իրենց առած հրահանգներով գործենք. այդ ծիծաղելի ընթացքին տեսնելով միաձայնութեամբ մերժեցինք: Պ. Շ. երբ Պոլիս եկաւ իրեն պարզեցինք խնդիրը, նա՛ փափաք յայտնեց և երկու անգամ տեսնուեցաւ. բնաւ համոզում չգոյ ոյցնելով օրինաւոր գտաւ մեր որոշումը ու իր բացասական պատասխանով վերջ տուաւ այդ խնդրոյն: Ի զուր միջնորդ բռնեցին Պ. Պ. Մ. ը: Վերջի միջնորդներն եղաւ Մամբրէ վարդապետը, վերջապէս որչափ որ աշխատեցան չկրցան մեզ համոզել. քանի որ մեր սկզբունքներուն հակառակ էր: Գոյցէն առաջ ինձ գիտեց Ա. Ասլանեան և փափաք յայտնեց իր 10-15 ընկերներով մեզ հետ կապուիլ, արդէն սկիզբէն ի վեր մենք կ'աշխատէինք բոլոր ցիբուցան ոյժերը ի մի ձուլել. ժամադրութիւն տուինք իրեն, որ Մ. ը պիտի խօսէր պէտք եղածը. խնդիրն երկարաձգելուս պատճառը իր մասին տեղեկութիւն ստանալնիս էր: Մեր ընկերն իր հայրենակից Մ. Մ. լաւ կը ճանաչէր զեզը, բայց այնչափ հաւատք չունէր իր վրայ: Մ. ի տեսակցութիւնը օգուտ մը չունեցաւ, որովհետեւ Ասլանեանի ձգտումն եղած էր, մեզ հետ միանալէն վերջ վարչութեան անդամ ըլլալ (․․․) Մ. ը մերժած էր, սակայն ցոյցէն վերջ ու և է միջոցաւ կուսակցութեան մէջ կը սպրդի վերջապէս: Ընկերներուս կը խոստանայ դրամ հանգանակելու գործը իր վրայ առնել, քիչ տեսնէն Բերայի քանի մը հայ վաճառականներէն ստակ շորթելու կասկած երևան կ'ենէ և ընկերներուս հաւատքը կը խախտի, բայց կարճ միջոցի մէջ ընկերներս կը ձերբակալուին ուսանք ալ կը փախչին, Ատոմ կը մնայ առանձին:

Ներում եղած երեկոյ Արփիար երբ կը տեսնէ որ ինչ  
 չազատիր, լալով կ'աղաչէ իր պահապան ոստիկանին որպէսզ  
 միջամտէ պէտք եղած տեղերը, թէ ինք անմեղ է: Ոստիկանի  
 միջոցաւ երկտողով մը թուղթ և գրիչ կ'ուզէ Նազըմէն: Նազը  
 ուրախութեամբ կը հրամայէ պէտք եղած թղթերը տալ: Ար  
 փիար երկար նամակ մը կը գրէ Նազըմին. կէս ժամէն վեր  
 պալատէն հեռագրով ներում կը շնորհուի Արփիարին, պատ  
 րիարքարան կը տանեն զինքը կառքով և գիշերուան ժամը Տի  
 ատենները իր տունը կը տարուի: Արփիար «Հայրենիք» ի խմ  
 բագրատան մի սենեկին մէջ գաղտնի կը տեսնուի Մամբրէ  
 վարդապետի հետ, որուն մատնիչ ըլլալն արդէն յայտնուած  
 էր. դիպուածով իր ցրուիչը կը տեսնէ այդ գաղտնագողի տե  
 սակցութիւնը. ցրուիչը դիտարկութիւն մը կ'ընէ ըսելով.

—Քանի որ Մամբրէն մատնիչ մըն է, պէտք չէ տես  
 նուիս անոր հետ:

—Ինչո՞ւ, մատնիչ ըլլալով ի՞նչ կ'ըլլայ. միթէ՞ պէտք չէ  
 անոր հետ տեսնուիլ, կ'ըսէ Արփիար, ու կասկածելով ցրուի  
 չին դիտողութեանը վրայ կը յաւելու.

—Քանի որ մատնիչ մըն է, չեմ ուզեր որ ուրիշներ տես  
 նեն կամ գիտնան խմբագրատան մ'ջ անոր հետ տեսնուիլ:

Լ. Մկրտիչեան և Ա. Ս. Քրիս ծանօթ ըլլալով, կ'առաջարկ  
 կէ որ զի՛ք ընդունին կուսակցութեան մէջ, պայմանաւ որ  
 Պոլսոյ վարչութեան անդամ ըլլայ: Այդ ժամանակները Մկրտ  
 տիչեան կը ձերբակալուի և քիչ օրեր բանտը մնալէն ու ա  
 դատուելէն վերջ կը հրաժարի վարչութենէն. 4-5 օր վերջ նորէն  
 ինքնին կուգայ և Արփիարը առանց ընկերներու հաւանու  
 թիւնը առնելու հետ կը բերէ զայն ու իբր վարչութեան ան  
 դամ ներս կը մտցնէ: Քանի մը օր անցնելէն վերջ՝ Արփիար  
 առա՛ց ընկերներու հաւանութիւնը առնելու Լ. Փաշալեանը  
 կը ներկայացնէ իբր վարչութեան անդամ: Նոյն Արփիարը  
 կերպով մը ներս կը մտցնէ նաև Հրանտ Օտեանը, որ վերջէն

250 ոսկիի չափ շքերթելով Փարիզ կը փախչի:

Մկրտիչեան, Արփիար, Փաշալեան և ուրիշ քանիներ մէկ  
 խումբ կը կազմեն Պոլսոյ մէջ, իսկ Օհանջան, Ռչտունի և

Նտոմ մի այլ խումբ: Մկրտիչեան Նազարբէկի գրած մի նա  
 մակին մէջ Օհանջանը Ռչտունին և Ատոմը անբարոյական,  
 կասկածելի և վտանգաւոր անձեր կը ներկայացնէ և կը պա  
 հանջէ անոնց գործէն հեռացնելը: Նազարբէկ այդ նամակի  
 պատճէնը Օհանջանի կը զրկէ, ինչիւրը կը պարզուի և այդ  
 երկու «բառթի»ները կը գժտուին: Երբ Պոլսէն Աթէնք կը  
 փախչին, քանի մը օր ատոնց հետ գաղտնի տեսնուելով Մկրտ  
 տիչեան՝ կը դառնայ մտերիմ բարեկամ Ռչտունիի և Ատոմի:  
 Իսկ Օհանջան մինչև օրս ալ կը պօռայ թէ ատոնք աղտոտ  
 մարդեր են:

Մկրտիչեան Աթէնք երթալու համար 50 օսմ. ոսկի կառ  
 նէ Պոլսոյ վարչութենէն. եթէ մինակ Աթէնք երթալուն հա  
 մար էր այդ առած ստակները, ինչո՞ւ աւելցած դրամը չէ  
 վերագարձուցած:

90 թուականին Արփիարի Թիֆլիս գտնուած միջոցին ...ի  
 մէջ ժողով մը կը լինի որուն ներկայ կը գտնուին Պ. Պ. Մ, Արամ  
 Նահապետեան և ուրիշ քանի մը անձնաւորութիւններ, նաև  
 Արփիարը: 91 թուականին Արամ Նահապետեան (1) Պոլիս կու  
 գայ, քանի մը օրէն վերջ կը ձերբակալուի. Նազըմ Նահա  
 պետեանին կը հարցնէ թէ Թիֆլիս \*ի մէջ բրած ժողովէն  
 ի՞նչ նպատակ ունի: Պ. Արամ կ'ապշի թէ արդեօք իրենց մէջ  
 ո՞վ եղած է մատնիչ: Նազըմ պ. Արամին մտածելու և ուրա  
 նալու միջոց չի տալով կ'ըսէ.

—Այս բոլորը մի բտ միտջէ իր հարցաքննութեան մէջ ը  
 սած է Արփիար. եթէ կ'ուրանաս հիմա ներկայութեանդ բերեմ:

Այն ժողովի մէջ գտնուողներէն միայն Արամ և Արփիարն  
 էին որ թուրքիա մտած էին: Պ. Արամ կ'աքտորուի... հինգ  
 տարի տառապելէն վերջ ներման կ'արժանանայ: Ինծի պէս  
 բանտի կեանքին փորձառու եղողներ զիւրաւ կրնան հասկնալ  
 թէ բանտապետին սիրելի եղող բանտարկեալ մը ինչ ընթացք  
 ունենալու է: Ռչտունին որ զէպքի պարագլուխն էր շաքսո  
 րուիլ. իսկ միւս ընկերները բոլորն ալ կ'աքտորուին, ինք կը

(1) Յիշեալ պարոնը ժամանակին թէ՛ նիւթապէս և թէ՛ բա  
 րոյապէս մեծ ծառայութիւններ ըրած է գործին:



մնայ միայն Պոլսոյ բանտը, որ բերդերու բանտին հետ բաղ-  
դատելով կատարեալ սրբայութիւն մ'է: Ռշտունին Պոլսոյ բան-  
տը եղած միջոցին շաբաթը քանի մը անգամ կը տեսնուի Նա-  
զըմի հետ, որը միշտ լուր կը զրկէ բանտի տնօրէնին ու  
Ռշտունիի հետ լաւ վարուին և պէտք եղած դիւրութիւնները  
ընծայեն բանտին մէջ ազատ թողելով զայն:

Պապ-Ալիի ցոյցը Արփիար 15 օր կամաւ կը յետաձգէ  
Հոնտոնի մէջ մեր ներկայութեան Արփիար իր բերնով խոտ-  
տով անեցաւ Օհանջանին ըսելով.

— Ի՞նչ տղայ էք և յիմար. ես Պապ-Ալիի ցոյցը 15օր յետա-  
ձգեցի ձեզ մատնելուս վրայ խաղցնելով, մինչև որ ես իմ գոր-  
ծերս տեսայ: Այդ 15 օր յետաձգելուս մէջ ես իմ շահերս ունեյի  
զանոնք ապահովցուցի և ապա ցոյցի հրամանը տուի:

Ասկէ աւելին ըսեմ: Աքիա եղած ատեննիս (բանտ) քան  
ազատամիտ թուրքեր՝ Պոլսէն իրենց բարեկամներէն (Պապ  
Նիկէն) նամակներ ստացած էին, որոնք երդումով հաստատե-  
ցին մեզի, թէ Նազըմ Պապ-Ալիի ցոյցին մէջ մատ ունէր և թէ  
ցոյցէն առաջ ինք գիտէր ու իր ուղածին պէս ընել տուաւ...  
Այդ թուրքերու խօսքերը մեզի հանելուկ երևցան և անհաւա-  
տալի. իսկ երբ Արփիար իր բերնով խոտտով անեցաւ, ամէն ինչ  
պարզուեցաւ. չէ՞ որ Արփիար միշտ կը տեսնուէր Նազըմի հետ:

Աթէնքի մէջ Ռշտունին, Ատոմը և ուրիշ քանի մը անձեք  
լրտես կը կարգուին Նազարբէկի կողմէ Ծմաւոնի վրայ, որ կա-  
րող չըլլայ տեսնուիլ ուրիշներուն հետ որ մտքերը պղտորէ...  
Խեղճ Ծմաւոն ճնշուած ու կաշկանդուած այդ լրտեսներու վոհ  
մակէն, կ'առնէ կիրը ու կը հեռանայ Նազարբէկի ու իր ըս-  
տոր լրտեսներու շրջանէն: Սուրէն Սուրէնեան այժմ վերա-  
կազմեալ կնդրոնի անգամ, 96ի պառակտումէն դեռ 2 տարի  
առաջ գիտէր Նազարբէկեաններու բոլոր զեղծումները. որով  
հետև բոլոր գանձապահական հաշիւներն իր ձեռքն էին: Ինչ  
չ՞ու այդքան ժամանակ լռեց ու չը տեղեկագրեց մասնաճիւ-  
ղերուն: Միայն այն ժամանակ գրեց երբ արդէն ամէն ինչ  
պարզուելու աստիճանին հասած էր. ըսել է ինքն ալ մեզ  
սակից էր ամէն աղտոտութեանց: Կեզրոնի անգամ չեղած նա-

մակով կը հայհոյէ իր ընկերներուն, իսկ երբ անգամ կ'ընտ-  
րեն կը լռէ...: 90էն առաջ զինքն անկեղծ և ազնիւ երիտա-  
սարգ մը կարծելով գէպի յեղափոխութիւն քանի մը քաջալե-  
րական խօսքերովս համոզուեցաւ, բայց ի՞նչ գիտէի թէ վեր-  
ջին այսպէս...:

Արփիարի ընտրութեան մէջ ուշադրութեան արժանի  
կէտ մը կայ. Պոլսոյ Հնչ. վարչութեան 800 ոսկին անոր աը-  
բամազրութեան տակ գրուած է... պատգամաւորներն անօթի  
չի մնալու համար Արփիարն ընտրած են և անոր խորհուրդ-  
ներուն լսած են...: Այս միջոցին Պոլսոյ մէջ ձեռք կ'անցնի  
Արփիարի իրեններուն գրած նամակները: Արփիար խորհուրդ  
կուտար անոնց տապալել Պոլսոյ Հնչ. վարչութիւնը և իր ար-  
բանակներէն կազմել իրեններուն անունները ծածկագրով  
գրած ըլլալուն համար չի հասկցուիլ թէ որո՞նք են. ահա՛ թէ  
Արփիար ի՞նչ գաղտնի նկատումներով կեզրոնի անգամ ըն-  
տրուած է: Յայտնի է որ Պոլսոյ մէջ 90-96 Հնչ. վարչութիւ-  
նը հանդանակած է մօտ 15,000 ոսկի, Նազարբէկին հասած է  
նր համարակալած է մօտ 2,500-3,000 ոսկի, իսկ մնացածը ուր է գնացած. ուղ-  
ակի Արփիարի և իր նմաններուն կոկորդը, բայց ժողովրդին  
արիւնքը ինքով ժողովուած ստակներն ուտագները վերջ ի  
վերջոյ անօթի պիտի սատկին...:

Ի՞՞՞ ԿԱՐՄԻՔՍ ԵՒ ՀԱՄԱՉՈՒՄՍ

Յարգելի ընթերցող, ինչո՞ւ Հնչակեան կարգ մը ընկեր-  
ներ այնքան կը պաշտպանեն Արփիարը. ինչո՞ւ անոնք շու-  
ղեցին և չեն ուզեր Արփիարի պէս աղտոտ անձ մը զոհել գէթ  
ահապին կուսակցութեան մը հետ միանալու համար: Կարծեմ  
ընթերցող դու ալ Հասկցար, որ այս Հնչակեան պարագլուխ-  
ները կամ խմբակի իրարու հետ կապուած են բազմաթիւ անց-  
եալ մեղքերով, ընդհ. զեղծումներով: Աթէ ասոնք մէկը  
որն ալ ըլլայ, պաշտօնապէս դուրս նետուի յեշեալ խմբակի  
կողմէն, անմիջապէս հրապարակ պիտի ելնեն իւրաքանչիւրի  
բեղքերը, զեղծումներն ու վատութիւնները. ահա՛ այս կա-  
պերով ամբապինդ կցուած են իրարու և միշտ կը պաշտպա-  
նեն զիրար առանց բաժնուելու: Միակ միջոցն է ասոնց ամէ-

նը մէկ անգամէն դուրս նետել Ազգ. Յեղ. մաքուր ասպարէզէն: Իմ մատնանիշ ըրած այս քանի մը աղտոտ հրէշներն են որոնք գիտակցօրէն և անձնական նկատումներով կը պաշտպանեն և կը ճգնին արդարացնել զիրար: Եւ մանաւանդ այդ վատերը բարեմտութեամբ պաշտպանողները անգիտակցօրէն անոնց դաւակից ու Ազգ. Սուրբ Գործին թշնամիներ կը լինին: Իսկ գիտնալով հետեւողները աւելի դատապարտելի կը լինին իբր որոշ գաւաճաններ և անոնց յար ու նման աղտոտներ: Ուովհետեւ այնպիսի աղտոտները բաջալերութիւն և աւելի ընդարձակ ասպարէզ կը գտնեն իրենց շահատակութիւններն ի դարձ դնելու ի վնաս ազգին: Նոյն իսկ այդ դուրս մնալու խնդիրն էր որ երկիւղ պատճառեց և ստիպեց այդ անմաքուր շրջանակը որ արդէլք հանդիսանան յղացած ծրարագրիս ինչու որ ծրագրիս ամենագլխաւոր կէտն էր գործին ղեկը յանձնել ազգին վստահութիւնը վայելող խելացի անձերու... և այս ծրագրիս իրականացման տենչն էր որ զիս ստիպեց ներկայ գրքոյիս հրատարակել:

Սիրելի ընկերներ և հայրենակիցներ, իմ կարծիքով կը մնայ մեզի բան մը ընելու. պէտք է ամէն ձիգ թափելք որ յեղափոխական գործի ղեկն անցնի բարոյագէտ, մտաւորագէտ և նիւթագէտ ազգին վստահութիւնը վայելող անձանց ձեռքը որ պէտքի կազմուի մեծամասնութեան վստահութիւնը վայելող կարող մարմին մը, որ մեր յեղափոխական գործը կարող ըլլայ իր մասնակի շարժումներէն, ցոյցերէն ու փոքրիկ ձեռնարկներէն ազատիլ և ընկնել ընդհանուր լայն տպտամբութեան շրջանը: Գոյաւթիւն ունեցող մեր յեղափոխական մարմինները պէտք է ջանան ընթանալ միայն մէկ շաւղով այն է զինուած ապստամբութիւն որ միակ փրկարար ճանապարհն է, ցոյցերու և մասնակի շարժումներու ժամանակն անցած է այլևս: Իսկ կուսակցութիւնները՝ իրենց ծաւալն ընդլայնելու միակ միջոցն է խելացի, բարոյական և հարուստ անձերը ինչպէս ըսինք գործի մէջ առնել և ատոնցմէ վստահելի մարմին մը կազմել որ ազգն իր բոլոր ոյժերը լարէ, ամէն անհատ իր կարողութեան չափով վստահաբար զու-

հարերութիւն ընէ, համոզուած ըլլալով որ մինչև այսօր նազարբէկի ժամանակէն ժողովուած ստակին պէս բաղդախնդիր անձերու կոկորդը չպիտի անցնի:

Քանի որ ժողովրդի գերագոյն շահերը կը պահանջեն Միութիւն, և քանի որ ամէնքս ալ համոզուած ենք թէ մեր նպատակին հասնելու միակ միջոցը Միութիւնն է, պէտք է աշխատինք ժամ առ ժամ ձեռք բերել, արդէն ունինք երկու զօրաւոր կուսակցութիւններ և Արմէնական կուսակցութիւն մը<sup>(1)</sup>, պէտք է անմիջապէս երեք կուսակցութիւններէն ընտրուին լիազօր պատգամաւորներ՝ խելացի, անաշաւ և ընդհանուրի վստահութիւնը վայելող անձերէ: Պէտք է երկարօրէն բանակցին մի նոր և նպատակայարմար ծրագիր պատրաստել, մէկ ուղղութեան, մէկ անուան և մէկ զբոլոջի տակ գործելու համար:

Ինչպէս այժմ Արփիար իր նմաններով ջանաց արդէլք հանդիսանալ Միութեան կենսական խնդրոյն. եթէ ուրիշներ ևս երևան դան պէտք է անոնք ալ անխնայ հարուածել, հըրապարակաւ խայտառակել և ասպարէզէն վաճառել բացարձակագէտ, եթէ անոնք ըլլան նոյն իսկ մեր եղբայրներն ու զաւակները ընաւ պէտք չէ խնայենք. որովհետեւ Գործը անձնականի չէ, հանրութեան է և ամբողջ հայ ժողովրդի ճա-

(1) Արմէնական կուսակցութիւնը ընաւ կապ մը չունի Փորթուգալեանի հետ, մենք կը յարգենք ամէն արժանիք և կը գրնահատենք ու է ճառայութիւն մը: Պէտք է խոստովանել որ անցեալ՝ մէջ Փորթուգալեան քիչ մը կատարած է իր դերը, բայց միևնոյն ժամանակ նոյն իսկ այդ Միւրա՛ն Փորթուգալեանն եղաւ զեղծմանց հիմնադիրը: «Հայոց Հայրենասիրաց Միութիւն» քօղին տակ տասնեակ հազարներով ֆրանքներ իւր կոկորդն անցնելով: Մենք որ սիկրէն տալիներով էր հետ կապուած էինք. երբ իր բաղդախնդիր, շահաւէր և աղտոտ մէկն ըլլալը տեսանք, իսկյն իրեցինք մեր յարաբերութիւնը ձեռք այն ժամանակ երբ Հնչակեան կուսակցութիւն մը ըստեղծելու որոշումը տուինք մեր ընկերներով, ուստի ինչպէս այժմ և ասկէց վերջ Փորթուգալեանի նման բաղդախնդիր մէկը անկարելի է որ Գործին և կուսակցութեան մը հետ կապ ունենայ:

կատազիրը անկից կախուած է: Եթէ մենք հայ ժողովրդի հաբագատ զաւակներ, անկեղծ յեղափոխականներ և անշահախնդիր գործիչներ ենք, և եթէ կ'ուզենք դոյզն ինչ ծառայութիւն մատուցանել մեր ազգին և հայրենեաց, որ մեզ պարտականութիւնն է, պէտք է այսպէս ընենք և ընելու ենք իսկ եթէ կարող չենք ընելու, գոնէ յեղափոխական ասպարէզէն քաշուելու ազնուութիւնը ունենանք. և հրաւէր կարգաւոր քան զմեզ արժանաւորներուն որպէսզի ասպարէզ գան: Եթէ մեր յեղափոխականներուն մէջէն վերնան աղտոտներն ու երեսասէրները, եթէ ազգին վտահակելի անձերը Գործին մէջ գան իրաւական իրենց ձեռքը և եթէ կուսակցութեանց մէջ եղած անկեղծ յեղափոխականները մէկ կողմ նետեն կուսակցական նեղ հաշիւները ու անուան սնտոի խնդիրները միանան մէկ հոգի, մէկ բանակ կազմեն, մենք համոզուած ենք որ խիստ կարճ միջոցի մէջ մեր թշուառ ու բազմատանջ հայրենիքը կը հասնի իր ջանկացած ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ու ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ,

### Հ Ր Ա Ւ Ե Ր

Յարգելի ընթերցող, ներէ որ զքեզ զբաղեցուցի խումբ մը աղտոտ անձերու պժգալի գործերով. . . Բայց թշնամին ճանաչելը անիկա կէս յաղթել ըսել է, պէտք է պարզել, անկեղծօրէն պէտք է գրել ու աշխատիլ, որ հրապարակը մաքրուի: «Իմ հօր տունը աղօթատեղի էր. իսկ դուք զայն դարձուցիք աւաղակներու այր» ըսաւ Քրիստոս հրեայ մանրա վաճառներուն և խարաղանով գուրս վռնտեց ամէնքն ալ: Ուստի անկեղծ ընկերներ և ընթերցողներ, մեր պարտքն է որ առնենք ճշմարտութեան խարաղանը և յանուն ազգային դերագոյն շահերու գուրս վռնտենք յեղափոխութեան այս մանրավաճառները, այդ մարդկային ճիւղները, հրէշներն ու լիբերը յեղափոխութեան մաքուր ու վեհ ասպարէզէն:


Վ Ե Ր Զ



ՍԱՂՄՈՍ ձժԵ. 1.

Ա. Ամիրխանեանց

Յ. Աւետարանեան



97-11